


Puapu



12

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Ս. ՓԱՆՈՍԵԱՆ	1	Աստ կը հանգչի հաւատքը
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	18	Arabianse
Յ. ՕՇԱԿԱՆ	21	Սահակ Պարզեւեան
Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ	32	Բանաստեղծութիւններ
Պ. ՍՆԱՊԵԱՆ	35	Միջնարար Բ.
Գ. ԱՐԱՋԵԱՆ	45	Վահագն Դաւթեան
Լ. ԱՐԱԿՈՆ	52	Էլզային աչքերը
»	»	54 Տաղ Էլզային (հայացուց՝ Մ. Իշխան)
Ս. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ	56	Տասներորդը՝ իմերորդին տրամաբանութեամբ
Ա. ԳԱՐԻԷԼԵԱՆ	61	Արդարմանի տեսլահար գրագետը
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	71	Մեծ հրագներ, արդար պահանջներ
Ի. ԽՈՒՐԻ	78	Բացման խօսք
ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ	80	Հայ գիրքը՝ ճանապարհի հայուն
Պ. Ս.	82	Հոգիի մարդը
* * *	84	«Բաղին»ի 1982 տարեշրջանի քովանդակութեան ցանկը

...

Բագրու

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

ԻԱ. ԵԱՐԻ. ԲԻԻ 12 ԴՆԿՑԵՄԱՆԻ 1982 ԳԸՈՐԹԻՔ

Ս. ՓԱՆՈՍԵԱՆ

ԱՍՏ ԿԸ ՀԱՆԳՉԻ ՀԱՒԱՏՔԸ

1. ՄԱՐԴԸ...

Պոչոք գրասեղանի մը ետին, Համակրելի, երիտասարդ գեժը մը, որ ի ծնէ ժպտուն ըլլալ կը թուի, Կ'ընդունի նորեկին բարեւը թեթեւ խոնարհելով սեւահեր գլուխը։ Ու անմիջապէս կը հակադրուին երկու տարիքները, որոնց միջեւ՝ հաւանաբար, քուն-քանքհինգ տարիներ իջկուած են ի վնաս տարեցին, որ նորեկն է։ Ան կ'աշխատի կանոնաւորել շնչառութիւնը, նուաճել էտք բազմաթիւ վերելքի աստիճաններ, որոնք այցելու մը կ'առաջնորդեն հոս։ Գրասենեակէն ներս նեղացուցիչ տաք շ'ընէր, բայց այցելուն ստիպւած է ճակատն ու զանկը արբել քրտինքէն եւ կակուղ ձայնով մը ըստաւարել։

— Կը շուսամ, թէ ուշ մնացած չեմ. հազիւ պաշտոնական գործերս վերջացուցի ու եկայ...

Համակրելի երիտասարդը, միշտ ժպտերես՝

— Ուշացած ըլլալը՝ ուշացած էք. տեսնուեցա՞ք պարոն Կրեաստին հետ։

— Կրեաստը չեմ ճանչնար. ձեր խոզովակով սկսուած գործ մը կը վերջանայ ձեզմով, կը խորհիմ...

— Ճիշդ է՝ ժպտեցաւ Համակրելի պարոնը գրասեղանին ետեւէն եւ ձեռքը տարաւ հետախօսի գործիքին. ստուգեց ձայնալարը, որ միօրինակ կը վրնկար. հաւաքեց թիւը. — Այժմ. դո՛ւք էք, պարոն Կրեաստ. նախ՝ բարեւ. ինչպէ՞ս են... գործերը... կը քալէ. հա, պարոն Կրեաստ. այն մարդը

9404.83p.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

A.R.A.R.@

եկած է. արդեօք ուշացած չէ՞... այո, քովս է. լաւ. կը դրկեմ քովերնիդ... տեսէք, ցը՛ :

Նորեկը, որ կը հասկնար հեռախօսին զրոյցին խմաստը, չկրցաւ զսպել իր հիասթափութիւնը. կը բացազանէ, ուրեմն.

— Զարմանալի է, որ դուք, սիրելի պարոն, զիս ներկայացուցիք իբրեւ հասարակ անուն մարդ. մինչդեռ ես կը կրեմ իմ անունս իսկ դուք, զանց ընելով զայն, ինչպէ՞ս հասկցուիլ պարոն Կրեոստէն, Վաստահ եմ, թէ ան ալ պէտք չզգաց զիսնայու մարդուն անունը...

Համակրելի պարոնը ժպտեցաւ ու կատակեց.

— Պարոն Կրեոստին վեցերորդ զգայարանը շատ զգայուն է. ռաստրի օգէս կը բանի :

— Մէկ խօսքով, ըսէք, որ իրեն համար անունը կարեւոր չէ. ես կամ մէկ ուրիշը, նոյն բաներն են. իսկ ձեզի, կը խորհիմ, ներելի չէ՞ր՝ անունիս վրայէն լռութեամբ անցնիլ. ես այնպէս տպաւորուեցայ, որ դուք այդ պարոն Կրեոստին պարզապէս ուղեցիք ըսել, թէ ապրանքը հասած է. զրկեմ, տնտղեցէք եւ եթէ կը հաւնիք՝ վար դրէք. այլապէս կրնաք ետ ճամբել...

Համակրելի պարոնը, որ եղած էր թիւրիմացութեան սկզբնաղբիւրը, յղօրէն վրայ տուաւ.

— Վաճառական մը հաշուակալական իր քնադդներուն մարդն է եւ իրեն համար դրական հրապարակին ծանօթ անուն մը մեծ բան չ'ըսեր. եւ յետոյ, այդպիսի մարդ մը անպայման խօսքին աէր կանգնելու ոչ մէկ ապահովութիւն կրնայ տալ...

— Հասկնալի է. պարոն Կրեոստ նկատի ունի իր շահը միայն. որեւէ յանցանք գործած չ'ըլլար, եթէ մերժէ, օրինակի համար, զիս գործէս հանել տալէ ետք, աշխատանք մը տալ ինծի։ Ո՛ւր մնաց, ուրեմն, ձեր հաւատարմացումը, թէ պաշտօն մը դատած էիք ինծի համար այսինչին քով... մի՞թէ կը սխալիմ ենթադրութեանս մէջ։

— Ժիզդ այդպէս ալ է. պարոն Կրեոստ պատուոյ խօսք չտուաւ. ժողովին մէջ, երբ կ'արժարժուէր ձեր հարցը, ան ըսաւ պարզապէս. — Ես քովս կ'առնեմ. հաշուակալի պէտք ունիմ :

Նորեկը ափով զարկաւ ճակտին. մէկ ակնթարթով լմբունեց, որ թիւրիմացութեան մը համար զոհած էր նախկին պատուաւոր պաշտօնը, այս դեռ նելով մեծ կազմակերպութեան մը տնտրեացական տրամադրութեան վրայ։ Հիասթափութիւնը արժանազրեց իր մէջ առաջին պարտութիւնը. անունին կապուած երաշխիքն ու երաշխաւորութեան անտեսումը զգալի էին, հեզեց.

— Սրտեօք չէ՞ք կրնար, օրինակի համար, յայտնել պարոն Կրեոստին, թէ եկած եպրանքը լաւօրակ պիտակով ծանօթ մարդ մըն է, անգլիական կերպարն ունի հաստատուն. այսպէս ի՞նչ կար ձեզի, այդպէս արտայայտուելուն մէջ։ Պարոն Կրեոստ թերեւս նախապաշարուէր եւ...

— Սիրելիս, հարցը հոն է, ահա. ինչպէ՞ս հիւսել զովքը ապրանքի մը, երբ դուն այդ ապրանքի որակին համար պաշտօնաւոր չունիս...

Նորեկը չկրցաւ զսպել իր զարմանքը.

— Անշուշտ, անշուշտ. ես առաջին անգամ լուսնէն կ'իջնեմ եւ իմ ովքըլլալ ձեզի քնաւ ծանօթ չէ. արժանապատուութեան հարց կը ծագի. ինչո՞վ կրնայիք փաստել, որ մեծ կազմակերպութեան մէջ քսանըհինգ տարուան աշխատանք ունիմ. իսկ ձեզի պէս Երիտասարդներ, որ նոր դրաւած էք աթոռ մը, այդ կազմակերպութեան մէջ, վճարովի, ուրանաք պարզապէս հիներու կրած անշտափելի գոհողութիւնները նոյն այդ կազմակերպութեան բարօրութեան սատարելու ճամբուն վրայ։ Եւ տեսէք, կը ներկայացնէք զիս, իբրեւ

սոսկական մարդ, որ վիրաւորական ելք ու հետեւանք կրնայ ունենալ: Աւ ի՞նչ կը նշանակէ արժողական առումով մարդ արտայայտութիւնը. մէկը, որ գոգ չէ, չնացող՝ երբեք. նիւթապաշտ, եսասէր, չարանենդ, վատ ու վատհոգի մէկը չէ. այսինքն՝ խակակոնին մէջ՝ մարդ է, մօրմէ ծնած հալալ կաթնակեր մը. բայց, ձեռ հեռաձայնային խօսակցութեան մէջ, դուք անոր սուրբ արհամարհոտ չեղտութիւն մը. եւ ձեր իրարու հետ ծանօթ ըլլալը նեանցիք ետեւի փառքի վրայ, ցոյց տալով անքաղաքավար վերաբերմունք մը ինծի հանդէպ...

Համակրելի պարոնը կը պահէր իր քմծիծաղը.

— Պարոն Կրեքոսին համար ոչ մէկ նշանակութիւն ունի ձեր ո՞վ եւ ի՞նչ ըլլալը, լսի, չէ՞. ուն կը հետեւի իր բնազդին, եւ շահագիտական է իր, մօտեցումը: Զեր անունը յիշեցնելը իրեն, կրնար ստորնացում նկատուիլ հեռազային. լաւ է, որ ներկայանաք իրեն իրրեւ անունուն մէկը. ասիկա կ'ըսեմ ձեր հանրածանօթ ըլլալը նկատի ունենալով...

— Ուրեմն, ձախողանքը քաջայայտ է. ինչո՞ւ փորձուի քովը երթալ, մա՛նաւանդ՝ որ զինք չեմ ճանաչար:

— Յոռետեսութիւնը լաւ միջոց չէ՝ յաջողութեան ճամբուն ծայրը գլուխը համար. փորձեցէք... եւ յետոյ, կը ճանչնաք մարդերը...

— Իրենց կաշիին տակ, ըսել կ'ուզէք. աղպէս հասկցնե՞լ է միտքերնիդ, — Երեկը քմծիծաղի պէս ժպիտ մը ցոյց ուղեց տալ, բայց ձախող դուրս եկաւ. ու լրջացնելով արտայայտութիւնը դէմքին, կատչեցաւ. մարդ անուշին: — Կը զժուարանամ պատկերացնել սա պարոն Կրեքոսը, որ կրնայ մարմնացնել մարդկային շատ մը նկարագիրներ մէկտեղուած: Ըսենք, թէ մարդ հոսկայցողութիւնը, առհասարակ Ֆիզիքական գոյակցութիւն մըն է եւ բարոյականը՝ անոր զգեստը. երբ զգեստը հին է կամ մաշած եւ անունէ պուրկ է, մարդը կը դառնայ կատարեալ լաբիւրինթոս մը հոգեփնտրանքու. եւ դեմաստուերներու: Օրինակ, կան մարդեր, որոնց քով կը գտնենք յատկանշական իրենց մօրթին գոյնը. — սպիտակ, սեւ կամ դեղնամաշկ: Ոմանց քով կը տարուինք խորհելու անոնց Ֆիզիքական ձեւաւորման՝ ծուռ-քիթ, շեղ-աչք, թզուկ կամ հակադասաչափ, փղամարմին կամ ուղտաձիւ, բարոյապէս դատած՝ կը գտնենք մարդը իրրեւ գոռոզ-թամիտ, ծոյլ եւ իմաստակ, ծաւալաչք-գձուձ, ստախոս-աւաղակ, դրամայութ: Իսկ փոխաբերաբար վերջնեւ, իսկ ալ մարդուն կու տանք աղուէս, Նապաստակ, ուխար կամ դամբիւրոն, լայնամարտ, խոզ-խոզարտ, կով-կովարած կամ պարզօրէն զինք կը կոչենք՝ իժ, որիկայ, անասուն: Աւ հարց է, թէ պարոն Կրեքոս մը ո՞ւր կարելի է գտնուիլ կամ, երբ զիս իրեն ներկայացուցիք մարդ սոսկական, անխմաստ կոչումով, այդ բոլորին մէջ ո՞ւր սղեցիք գետեղել զիս... Մարդը եկեք է, կ'ուզէ՞ք, որ ճամբեմ քովերնիդ... Ահա՛ իմ հանած եղբակացութիւնս:

— Շատ էք զգացական, պարոն. ես մարդը ըսելով՝ անոր բարոյական կողմը նկատի ունէի, — լրջացաւ համակրելի երիտասարդը, սրղողած երեւոյթ աւելով դէմքին:

— Բարոյական կո՞ղմը որն է. դուք զիս նուստացնելուն մէջ շահ մը չունէիք, բայց աղպէս դուրս եկաւ ի վերջոյ, պարոն Կրեքոսի միտքին մէջ:

— Պարոն Կրեքոս իմ բարեկամս է. իր մասին զէչ չեմ կրնար տրտաւայտուիլ. իմ եւ ձեր միջեւ կազմակերպութեան գիծով շատ քիչ ծանօթութիւն կայ եւ այդ ալ առաձգական է եւ թոյլ. իսկ, պարոն Կրեքոսի հետ յաճախ հանդիպումներ կ'ունենանք նոյն այդ կազմակերպութեան գիծով. երբ խօսակցութիւն ունենանք հետը, կը պարզուի ամէն բան:

— Լսածիս համաձայն, դուք զիս նետած էք զձեռն-աչաւ մէկու մը ճանկը. ի՞նչ օգուտ կարելի է քաղել ձեր խօսակցութենէն. այժմէն տեսա-

նեղի չէ՞ միթէ՞ Յոռեան չեմ, բայց, լաւատես ըլլալու նուազագոյն փառան ալ կը խուսափի ինձմէ: Գառաւուն տարի գործն մարդոց նկարագիրները ճշգրտելու մէջ կը կայանար. դժբախտաբար, այսօր ես է, որ քննութիւն պիտի տամ...

Համակրելի պարոնը փորձեց խրատի ձեւ առլ.

— Հասկցուցէ՛ք իրեն մեր գիտելիքները. խօսակցութեան մէջ դրէ՛ք միշտ լաւատես չեղա՛մը. եղէ՛ք զուտա՛յ. կը տեսնեմ, որ ճշմարտութիւնները կեղծիքով անուշապատելու փորձը չունիք. յաջողութիւն կը մաղթեմ, պարոն Կրեոտս մեզի կը սպասէ...

Տեսակցութիւնը վերջ գտած էր: Նորեկը սաքի ելաւ:

2. ՓՈՎՈՑԻՆ ՄԷՋ...

Ու իջաւ մայթին. կ'երթար գտնել պարոն Կրեոտսը:

Անանամուտ լուռ օր մըն էր. չէկ արեւը, հասակով մէկ՝ փռուած էր փողոցին մէջ եւ ոտքերը երկարած պատէ պատ. շուքերը, հիւանդկախ լուսնեւրու նման, կծկտեղէն պատերուն տակ խորլանկիւններուն՝ թաթին մէկը թռալով մայթին: Կէսօրը դեռ չէր չրջուած: Անանուն մարդը կ'անապարէր...

Եւ ահա կէսօրուան մօտ ալդ պահուն, չէք գիտեր ո՞ր տեղէն իրեն հա՛սար մտնէր: Ինչպէ՞ս որ անգամ մը, որ անգամ մը կը հեւար լընչ-հատ.

— «Տուէ՛ր-ա՛ռ, տուէ՛ր-ա՛ռ, տուէ՛ր-ա՛ռ»...

Մենք պարտաւոր ենք այսուհետեւ անանուն մարդուն տալ կեղծ անուն մը, որ գոնէ որոշ դիմագիծով ներկայանայ մեր պատմութեան մէջ: Ինչքը վաթսուներորդ տարիքի ասնդիսամատին նոր կոխած մարդ էր եւ պէտք էր լրջօրէն գրադիլ իրմով: Ուրեմն, քանի որ ան կը խոկար այժմ ապամեքենայի կրծքահէքը օժնկեղբորով, պատշաճ էր զինքը կոչել Մամտունի: Գարոն Մըմ-մըտունին անգամ չէր տեսնուած, որ տուէր-առ մըն ալ տեղի պիտի ունենար իր եւ պարոն Կրեոտսին միջեւ, երբ դէմ դիմաց ելլէր անոր հետ:

Տուէ՛ր-առ, այսինքն՝ ա՛ռ եւ տուր. խօսքի առ եւ տուր մը, որ, իր կարծիքով, այնքան ալ փայլուն պիտի չըլլար. յամենայնդէպս, տուածդ մը եւ չափող մը պիտի գտնուէին: Փրպանէն հանեց վաթսուներորդ մարդու վաթիւ համբիւրը եւ անոր հատիկներուն վրայ փնտռեց զոյգը, անզոյգ թիւը նկատելով ձախողութեան նշան: Համբիւր մէկ զոյգ էր եւ մէկ ալ անզոյգ: Յիմարութիւն. սնտոխապաշտութիւն: Նետեց համբիւրը գրպանը, եւ շարունակեց քայլել: Առհասարակ մարդկային փոխյարաբերութիւնները համբիւրով ճշգրիտ ծիծաղելի է, մասնաւորապէս զարգացած մարդու մը համար. ինք ստացած է երկրորդական ուսումը եւ կը շեպտի զարգացած մարդ. քաղեց. չրջանցեց մէկ քանի փողոցներու կեմքանները եւ ահա ցցածողերու վրայ երեւցան կարծր-կանաչ լոյսեր, որոնք բիբախաղի թարթումով՝ ընթացք կու տային այս ու այն ուղղութեամբ սուրացող կամ սուբալու պատրաստ մեքենաներուն: Խուռն ի խուռն, իրարու պոչին հասնող այս կառքերու գրոհին մէջէն ինչպէ՞ս գտնուէր անցք մը՝ միւս մայթը ելլելու համար: Յցածողին՝ կարծիք լոյսը կը յա՛մառէր տեղի տալ. իսկ Մամտունիին թեւի ժամացոյցին երկվայրկեաններ ցոյց տուող սլաքը կ'ստոգատէր միշտ. ո՞ւր էր մնար. որո՞ւ հոգը, այս բազմամբոխ կառքային կարաւանը միտք չունէր անցք մը թողելու ազատ: Ահա

կը համբէր կարմիրը. դեղնորակ բիր մը, որ հազիւ թարթէր պիտի, քիչ վար հակած բերին մէջ նետեց կանաչ լոյսը. դէ՛, Մամտունի, ուժ տուր վաթսուեանոց ոտքերուդ. սուրա՛, եթէ չես ուզեր խուճապի մատնուիլ, երբ հրէշ-ինքնաշարժ մը չգրոհէ չեչտակի վրայդ: Ձէ՛. խոստովանելու է, որ առայդ արունք-ներ ունիս դեռ. ձերանալու միտք չունիս, կը տեղնուի. եւ ասիկա մեծ երաշխիք մըն է, որ դիւրաւ-գէրաւ կառքի տակ չես մնար: Բայց ինչո՞ւ ոստիկանի առ տուլոցը. ի՞նչ կապ կայ տգառ անցքիդ եւ այդ սուլոցին միջեւ. սա-կայն, մարդկային անիմատ հետաքրքրութիւնը կը մղէ Մամտունիին հոսեւ նայիլ եւ ահա ոստիկանին աչքերը միտած են իր դէմքին.

— Անձնաթուղթդ, եթէ կարելի է:

Մամտունի կը տարակուսէր, զարմացած՝ հարցուց.

— Ինչո՞ւ:

— Մայթին վրայ չես:

— Բայց նոր հասած եմ մայթին. քայլս վերցնէի՝ դրած կ'ըլլայի արդէն մայթին:

— Հարցը հոն է, որ ոտքիդ մէկը ուշ վեր վերցուցած էիր եւ մայթին վրայ չես...

Մամտունի յանձնեց ինքնաթուղթը. եւ ոստիկանը քմիծաղ մը քալեցուց այտին վրայէն: Սուրիացի որս մըն էր տուգանքուող պարոնը: Գրեց երկար-բարակ, էջ մը լեցուց.

— Բան մը պիտի վճարե՞մ...

— Մէկ թուղթ է՝ քեզի նուէր կ'ընեմ, ու ոստիկանը յանձնեց կանաչ տուգանադիրը Մամտունիին, անգամ մը եւս ժպիտ խաղցնելով այտին:

— Շնորհակալութիւն:

— Անգամ մըն ալ ոտքդ վերցուցածիդ պէս՝ մայթին կը դնես. օտարական ըլլալուդ՝ ներդառն ես. դնա՛...

Հինգ վարկեան կորսնցնելուն ակոսասց, բայց տուգանքէն փրկուած ըլլալու գոհունակութիւնը սպունդ քսեց կարծէք ակոսանքին հետքերուն վրայ. ու առջեւը քացաւ վերլուշին դարպասը...: Երանելի օրեր էին. ինք՝ Մամտունի, ծխախոտի ընկերութեան մէջ բարձր պաշտօն ունէր. ամբողջ շքերանի մը գլխաւոր քննիչն էր. կը շրջապէր կենտրոն արեւի եւ լեռնային առողջ կլիմայի մէջ. ձիուն կոնակէին, երբ այցելութիւններ կու տար լեռնալանջերուն եւ ձորերուն խորը կորած գիւղական պաշտօնեաներուն, աշխարհ մը յարգանք կը փռուէր իր շուրջ. եթէ տուգանել կար, ինքն էր հրամայողը ու ներողը՝ դարձեալ ինք...: Առատ քրտինք թափած էր ու անցած անկոխ կյանքներէն եւ այծահոգ արահետներէ, հանգչելով ակի մը տուջեւ կամ մե-նակիաց ծառի մը շուքին, ծծելով վարար օդը անարատ բնութեան: Հոչակուած էր շրջանին մէջ արդարամտութեամբ, անկողմնակալութեամբ եւ անշահախնդրութեամբ: Ձէր սիրած աղա-կեղեցիներ, աւաղակ-պաշտօնեաներ եւ առհասարակ կեղծաւոր բոլոր տեսակի մարդիկ...: Երանելի՛ օրեր, որոնք թառն ու զացին անվերադարձ՝ իր պաշտօնին եւ տարիքին հետ, եւ այժմ, կը յիշեցնեն իրեն ծանր տապալակներով լի կեանք մը, որ բացուած է ահա իր առջեւ, քանդի անապարհով կը վազէ հասնիլ պարոն Կրետսի մը տեսու-թեան... եւ սա հաջան, բայց ոչ-խառն ինքնաշարժները, որ կը խիզախեն ամէն ուղղութեամբ, կ'արդիւնեն ու կ'արգելակեն իր ճամբան...:

Հասած էր մատնանշուած վայրը: Մինչեւ այդ կէտը, Մամտունիին հոգն էր շուտ հասնիլը, հիմա՛, որ կը գտնուէր մօտիկը վաճառատան, միա-քը սկսաւ տաշել բթացած հարցում մը.

— Ինչպիսի՞ մարդ է այս պարոն Կրետսը. արդեօք մարդու կը նմանի՞, թէ իր ճանչցած աղա-փաշաներէն է...

Իր առջև կը բացուէր Ալէքսի ցնփոր ու կարճիկ պողոտան։ Նայեցաւ կապոյտ ցուցանակին։ Ռիւ Ալէքսի։ Այս վայրը իրեն ծանօթ էր. քառասուն տարի առաջ հիմը դրուած էր պողոտային զոյգ մայթերուն վրայ բարձրացող մեծղի շէնքերուն։ Եւ այդ օրերէն առիւն Զօրավար Ալէքսի անունով հոս դաճուած է, ինչպէս ան դաճուած է ամէն հայու սիրտին վրայ, ամէն անգամ, որ կը տօնուի Արարայի հերոսամարտին տարեդարձը։ Հայ կամաւորներ, աննուանի թշնամի դիրք-բլուր եւ հռոտա՛հ... հռոտա՛հ, գրոհ, յաղթութիւն եւ քսանակ մը հերոսներ բոլորը կուրծքէն զարնուած։ Համայնական փոսին առջեւ եւրոպացի երդում-յոյսեր, խոստումներ եւ յիսուն տարիներու կուտակուած հիասթափութիւն եւ դաճութիւններ։ Զօրավար Ալէքսի մէկն էր անամէջ խոստում տուողներէն, մինչդեռ իր վարչապետը հայու կռակին վրայ մեռք կը սեղմէր հայու եօթդարեան ռոտին։ Մոռցուեցան բոլոր խոստումները... Իսկ Պէյրուսի այս հասակէկ ու թզուկ պողոտայի անկիւնին կը մնայ յաւիտեան կանգուն Ալէքսի...

— Շատ մի խորանար պատմութեան բաւդներէն ներս, որ լարիւրին-թոտային խնդրածութիւն ունի. մի քրքրեք դաւաճան խոստումներն ու անիրազարծելի երդումները... Գանդի մութ է ապագան. նայէ՛, որ ներկադ չմտնի քաղաքի խոստումներով զրթումի մը...

Այս զգաստացումը հանել տուաւ զինք Ալէքսի փողոցին շէնքերուն շափ հին ծանօթ-ընկերով մը առջև։ Անկեա անակնկալօրէն բռնեց ու սեղմեց Մամուռիին թեւը.

— Ձանչցա՛ր, Մամուռի...

— Հի՛ն ես այս փողոցին շափ եւ մայթերուն բարձրացած շէնքերուն պէս. ինչպէս չճանչնամ քեզ, որքանոցային վրանի բնակիչ. միատեղ գետէն ջուր կրած ենք եւ մեր ներբանները խաշած։ Միջազեռքի աւազներուն մէջ. բայց, ժամանակները խորթացուցեր են մեզ, — երկմիտ պատասխանեց Մամուռի, զարմանալով իր յիշողութեան բթացումին վրայ, երբ չէր կրնար յիշել անոր անունը։

— Ըի՛չդ ես. գրողի պէս կը զգաս. եւ քառասուն տարուան ժամանակամիջոցին մէջ սերունդ մը կը ծնի ու կը մեռնի երբեմն. իսկ մենք, ա՛հ երանք, որովհետեւ մենք պատկանեցանք աւազներու վրայ մեր ինքնութիւնը ճանչցող որբերու սերունդին։ Այդպէս չէ՞, ընկեր պատուական։

— Ի՛նչ, այո՛. մենք ենք այդ սերունդը, որ տակաւին կրնայ գոչել՝ կենդանի՛ եմ...

— Մամուռի, կարգացի նոր լոյս տեսած դիրքդ. կենդանիներդ հրաշալի էին...

Մամուռի տխուր քծծիծաղ ունեցաւ.

— Իսկ մարդե՞րը։

— Նոր մարդիկ գեռ չեւ ճանչցած. քուկիներդ ցարդ կը պատկանին հին մտայնութեանց. նորերէն օձիք թօթուելու է. բայց խորհուրդ կու տամ վազել անոնց օձիքէն. դրիչդ լաւ ձողկող մըն է. ձողկէ նոր տիպի մարդիկ, որոնք պարզուած են մարդկութենէ, զարձած մէկ-մէկ հրէշ-գազան...

— Կը յուսահատեցնես զիս, բարեկամ. ես եկեմ եմ՝ նոր մարդ մը կը փնտռեմ գործի համար։

— Ձրե՞ս. ես ալ բոլորովին մոռցած էի, որ դո՛ւն ձգեր ես քաղաքդ ու աշխատանքդ, ու եկեր ես հոս՝ մշակոյթով միւտոնուելու։

Մամուռի ժամայնաբար եղողի դժգոհ դէմք առաւ.

— Մեր ժամանակները օպտագործներ, որպէսզի գոց դուռներու առջեւ չգտնուինք. բարեկամ, ես դեռ առիթ կ'ունենամ նոր մարդեր ճանչնալու. հիմա ինձի ըսէ՛, թէ ո՞ր կը գտնուի քաղաքիդ ծանօթ կրեստներէն Կրեստ

Գորգեան խանութ—մանաստեղին. հետը գործ ունիմ...

Ալէմպի փողոցին չափ հին, որքանոցային ընկեր ձակատեանը ձեռա-
ցուց, թէ խուլ էր եւ շուք գրող-ընկերոջ հարցումը: Ախր տարած էր մէկ
սկանչին եւ քէմքը հաղար կնճիւ կաղած. ապա, իբրեւ թէ անդրադարձաւ
ու ըմբռնեց.

— Ո՛վ ըսիր, Գորգեան. ծօ՛, այդ մարդուն հետ ի՞նչ բան ունիս. ան
լաւ հասցեահաւաք մըն է. Ընքի Սամ մը դուցէ իրեն խոստացած է մեծադու-
մար տոլարներ, փոխան ձեռագիր հասցեատետրերու...

— Զիտ չի հետաքրքրեր իր հասցեահաւաքածոն. խօսք տուած է գործ
տալ ինձի, Կաղմակերպչական խողովակով կանչուած եմ իր քով, — ըսաւ
Մամտունի, բայց արդէն վատահոլ թեան ջերմաշափը անկում կրած էր մէջը:

— Ես ձակատեանն եմ եւ քու փնտածող՝ Գորգեան. հետեւութիւնը
կրնաս հանել երկու ճշմարտութիւններուն. դրող մարդ ես, քիչ մըն ալ հո-
գեբան: — Հին ծանօթը աչքերը կկոցեց եւ լիտակ նայեցաւ Մամտունիին
դէմքին:

Մամտունին ֆիզիքսայէս աւելի մշտած կը թուէր. տարիքէն առածի ե-
րկույթ ունէր, մինչ ընկերը պահպանած էր առողջութիւն ըսուած թանկա-
դին բռնէն: Ունէր լեցուն այտեր. դիտամազը սպիտակ-գրուզ, մեծաշ, թը-
խաղէմ, միջահասակ էր. իր բառերը կը մեկնէին համոզուածութենէ մը, որ
կասկածներ չէր կրնար յարուցանել:

— Զիտ գլխիվայր կը խաչեա քու յոռետես բառերովդ:

— Բարեկամ, քեզի սխալ հասցէի դրկողները խնդացած են քեթիդ:
Ձտեանես այդ Գորգեանը՝ քիչ մը հոգ աւելի պակաս կ'ունենաս, — եւ ձա-
կառեան մտաւ Մամտունիին թիւը, զինք դէպի հակառակ ուղղութեամբ ա-
ռաջորդելու համար:

— Թող տուր թեւ. ես տնպարման պիտի տեսնուիմ այդ մարդուն
հետ. ամբողջ ապագայ մը կախուած է իրմէ...

— Վրաս գրէ. իր խանութը քիչ վարն է. հանրածանօթ չկամ եւ սըմ-
սեղուկ մարդ է, անունին պէս թնճուկ մը, որ հակառակ միւլթիմիլիոնէր մը
ճանչցուելուն՝ բերանը կը հոտի անօթութենէ. դնա՛. կը տեսնես ու կը հա-
մոզուիս, որ ան զեքօ ա՛լ կօշ մարդ է...

— Քիչ մը չե՞ս չափազանցեր. ես հոգիով յոռետես մէկը չեմ եղած.
բայց, խոստովանիմ, որ դուն կը խաչեա զիս, — եւ Մամտունի յիշեց հոմա-
կրելի պարոնին դրասենեակին մէջ կրած առաջին հիասթափութիւնը եւ խոր-
հըրդածութիւնները մարդոց տեսակներու մասին:

Հին ընկերը բաց թողուց թեւը ու քիչ մը արդողած՝ ըսաւ.

— Գնա՛, տե՛ս մարդդ. եթէ յաջողութիւն գտնես, հայհոյէ եօթը պոր-
տիս եւ զիս տեսած ստենդ՝ թքիր երեսիս...

Բաղային քաղաքում հեռացաւ ընկերը. Մամտունի այժմ բոլորովին
առանձին ու որք զգաց ինքզինք: Քիչ ետք, սակայն, ուղից վանել յոռետե-
սութիւնը եւ, յաւատեսութեան թեթեւութիւնը զրկած՝ իջաւ մայթին ի վար:
Հոգին մնաց խռովկան: Մայթին քալող սո՛նն անձի մէջ կարծեց տեսնել խո-
շոր զիւրօ ա կօշ մը...

Մամտունի յանկարծ սկսաւ ժպտիլ ինքնիրեն. այդ ժպտը ցաւի եւ
կանխազգացումի տուարտանք մըն էր, որ տեղ դառաւ ներսդին: Կը կանխադ-
ղար ձախողութիւնը. դեռ հաւը երեք անգամ չիօտած՝ ինք կը կրէր երեք
տրամաբանական մեղանշումներ եւ ուրացումներ: Համակրելի պարոնը հեռա-
խօսին մէջ ըսաւ՝ մարդը եկած է. ոստիկան-գինուորը ըսաւ՝ օտար չզրիր
մայթին եւ տուգանուած ես. եւ ահա հին ընկեր մը կ'ըսէ՛ր՝ զեքօ ա կօշ մըն
էր Գորգեան Կիրակոս Կրեստը...

3. ԵԱՆՆԵՐԸ...

Կը քայլէր մայթն ի վար եւ կը նայէր բարձրաբերձ շէնքերուն, որոնք ծնունդն էին քառասուն տարուան հին ժամանակներուն. հին՝ քիչ առաջ հանդիպած իր որբանոցային ընկերոջը նման: Երբ աւարտեց երկրորդականը եւ եկաւ հոս գործ գնտնելու, քաղաքին այս պողոտան նոր կը շնչաւորուէր: Դպրոցաւարտ ընկերուհիի մը հետ նստէն իջան մաքսատուն, ուր զիրենք ըստ պատգուցին երեք երկար ժամեր: Ինքնաշարժ մը տարաւ զիրենք ազգային առաջնորդարան: Քաղաքը պարտէզներու մէջ ցրիւ եկած տնախմբերու հաւաքածոյ մըն էր ու հայկական քէմփերը խառցուած ամբողջութիւն, թիթեղեայն տակնուկրայութիւն ու վիտապոզ զաղթականութեան քաթելոն: Դպրոցէն պաշտօն տուած էին իրեն՝ ընկերուհիին քէմփ հասցնելու իր ազգականուհիին տունը: Գիշերեց այդ խրճիթին մէջ, ուր ընդունուեցան: Բարի, հին, գիւղական հարազատ սովորութիւն էր, որբը, օտարականը պահել ու կերակրել ծածկի մը ներքեւ:

Տարի մը ետք, երբ գրգռման մէջ ստակ չուէր, մտաւ պաշտօնի: Դարձաւ առանձին դուռ ինքնաբաւութիւն: Նարնջներն իր ամէնուրեք. անմայթ ու սալարկուած ճամբաներ, որոնք փողոցի երեւոյթ չունէին, այլ՝ տեղափոխութեան անհրաժեշտութեան համար էին բացուած պարտէզները նետելով երկու թեւերու վրայ: Գորսուած թաղամասեր եւ բնակութեան համար խըրճիթ մը ծառերուն մէջ խեղդուած... եւ ահա այս պողոտան, որ իր նորագործ մայթերուն վրայ կը բարձրացնէր հակայարմատ այս շէնքերը: Ասոնք պիտի ըլլային մեծցող քաղաքի մը անդրանիկ խոյանքները: Լաւ եւ ուրախ օրեր կը սկսէին, բայց, աւագ, տնտեսական տագնապ մը ծայր տուաւ արդօրերուն եւ պատճառ դարձաւ, որ զինք առնէին ու նետէին հեռու, փոքրիկ քաղաք մը. ինքնին խուլ անկիւն մը: Հոն ահա անցան իր կիսնքի քառասուն տարեկները, որոնք զինք դարձուցին վաթսուներորդ պաշտօնաթող մը: Կրկին անսպասելիութեան հովեր սկսան փչել, որոնք քիչէին զինք կրկին այս քաղաքը: Հին ընկերը իրաւունք ունէր. այս տարիքի մարդուն ո՞վ երեսը պիտի նայէր ու դարձ տար: Իր ծանօթ անունը յատին, ըսին միայն, թէ մարդը եկած է եւ իբրեւ անանուն մը, կ'իջնէր ահա եաներով ցուցանակուած վաճառատուններու առջեւէն ու կը փնտռէր Գորգեան անունը, որ զերօ ա կօշ մըն էր, համաձայն ընկերոջ ցուցմունքին:

Ստաֆ. ահա Թոսունեան մը. ցուցատախտակը ոչինչ ըմբռնեց Մամբտունիի մտահոգութենէն. քաղեց. եւ ահա կը լեցուէր ազգային հպարտութեամբ: Վերջին քսան տարիներուն, գաղթականութիւնը, երբ ցոյց տուաւ իր կռնակը եւ հալածուած զաղանի նման դնաց կծկտիլ իր հարազատ որջին մէջ, տեղական ազգայնականութիւնը կարծեց վրէժ լուծել անկէ: Վերցուց բոլոր հետքերը, անոնց հետ նաեւ ցուցատախտակներուն վրայ մնացած մոզայիք, երեք լեզուեան գրութիւնները եւ միատառը մանրագրութեամբ մը՝ չըզոհացուց մարդոց նայուածքը: Մամտունիի այժմ կը տեսնէ հինը, երեք լեզուեանը եւ, ի հպարտութիւն՝ իրար հալածելու ելած հայկական տառերով սերճացած ցուցատախտակները:

— Գեցցե՛հ նաւերը. — կը ցնծար ներքին ուրախութիւնը:

Քիչ առաջ իրմէ քաժնուած հին ծանօթին ստուերը տնկուեցաւ յանկարծ միտքին մէջ. ան լեզու կ'իջէր ահա ներքին ետի մը կերպարանքով ու կը յանդիմանէր սրտաբուխութիւնը:

— Կամա՛ց, կամա՛ց, բարեկամ. ծովը լտեսած՝ մի մերկանար. անտեղի հպարտութիւնը հիւանդութիւն է: Եաներուն արժանիքը մնաց թիթեղեպածակ քէմփերուն մէջ. կը յիշե՞ս. երբ ընկերուհիդ տարիւր-յանձնեցիր իր

ժողովրդի՝ կենդանի ժողովուրդ, որ երթաւ. կէսօրը վաղուց տնցած՝ երեկոյ էր. կերակրեց ու քնացուց իր փոքրիկ յարկին տակ, որպէսզի դուռն գիշերը անծանօթ քաղաքին փողոցները չթափառէր: Իսկ հիմա, խնդրեմ, մօտեցիր եան կրող ցուցատախտակի ներքեւ տուած հայ վաճառականին եւ ըսէ, թէ տուն ու տեղ չունենալէ ետք, դործ ալ չունիս: Ան քեզի պիտի լռէ՝ կորսուէ. զհայը մուրացկան չի կրնար ըլլալ: Կարծէք թէ ինքն է վերցուցած մուրացկանութիւնը հայութեան մէջէն...

Մամտունի ջղայնացաւ.

— Ետիս գնա՛, սատանայ:

Մինչ հին ընկերոջ ստուերը կը շարունակէր յոռետեսութիւն սերմանել իր ներաշխարհին մէջ.

— Այսօր եանը պայման չէ ազգասիրութեան. ան տեսակ մը ծանուցում է, հայկական ձեռնհրէքութեան հին փառքին կապկուս, լաւորակ ցեղի մը անունով՝ անընկճելի, քարէն հաց հանող, տոկուն եւ անկեղծ գործ արտադրող եւ, մա՛նաւանդ՝ մարտականութիւնը իր մէջէն արժատախիլ ըրած ցեղ մը, որոնք համբաւին կը վազեն օտարները, ոչնչէն ինչպէս թիթեռները լսորի կիշերային լրսին: Այս համբաւը հայը ապրեցուցեր է դարերով, բայց հիւսիսէն մէջ ունեցած էր շարժական գրացիներ...: Այսօր եանը շունի ալիւս ցեղային մտահոգութիւն. ան դարձած է անհատական միաւոր, հարստանալու միջոց, տեսակ մը ռեզիւմէ-քաղաքականութիւն եւ նաեւ ալլամերժութիւն՝ միշտ ետի հաշտոյն:

Հին ծանօթին ստուերը կը փափար ականջին տակ եւ Մամտունի կը տեսնէր օթկլոյսկան Եսկոյի դերը ստանձնած քուն անոր խօսքերուն տակ:

— Կորսուէ՛. կորիւր մէջէս, քսու մարդ. քառասուն տարի անյայտ մընացեր էիր եւ այժմ դեմ քու անյայտութեանդ ծոցը. Եսկոյն ահալի ռեթիւր գործել տուաւ Օթկլոյին...

— Բարեկամ, ես Եսկոյն չեմ, — կը շարունակէր միւսը, — Եսկոյնը ահոնք են, որ քեզ զրկած են Գորգեան անունով հողիով անանկ մարդուն քով, որ քլեմենտինի վաճառակաւորներէն մէջ հաշտութիւն կապալաւուն քու միւս ծախու հանէ, փոխան փուճ խոստումի մը: Անոնք կ'ուզեն խաչել լաւատեսութիւնդ, զո՞րք...:

Մամտունի մտիկ չէր ընել ալիւս ներքին փոխառացութեան. պիտի ուզէր ամբողջել խախտած լաւատեսութիւնը.

— Յիմար. դուն այժմ կ'երթաս պարոն Կրեասին. դրամ դիզած, լիտցած մարդ մը, թերեւս որ սխալմամբ դէշ ճանչցուած է. կրնայ պատահիլ, որ արացաւ մէկը ըլլայ, ինչո՞ւ ոեւ քող անցընել եւ սուղ ընել դիմել չգտնելու անգը:

Կը քալէր եւ տեսակ մը նախանձով կը դիտէր մայթէն անցնող մարդերը: Ականջին դպան հայերէն խօսակցութեան ձայներ: Քիչ ետք, կոնակի կողմէն եկան-անցան երկու աղջիկներ. միմիւրիւն հազած էին. անոնց մերկ, կախառուն դիտները ծածկող փէշիկը շունէր երեմեմի հայ մայրերու այնքան փնտռած ապահովութեան գօտին, որ աղջկութիւնը կը դարձնէր անառիկ բնիկ...

Միտքը հոս խճուեցաւ. միթէ տոհմիկ բարձրը բոլորովին Նահանգած էին եւ նորոյթը սպունդ քսած ու սրբած էր ամէն սրբութիւն: Աչքերը յիշեալ առաւ. աղջիկները հալած էին ամբօրին մէջ: Նայուածքը դամեց վաճառատուններու ճակատները դարդարող ցուցափեղկերուն: Անոնք նկնձակբար էին, ցցատառ, սպասնազին, ծուռ-քիթ, սլաքաթիւ, սեւ ու սպիտակ, արեւնադոյն, դեղնակապոյտ, կանաչափառ, ծիրանածին եւ տակաւին խրուած որմերուն, սեղմուած վաճառատուններու ճակտին, կախուած անցորդներու

պիտանեցի՝ — բոլոր տեսակները՝ հրապարակապես անցնող-դարձողները դը-
նելու փորձութեան մղող...

— Մտէք, խնդրեմ. մտէք ու գնեցէք, որ հաստատիր մեր տէրերը ա-
ւելի տոգրին հարստութեան մէջ...

Ստո՛փ. կրկին քաղցրանուշ եան մը, դրացի՝ ոչ-եաներու Գալեց. աշ-
նանային արեւը խոնջէնք կը դիզէր ուսերուն. մուշ-խուշ հոգիին կը կարօտէր
հին ժամանակներու վերադարձին կամ նոր սկսող երիտասարդութեան մը,
զոր պիտի ապրէր իմաստութեամբ, միմի-միմի հաշիւներով, որ շուտ չփախ-
չէր տարիքը: Այժմ, երբ ո՛չ հինը կը դառնար ետ եւ ոչ տարիքը կը նորոգ-
ւէր, անյուսութիւնը կը ծնէր հակադարձ մեծցող կասկածը. միտքով նմա-
նեցաւ աղեկի մը, որ վախը ունէր դասի ելլելու եւ, վարժապետին հարցում-
ներուն շկարենալ պատասխանելով՝ կորսնցնելու քննութիւնը: Նայուածքը
սկսաւ վազվզել մէկ ցուցանակէն միւսը, յոյսի ճառագայթներ որսալ փոր-
ձելով անոնցմէ: Եաները շատցան. մէկը Գալեցիէն էր. երկրորդը զարձաւ
Մեղրիկեան: Փախլաւանեան մը կ'պաւ անոր. Անուշեան մը կը կարմրէր ան-
անդին: Լիճանեան մըն ալ կար, որ Պինպաշեանին կող տուած էր, որովհե-
տեւ լիզուցէր հիւանդութենէ տառապողի պէս դեփ-դեղին ցուցատախտակ կը
կրէր ճակտին: Եան, եան, եան ձեռք ձեռքի տուած՝ պար կու գային իր շուրջ-
բոլորը...

Ս. այս ամէնուն միջեւ սեղմուած, կարծէք, իր գոյութեան իսկ գղջա-
ցող, սմբած ու լուին Մնիկեանին ուս տուած նոյնքան շուարուն անուն մը՝
Կիրակոսը: Արման՝ Գոմր-Եմէն Եղբորն էր:

4. ՀԱՒԱՏԱՔՆՆԻՉԸ...

Մամուռնի կեցաւ ճիշդ մուտքին առջեւ Գորգեանին: Յուցափեղկը
հայելիացած էր եւ դուռն ինքզինք ամբողջ հասակով արտացոլուած, կտոր
մը արեւ ոտքերուն տակ: Բնական ու արուեստական բախումներու ապագին-
եալ գոտիին վրայ, որ կը ներկայացնէր ցուցափեղկը, կիսամութին մէջ ահա
շարժական հերթափ դուռն մը եւ զէմքի մը վրայ զոյգ աչքեր ալ ու ձախ
վացին-եկան: Երբ ներսի մարդը տաքի ելաւ, Մամուռնի հասկցաւ, որ իր դէմ
կը գտնուէր ինքը՝ պարոն Կրեսոս: Այլեւս անանալ կարելի չէր. բացաւ շար-
ժական մուտքին ապակեփեղկը եւ ներս մտաւ:

— Պարոն, մտէք, — կարծէք պարոն Կրեսոս կը ճանչնար Մամուռնին,
— հոնկէ՞ կու գաք. նստեցէք:

Մամուռնի նստեցաւ ցոյց տրուած աթոռին: Պարոն Կրեսոս փակցուց
իւրը եկուորի աթոռին. եւ խաճային, ախպէս, որ ներսի աշխատողները բառ
մը չորսային իր խօսքերէն, կրկնեց հարցումը.

— Իր քովէ՞ն կու գաք:

Մամուռնի մեքենականօրէն պատասխանեց.

— Հեռաճայնեց ձեզի. ըսի՞ք՝ թող գայ. եկայ:

— Ուրիշ մէկու մը ղիմեցի՞ք:

— Գաղաթէս ուղղակի հոս եկայ, — Մամուռնի հիմա պարզ կը տես-
նէր հին ընկերով նստած կլորիկ խօսքին դժած նկարը — գերօ ա կօշը: Սըր-
տով շեղաւ երկրորդ հարցումը, որ խնդիրը կը հեռացնէր անորոշ ուղղու-
թեամբ: Կը խորհէր, թէ՛ կատարուած-լմացած հարց մըն էր իր պաշտօնի
կանչաւիւր, ճիշդ երկու անգամ երկու հաւասար է շորսի պէս: Եւ ահա ան-
ունդի հարցում մը — ուրիշ տեղ դիմեցի՞ք: Պարոն Կրեսոս բնաւ միտք չու-
նէր թափանցելու Մամուռնիին ներքին աշխարհին ալեկոծ կացութեան.

— Քանի՞ տարեկան էք։
— Սուրբիոյ մէջ վաթսուն տարեկանին պաշտօնեայ մը կենսաթոշակ կը ստանայ. ես հինգ ամիս տուալ Հրաժարական տուի, որպէսզի կենսաթոշակ չստանամ։

— Լաւ. ինչո՞ւ հրաժարական տուիք.։

— Ինծի ըսին հոսկէ, թէ պաշտօն մը խոստացած էիք...

— Ամէն խոստում, որ իրականանար, մենք հիմա մեր երկիրը դարձած կ'ըլլայինք, չէ՞. ուրեմն, հրաժարական տուիք. իսկ ընտանի՞ք, աշխատող ձեռք կա՞յ տունին մէջ։

— Ոչ մէկ ձեռք. հինգ հոգի եւ հինգ բերան ուտող։

Գաղար, կեղծ ժպիտ, որ ամօթապարտ էր, տեսակ մը հաստատում՝ դիւրաւ ինքզինք բարոյական որեւէ պարտաւորութենէ զերծ կացուցանելու մտադրութեամբ։ Զարմանալի շթուեցաւ Մամտունիին, թէ ինչու այս մարդը տնունը չհարցուց։ Իրաւունք տուաւ դրասկնեակի համակրելի պաշտօնեային։ Կրեսոսի ժպիտը կեղծ ըլլալուն, Մամտունի եւս ժպտեցաւ կեղծ. եւ Մամբ-առճիին քմծիծաղը ըսել կ'ուզէր.

— Հասկցայ. դուք, պարոն Գորդեան, թղածդ գիւրաւ լիզող տեսակի մարդ ես. ընկերոջս ըսածին պէս՝ զերտ ա կօշ մարդ. բայց գուցէ մարդ ալ չես.

«Որքանով կը վճարուէիք հոն»։ Կ'ըսէին պարոն Կրեսոսին աչքերը եւ Մամտունի ենթադրաբար ըմբռնեց հարցումը։

Մամտունի ջղայնացաւ, սակայն յայտնի չըրաւ իր նեղուիլը.

— Ինչո՞ւ կը հարցնէք քանիք, որ աւելորդ ժամավաճառութիւն են...

— Այս ծանօթութիւնները հարկաւոր են ինծի համար. եթէ անկարեւոր են ձեզի համար, այդ ձեր զիտնալիք բանն է. աղտոտ էք չպատասխանելու. բայց մինչեւ որ ես չվերջացնեմ հարցումորձս՝ ինդրեմ յմիջամտել հակահարցերով. պարոն Կրեսոս հոս ի յայտ բերաւ այնպիսի լրջութիւն մը, որ ըզայլին դրութիւնը խանդարտած եւ ներքին անբուժելի հիւանդութեան ենթակայ մարդը կ'ուենեայ լեզակապոյն դէմքի մը վրայ։

Մամտունի բարի սիրտ ունէր. մեղքցաւ գիծացիին՝ մահասարսափի տակ մնալուն ապրած ըլլալուն. սակայն չանդադարձաւ մեղանշումին, երբ կրկին հարցածէւ պատասխան տուաւ.

— Եթէ այնքան կարեւոր է ձեզի համար, պարոն Գորդեան, իմ որքան ստանալու Ընկերութեան մէջ, խնդրեմ, հաշուեցէք քառասուն տարիներու յաւելումներով վերջակէտ հասած ամսական մը ձեր մօտ աշխատող ոեւէ պաշտօնեայի մը...

Գորդեան չնկատեցաւ մտնուածապատ այս պատասխանէն.

— Հասկնալի է. քառասուն տարի աշխատող մը, երբ բթածիտ չէ, կըրնայ բարձր պաշտօնի տիրտնալ եւ լաւ ամսավճար ստանալ։ Վերջին հարցում մը՝ տեղացի՞ էք։

— Ո'չ. ժամանակին եղած եմ. բայց այժմ տեղական անձաթուղթ չեմ կրեր...

— Հը՞մ. տեսա՞ք, որ հարցումները իրենց համարժէքութեան մէջ մըտան եւ ամէն բան յստակացաւ մեր միջեւ...

— Կը նկատեմ արդէն։

— Թոշակաւո՞ւ էք։

— Ո'չ. միանուագ դանձած եմ աշխատանքային վարձատրութիւնս։

— Հը՞մ...

Մամտունի ըմբռնեց, որ այդ վրայ տրուած հրմով պարոն Գորդեան դուռ փախուստի համբան, տուած խոստումը ետ առնել ուզելուն։ Անոր յա-

բաշարժ բիբերը քարացան երկվայրկեան մը. սակայն կեդրոնացում չկար մը-տասեւեւումի այդ վիճակին մէջ. քանզի պարոն Կրեոտտ անմիջապէս կը մի-նամտէր ահա, յաճախորդին եւ գործակատարին սակարկութեան, զնուելիք ապրանքին գովքը երդումով վաւերական դարձնելու ճիշդ գործադրելով: Անոր խոշոր, զոդահար բիբերը գիշատիչ թռչունի չարութիւն ունէին, երբ դար-ժան Մամտունիին դէմքին.

— Հը՛մ. կրնա՞ք, օրինակի համար, գործարանի մը մէջ հակիչի եւ ի-րաւախոհութեան պաշտօն կատարել:

— Անցեալին ամբողջ լըջանի մը գործերը կտուփարած եմ...

— Անցեալին հետ ես գործ չունիմ. ու կը տեսնեմ, որ... իմ փնտռածս համեալտ պաշտօնեայ մըն է, որ գոհանայ երկու հարիւր ոսկիով, իսկ դուք, ընտանիքի տէր էք, տեղացի ալ չէք, ոչ ալ՝ թռչակառու. իմ կարողութիւնը չի ներեր աւելին վճարել եւ դուք ալ չէք գոհանար տուածովո, այնպէս չէ՞...

Մամտունիին ոտքի ելաւ անձայն մեկնելու. լաւ կ'ըմբռնէր Գորդեանի միտքը. առաջին ակնարկով կարդացած էր արդէն Կրեոտտի մը նիւթական առ-կարողութեան առասպելը: Քիչ առաջ ան չըջիկ սանտուիչ ծախողէ մը չզննոց քառորդ ոսկիի կիսահացով խաշած հաւկիթ մը, կէտօրուան ճաշը ընելու հա-մար... Միւլքիմիլիոնէրի մը վայել ճաշ էր, Բայց Մամտունի պէտք չզգաց միանգամ ընդմիջաւ խզում առաջացնել իրենց միջեւ. ան ուղղակի կոշմ չէր, ալլ անոնք, որոնք զինք նետած էին իր ճանկին մէջ, ինչպէս հասկցած էր ու դիտել տուած հին ժամանակներու ընկեր ծակատեան, քիչ առաջ:

— Ուրեմն, այսպէս, պարոն Գորդեան. դուք մանր պաշտօնեայի պէտք ունիք եւ զիս գործէս հանել ու հոս բերելուն մէջ բնաւ պատասխանատուու-թիւն չունե՞ք. մինչդեռ ես կը խորհչի, թէ վճռուած էր հարցը...

Պահ մը պարոն Գորդեան խոկալ ձեւացուց. Մամտունիին շարժմ'ն էր միթէ անոր խելո՞ւ. բայց ոչ, պարոն Գորդեան խիղճ չունէր եւ ահա թէ ի՞նչ կը թելադրէր.

— Անգամ մը ուրիշ տեղ դիմեցէք, ետքէն կրկին կը տեսնուինք. ես շատ ուրախ պիտի ըլլամ, եթէ յաջողութիւն ունենաք. սրտանց կը մաղթեմ:

Մամտունի պահեց պաղարիւնը. կրնար տաքնալ. բայց պարզապէս ը-սաւ.

— Ուրիշ տեղ եթէ պէտք ըլլար դիմել, հոս չէի դար. ինչ կը վերա-բերի ձեր գոհ մնալուն, այդ ալ մէկդի դրուելիք հարց է. լըջօրէն մտածելու է՝ շնորհակալութիւն յայտնելու համար ձեզի:

— Ծիչդ այդպէս լաւ եւ պարոն Կրեոտտ իր յանձնառութենէն ազատ ըլ-լալու գոհունակ ու ամենատաք ժպիտը ի յայտ բերաւ այդ պահուն եւ դէմ-քին լեղակը կարմիր երանգ մը ստացաւ: Գոհ էր, որ թքած թուքը պիտի չլի-զէր:

Երբ Մամտունի պիտի մեկնէր, պարոն Կրեոտտ կանգնեցուց պահ մը զինք.

— Խնդրեմ. ձեր հասցէն թողէ՛ք մօտս. դուցէ պէտք տեսնեմ ձեզ կան-չելու...

Մամտունիին լզարմացաւ այս նոր անակնկալէն. հին ընկերը զգուշա-ցուցած էր հասցէներու հաւաքածոյի մասին: Սակայն, ուզեց ապրիլ փոքրիկ յոյս մը: Գորդեան զնաց դէպի խորքի սեղանը եւ հոնկէ խելով հաստափոր տետր մը, արագ ետ դարձաւ եւ խոթեց զայն Մամտունիին ափին մէջ.

— Գրեցէ՛ք ձեր հասցէն լատինատառ. եթէ հեռախօսի թիւ մը ունիք, այդ ալ գրէ՛ք:

Հոս միայն յայտնի դարձաւ Մամտունիին իրական անունը, որ զոցուե-ցաւ հասցէներու տոմարին մէկ էլին ներքեւ, ապագային, ո՛վ դիտէ ո՛ր հը-

նապէտի հաւաքածոյին մաս կազմելու։ Ու այդպէս ալ մնաց անյայտ ինքնութիւնը Մամուռնիին, որ ահա կը յոնձնէր հասցեամատենը Գորդեանին եւ ալ ռաբը նետեց մայթին։

5. ՓՐԿԻԶՆԵՐԸ...

Արշալոյսը վոնտած էր շուքերը մայթէն եւ երբ Մամուռնի դուրս եկաւ Կիրակոսի մօտէն ու քայեց մայթն ի վեր, առատ լոյս դիզուեցաւ ուտերուն, որոնք ծանրացան։ ուզեղը ջրիկցաւ, շոգ տեսած սառցակոյտի պէս։ մինչ ջիւղերը հաշիւ Եծածի նման թփրեցան։ Ամէն յոյս մնաց ետին։ առջիւր ոչինչ կար, որովհետեւ հայհոյանք մը կը քալէր ուղղուած յայտնի ու անյայտ հասցէներու։ Մամուռնի կրթուած մարդ էր եւ հայհոյել չգիտնալուն՝ ոչ մէկ հասցէ նկատի չունեցաւ։ Բայց հին օրերու ընկեր ձակառեանին ստուերը միացաւ իր շուքին։

— Դասդ առի՛ր. ո՛ւր մնաց եաներուն պատճառած ազդային հպարտութիւնը, զոր պատճառով պէս նետեցիր ուտերուդ։ Զվերցնե՛ս նայուածքդ ու նետես քովդ ի վեր զցուող եւ եան կրող ցուցատախտակներուն։ Անոնց ներքեւ, վաճառատուններուն մէջ բոլորն ալ զազան-մարդիկ են, Գորդեանի պէս՝ ոսկէ ժանիքներ կրող ու քեզի պէս բարի մարդոց միտք բզկտող...։ Անոնց տոհմիկ արժանիքները մնացին հիւղաւաններու ցիխոտ ու նեղիկ փողոցներուն մէջ, երբ դեռ կը կոտորար Եղեռնի վէրքը։ Այժմ զնա՛, դարձ փրկիչները։ անոնք կը կարծեն, թէ մէկ-մէկ Գոլմպոյոս են, որոնք Ամերիկան գտան այնպէս՝ ինչպէս որ դորձ գտան քեզի...

Մամուռնի կը լսէր ստուերին ձայնը, որ այժմ իր սրտէն կը խօսէր։

— Այո. պէտք էր գտնել այդ փարիսեցիները, որոնք ոչ թէ Գոլմպոյոսներ են, այլ՝ մէկ-մէկ Պիղատոս։ պէտք էր բռնել անոնց անգոյ աշտածօրութենէն ու քաշել, որ փետտուէին բոլոր սնափառութիւնները փրկիչ կոչեցեալներուն։

Եւ այս որոշումը եղաւ անդարձ մտասեւեռում Մամուռնիին համար, քանզի չգտնուեցաւ մէկը անոնցմէ, որ սրտցաւութիւն ցոյց տար կամ համբերութիւն քարոզէր։ Ամէնքը դարձան մէկ-մէկ Պիղատոս։

— Ի՞նչ կրնանք ըսել. պարոն Կրեոսոս վաճառական մարդ է. իր հաշիւները ինքը կը տեսնէ։ չիսակը եթէ կ'ուզէ, պարոն Կրեոսոս, ազգային տեսակէտով՝ անպէտք մարդ է...

— Եւտո՞յ. ո՛վ զիս ցոյց տուաւ իրեն. ես ի՞նչ գործ ունէի իմ ջնանչյաւ մարդուն հետ. ես կ'ամբաստանեմ բոլորդ. օր մը կը յիշեցնեմ ձեզի ձեր յանցանքը...

Այնուհետեւ հոգեբանական պայքար մը կը սկսէր Մամուռնիին եւ փարիսեցիներուն միջեւ։ Երկուստեք արհամարհանքը տարաւ զիրենք ուրացումներու։ մոռցուեցան ինչ որ անցեալէն մնացած բարեւ — Աստու բարեւ — ժպիտներ, զգացական, հասարակական փոխյարաբերութիւններ։ Անկեղծ, հաւատարմութիւն, անկեղծ կարծուած ժպիտներ մէկ օրէն միտք աշխատեցան ի նման դեղնեցան, չորցան ու դէմքերէն վար թափեցան։ Արժատաւորուած հաշիւներ, շահեր, դիզուած պաշտօններ իրարու եկան, սեղմուեցան, որպէսզի Մամուռնիին պէս խարաղան մը շտղողէր կազմուած, բերդակալուած, երկարամեայ աշխատանքով լիացած ամբողջ մը ներս։ Ամբողջ որ հիմնուած էր ժամանակին եւ տէր չէր փոխած։ Ժանգոտած երկաթեայ դարպասը կը մնար միշտ փակ ասպետական ձեռներէցութիւններու առջեւ ու փառած իշխանութիւն մը կը տիրէր ներսը։ Փարիսեցիները երբ Մամուռնիին

տեսան, նայեցան երկինք կամ գետին, բայց իրականին մէջ ո՛չ հրեշտակ կար երկինքը, եւ ոչ ալ սատանայ՝ հողին վրայ, քանզի հրեշտակներ կային սմբույշն դուրս, իսկ ամբողջ քնակեցուած էր միայն սատանաներով:

Մամոնէին մինակը ճակատ մըն էր, որովհետեւ վերաւորուած էր իր սնկեղծութիւնը, նուիրուածութիւնը. ու պատիւ մըն էր եղած իրեն համար պայքարելը սնափառութեանց, եսամոլութեան եւ շահագրգռական մտայնութեանց դէմ...

— Կոտրած էր հաւատքին կուժը եւ ճեղքերը պիտի չմիանային բնաւ իրարու, միակտուր ամբողջութիւն պիտի չըլլար այլեւս. թէեւ կարելի էր գիտ ճեղքերը ծեփել, — կը խորհէր Մամոնէին: Եթէ կարելի չէր ծեփուած կողերով կուժին մէջ ուրախութեան ըմպելի պահել, դոնէ հոգեբանականորէն պահածոյի պաշտօն մը կրնար վստահուիլ կուժին: Ահա թէ ինչու Մամոնէին չի սիրուէր թուրքոյն ջախջախել հաւատքին կուժը: Բայց, աւա՛ղ, փարիսեցիները ազգպէս շփոթեցին ընել. բացէ ի բաց նշան առին անոր եւ ու՛զելով փշրեցին զայն...

Մամոնէին կը տրամաբանէր այսպէս.

— Սպասելով, թերեւս, կարելի ըլլար բրինձին քարը մաքրել եւ ապա դատական փիլաւ եփել անով. չէ՞ որ հայ տատիկները, Երկիրը շամբով բրինձ փիլաւ կը պատրաստէին, որ երբ խռովկան խնամինները դատական սրբութիւն առնէին ժամ երթալով, վերադարձին՝ տանտիկինները անոնց հըրամցնէին շամբով փիլաւ եւ փիլաւը դառնար հաշտութեան միջոց, քէները սրբելու համար քաւոր-խնամի միջեւ...

Եւ, ի վերջոյ, ազգպէս ալ պատահեցաւ: Մեր փարիսեցիները խորհեցան կրկին ծեփել փշրած կուժին կողերը, որպէսզի անիկա կուժ անունէն դադարած ըլլար: Կանչեցին պարոն Կրետտը եւ ըսին քաղցրաբար անոր.

— Եղբայր պատուական. ինքնակամ ելար-ըսիր, թէ ապուր պիտի եփեմ, բայց տեսնուեցաւ, որ կամ աղը քէչ էր եւ կամ ջուրը շատ. թերանին սյրել տուիր, եւ չիտոյ՝ լաւ չեւ մաքրած. քար ինկաւ ակունակու տակը. փոխարէն քարաբար խօսքը թողունք եւ դանք իրական խօսքին. եղբայր, խօսք տուիր, թէ սա մարդուն դործ պիտի տայիլ եւ մենք ալ գործ մը կատարած ըլլալու հաւատքով զինք կանչել-բերել տունիք. արհամարհելի մէկը չէ. լաւ աշխատանք տարած է եւ ծանօթ մէկն է հրապարակին վրայ...

Ըսին սակայն, յայտնի էր, որ Պիղատոսի դերը կը կատարէին եւ սլաւոն Կրետտ կը հասկնար իրեն խօսող մարդոց դերասան ըլլալը, պատասխան տուաւ եւ ըսաւ.

— Ուշացած է մարդը. հարցութորձ ըրի, տեսայ, որ իմ ուղածս չէ. բերանը քացաւ-լրացաւ՝ եօթը հարիւրի պահանջը դրաւ. քովս աշխատողը, ահա չորս տարի է, նոյն գործը կ'ընէ, իրեն պէս պաշտօնաթող մըն է եւ կը դոհանայ երկու հարիւր յիսունով. երբ կայ երկու հարիւր յիսունով ալիսատող մը, խնձեմ եօթը հարիւր վճարելու առջեւ ելլող տմէն մարդու: Եղբայր, դրամը փողպէն կը հաւաքեն...

Գորդեան կը նայէր մէկ կէտի. ջղային ըլլալուն՝ ձայնը ճաթուտած կը փրփրէր քրքին ելած ժամանակ եւ, բարկացած ձեւացնելով ինքզինք՝ կը փնտռէր շուրջիններուն շողշողուն, շոյող խօսքերը, որովհետեւ հողիով աղքատ մարդ էր եւ չէր հանդուրժէր, որ ուրիշներ միջամտէին իր ներքին դործերուն, մանաւանդ դրամական հարցերուն մէջ:

Շուրջինները վարժուած էին Գորդեանի բնաւորութեան: Մէկ քանին ոտքի ելան, մէկը գրկեց ուսը. միւսը ըսաւ՝ իրաւունք ունի. դրամը փողոցէն չեն հաւաքել: Երբորդը համոզել աշխատեցաւ.

— Պարոն Կրետտ, մեր ղլխուն պատուհաս մը փաթեցիր, դիտե՛ն.

մենք հանդիսատեան հանդիսատեան մեր գործերը կը վարէինք եւ ոչ ոք մեզ անհանգիստ կ'ընէր: Մենք կ'ուզէինք այդ Մամտունին հետեւ պահել մեր ներքին գործերէն: Երբ հարց ծագեցաւ իմ մասին կարգադրութիւն ընել, վերէն եկած յանձնարարականի մը վրայ, մենք վճռած էինք մերժել...: Եւ ահա դուք եւ յաջ եւ իսկ, թէ իրեն պէտք է ինչ որ մը պէտք ունէիք. մենք ալ, սեւերես չմընաւու համար կազմակերպութեան մեծաւորին առջեւ, դուք, որ ծանր քար մը կը վերցնէիք մեր ուսերէն. կանչեցինք զինք եւ մտանք բնականաբար քարոյական պատասխանատուութեան տակ: Իսկ դուք եւս մերժեցիք իրեն գործ տալ: Հիմա ան մեր օճիկէն կախուած է եւ իր մաղձը կրնայ որ մը թափել՝ մեր մասին գրելով թերթերու մէջ. քինախնդիր մէկը կ'ընեն եւ դուք ալ անմաս չէք մնար իր երգիծանքէն: Եւ կէջ, առէք զինք մեր գործին մէջ, աղատութիւնք մեծ պատուհասէն...

— Այո, պարոն Կրեստ, դուք աղագային մարդ էք. քաղաքը ամբողջ գիտէ ձեր վայելած գործի մասին: Ձուներու չէք. սակ, սուկը քարձրացուցէք շորս հարկերէն. մեր ժամանակները՝ դռնապաններուն բերանը շորս հարկերով չեն գործեր, ո՛ր մնաց... ինչեւեցէ՛ տուէք ձեր համաձայնութիւնը, լմնցաւ զնաք...

Այսպէս ահա ժողովականները կը քակեն իրենց անուշ խօսքերուն ծանրածանր կծիկը եւ պարոն Կրեստ կը զիջանի տալ կէս-բերան համաձայնութիւն մը, որուն պիտի հետեւէին գործեան հոնգոյ ի նման անլուծելի պայմաններ: Ժողովականները քանաւոր լռութիւն պահելով՝ եւ ժպտաշուրթ՝ կ'ընդունին զանոնք, որոնցմով այնքան ալ չէին հետաքրքրուած: Մազէ կամ մուրը անցնելէ ետք փայտակոճղի վրայ կոխելով դեւր անցնելու իրենց գործը չէր. այդ մասին ենթական թող մտահոգուէր...

Ժողովականներէն մէկը, այսպէս համոզուած, քարի լուրը Մամտունին հասցնելու բարեհոգութեամբ, կը կանչէր զինք իր վաճառատունը.

— Ահազին ճիգ թափեցինք, մինչեւ որ պարոն Կրեստը համոզեցինք: Այժմ լսեցէք իր պայմանները. կարեւորը դուք խցկե՛ն է գործին մէջ. դժուարութիւնները ետքէն կը հարթուին:

Մամտունի թերահաւատ էր. դիտել տուաւ, թէ՛

— Պայմաններ զնելը հասկնալէ է, բայց, կը խորհիմ, թէ ահազին ճիգ թափուած տեղը անմշակ մնացած հող պէտք չէ գտնուի. հարկերին հարկը յաջողած էք ձեր առաքելութեանը մէջ. ա՛յդ է կարեւորը:

Մամտունին կը ճանչնար ժողովականները, որոնք լաւ տրամադրուած չէին իրեն հանդէպ. արդէն մեծ յոյսեր ալ չէր կապած անոնց միջոցառութեան արդիւնքին:

— Իմ կարծիքով, այնքան ալ ծանր պայմաններ չեն, — աւելցուց լրատուն ժպտելով:

6. ՆՄԱՆ ՏԱՊԱՆԱԳԻՐԻ...

Որպէսզի Կրեստ-Մամտունի վէճը վերջ գտնէր, փրկիչները խաղացած էին այն դերը, որով հանդէս եկած էին ժամանակին մեծ դաշնակիցները Հայկական Դատը թաղելով Լօզանի վեհաժողովին մէջ: Մամտունի պարագային՝ թրքական կողմը ներկայացուած էր պարոն Կրեստով: Միայն թէ՛ Լօզանի դաշնակիցը դրաւոր էր, Կրեստի պայմանները՝ բանաւոր, որ խոցելի պիտի չլլար: Դեռ մինչեւ որս, Մամտունին չէ կրցած հասկնալ, թէ փրկիչները համոզուած էին իրապէս գործին էութեան եւ իրենց ցոյց տուած ծառայութեան մէջ:

Հրաբեր պարոնը բացաւ օփին մասները, որպէսզի թուէր պայմանագրին յօդուածները մէկ առ մէկ.

— Փրիմօ. պարոն. Կրեստս կը պահանջէ ձեզմէ, որ իրեն ներկայանաք տեղական ինքնաթուղթով. օտարազգատակներուն համար մասնաւոր քնքն չունի, կ'ըսէ. մարդը իրաւունք ունի. խիստ են օրէնքները եւ արտօնազերի հարց չի ծագիր, քանի որ այդ ինքնութեան թուղթը կարելի է ձեռք բերել տասը-տասը շնորհ հազարով, որ արհամարհելի գումար մը չէ. եւ արդէն անոր վերաբերեալ օրէնքը առայժմ ստեղծուած է...

Մամսունի, որ ճկոյթ մատր ծալած էր, բաց թողուց գայն:

— Փրիմօն լսեցինք. շատ իմաստալից պայման է. պարոն. Կրեստս կը թուի գտած ըլլալ լաւագոյն միջոցը մէկ անգամէն ջրամոյն ընելու ծեծուած հարցը...: Ծնորհաւորելու է նաեւ այդ պայմանը ընդունող ժողովականները...

Հրատու պարոնը խանդավառուած՝ պիտի ընէր երկրորդ թուումը, երբ Մամսունի կեցուց զինք.

— Կը բաւէ. առաջինը արդէն ջրած է հաջէն ձեռք թուածները:

— Լսեցէք. սքանչելի. ամսափճարը պիտի ըլլայ ցմահ՝ առանց յաւելուածի. այսն ըստնաւան տրուելու պարագային՝ լրիւ կը փճարուի...

Մամսունի երկրորդեց քծիծաղը.

— Աստի խօսք չկայ. միայն թէ, պարոն. Կրեստս ոչինչ կը կորսնցնէր, եթէ չորս հարիւրին փոխարէն խոստանար հազար մը:

— Բարեկտմա, մարդը մէկ դահեկանի վրայ կը գողայ եւ դուք ելեք հազարի մասին՝ կը խորհէք:

Մամսունի ականջի ետեւ նետեց մարդուն միամտութիւնը.

— Թիւրսօ...

— Հա, պարոն. Ամբակում, այսինքն՝ Կրեստս գիտել տուաւ, որ իր պայմանները ի գորտ կը մնան մինչեւ մէկ ամիս, որմէ յետոյ ինք պատասխանատու չէ յանձնառութեան, — եւ Բարի Սամարացին ժպտեցաւ իր ամենալաւ մէկ նկարը ունենալով:

Կարգը եկած էր Մամսունիին օփին մասները ծալելու: Հեզնոտ ծիծաղը աչքաշողին մէջ՝ ան պիտի գոցէր մատները մէկիկ-մէկիկ, կրկնելով գիմացիներն գիմախաղերը.

— Գովելի է ժողովականներուն տարած աշխատանքը եւ Կրեստսին հինգ-վե աւելի պայմաններուն խմբագրութիւնը. քսելիք չկայ. միայն կրնայի՞ք ըսել, թէ ովքեր ստորագրած են իրենց դաշնակիցներ Նոր Լօզանի մէջ, ինծի այնպէս կը թուի, թէ անգոյ այս պայմանագրութեան տակ ստորագրած պէտք է ըլլայ իր Գոնթ տը Վեթն...

Ինքզինքը կճուած զգալով՝ լրաբեր պարոնը մութ արտայայտութիւն առաւ.

— Վերաւորական է նման անունով կոչել մեր յարգելի գլխապետը, որ երկար տարիներ կը վարէ ազգին գործերը:

Մամսունի լռելիայն խոնարհեցաւ այդ փաստին առջեւ ու ըսաւ իւրովի. «Վրաս դիւ ազգային իւր ծառայութիւնը»:

Բայց Բարի Սամարացին արդէն ձեռքին մատները բռնեցք ըրած՝ կը բարձրացնէր ուղանէն եւ մէկիկ-մէկիկ բանալով զանոնք՝ արագ-արագ թրուել սկսաւ.

— Եղբայր, պայմանները խիստ նպաստաւոր են ձեզի. այսպէս՝ փրկման, ձեր պահանջած ամսականը ապահովուած է: Սքանչելի լաւ տրամագրուած են ձեզի հանգչող: Թիւրսօ. դուք կ'ունենաք լրիւ ցերեկները ձեր արհեստը մշակելու — անշուշտ գրականութիւնը արհեստ է, չէ՞, — Գոլաթրօ.

ինքնաթուղթ նարկը մեծ հող մը չէ։ Կ'ըսէիք արդէն, թէ մէկ-երկու ամիսէն դայն կ'ունենաք ձեռքի մէջ։ Իսկ սէնֆուանքօ. մարդուս ակորժակը ուանելով կը բացուի. կը բացուի. ժամանակը կը հարթէ ամէն բան եւ դուք ամսականի յաւելում ալ կ'ունենաք ետքէն...

Հրատուին ձեռքը կրկին բռնեց զարձաւ ու ցցուեցաւ Մամտունիին նայուածքին դէմ։ Մամտունին արհամարհելով դայն մէկդի բրաւ։

— Թէ որքան մարդոց միտքը կարճատես է, այդ յայտնի կը դառնայ առաջին, ձեր կոչումով՝ փրիմօ յողուածին անհեթեթեանէն. բարեկամս, դուք շատ լաւ ըմբռնած պէտք է ըլլաք, թէ պարոն Կրեսոս, իր առաջին յողուածով՝ տապանաբար մը քաշել տուած է արդէն հարցին վրայ. ճիշդ այնպէս՝ ինչպէս Դանտեկեցիները ձողանի մէջ շրմաբար զետեղած են Հայկական հարցին վրայ...

— Չարժանախօրէն յոռեան մէկը կ'երեւիք. ձեզի հետ դորձ ունենալը անկարելի կը թուի, — ըսաւ Բարի Սամարացին, բայց ժպտեցաւ կեղծաւոր։

— Գլանիկ մը կ'առնէի՞ք։

Մամտունի ոտքի ելաւ։

— Ո՛չ, շնորհակալ եմ, — Մամտունի ժպտեցաւ. ինք չէր զարմանար, որ այս տիպի մարդիկ կ'ընան՝ վերաւորուիլ իմաստականութիւն ծախելով։ Իրենց ըրածը արջին ըրած լաւութեան պէտք էր բան մըն էր՝ ճանճապանութեան մէջ. զորքը շտկելու տեղ, ուսմբ դրած-քանդած էին, յոյսն ու հաւատքը իր մէջ հանդէպ բոլոր բարի սամարացիներուն։ Եւ, առանց մնաս բարովի՝ զնաց դուրս վաճառատունէն։

7. ՎԵՐՋԱԲԱՆ

Մամտունին, որուն անունը ոչ մէկ անիթով չ'անուցուեցաւ, ծանօթ առնուն մըն էր։ Պարոն Կրեսոս եւ ժողովական պարոնայք շատ լաւ հասկցած էին զիրար։ Մամտունին կրնար իրենց դէմ խոչընդոտներ ստեղծել, փոտութիւնը երեւան հանելով։ Եւ վարուեցան մարդավարի, այսինքն՝ իրենց նման մարդոց պէս։ Մանրանկարային նմանութիւն կար այն մեծ Դատին հետ, զոր ազդր կը կոչէ Հայկական Դատ, արդար, բոլոր ոչ-գանկալի՝ Դանտեկեցիներու համար. իրենց հացին իւղ չ'ըտող խնդիր մը։ Մեր փրկիչները Մամտունիին դատը պատէ պատ տունն եւ անպարտ հաշակեցին պարոն Կրեսոսը։

— Մենք ի՞նչ կրնանք ընել. պարոն Կրեսոս չարչի մարդ է...

Այսպէս յայտարարելով, անոնք տապանաբար մը դրած կ'ըլլային մեռած յոյսին վրայ, թաղելով ամէն լաւատեսութիւն։ Հոն այդ տապանաբարին վրայ կարելի է կարդալ հետեւեալը.

ԱՍՏ ՀԱՆԳՁԻ ՀԱՒԱՏՔԸ

Պէյրուք,
1 Մայիս 1978

ՍՄԲԱՏ՝ ՓԱՆՈՍԵԱՆ

Յ. Մ Ա Ն Ո Ւ Կ Ե Ա Ն

Ambiance

Ահա այսպես ցայգէ ի ցայգ
կ'ալեկոծի նայն երկիւղը արեւալիքի,
որ օրերու երազանքը քաւշանիւս
կը ջլատէ բոմբիւններով հրասանդի:

Շուրջն մարէն նայն երկիրն է,
շամանդազուած նայն խոհերով մաեատանջ,
որ կը պահէ դեռ սրտին
բեղմնաւորման քարիքներէն ամլացած՝
ցաւոտ նայն վերքը հողին...

Բնագրային նայն մուլցֆով ոխակալ
թէժ կերպարն է մարդկութեան,
որ կիսաւեր երդիքներէն քաղաքի,
կը ցուցադրէ տեսիլներով յարափախ
վայրենութեան երանգներով երկնուած՝
պաստառներն իր մահադրոշմ:

Նայն քաղաքն է հնագեղ,
արիւմաշիք նայն մայուածֆով,
նո՛ն խոցերով մշտադուր,
ուր աստուածներ քնախառն,
իրենց հեւքին մէջ ցասկոտ,
վերափոխուած հրթիռներու հրաշէկ՝
մայրիկներու դարանաւորոյր շուրթերէն
սէր եւ օրհնամբ կը հնճեն...

Վարժ են աչերն իմ սակայն,
մթնոլորտին այս անեղ,

գոր ետ կ'ապրիմ
սնկակտեղի գոյավիճակ մը իբրեւ,
կսկիծներուս հետ մոյնացած՝
գերը վաղեմի առքնչութիւն:

Վարժ եմ արդէն փողոցներում տրամաշուփ,
ուր կը շրջին խորհուրդներով գիմափռի,
հազար դուրս անանցագիր
եւ մենգութիւն անդիմագիծ,
ակամեղով երգը լազուարթ՝
բաղձամբներու ոսկեշաւիղ աշգարացին:

Վարժ է հոգիս կորուստներու ապաժամ,
տեսիլներս!
որ կը խամրին անարեւ
մեռած յոյսի անքններում.
խորշակներու՝
որ կը խեղդեն, ցայգ յա տիւ,
խղճմտանքի ձայնը գուլալ,
իմացութեան քառը ներհում...

Համայնասփիւս գիմովութեան մէջ ցաւի,
ես՝ բերկրատու երազներու օքելան,
ընկալումիս մէջ անայց՝
կարօտներու անօքելան
մահանուագը կը զգամ...

Ես՝ յեղիեղուկ վիճակներու բնակիչ,
մերթ կը ձուլուիմ քափօրներու հարսանեկամ,
որ կ'ընթանամ
յուզարկաւոր տեղանքներու զուգահեռ,
եւ մերթ մեռած ծիծաղներու
կ'ողբամ զօղանջը անդարձ...

Շառաւիղն եմ դարձած կարծես
այս վշտակիր մթնալուսին,
ցայգէ ի ցայգ իր հրայրժով քրծուած
եւ ջրդեղուած գոյամարտովը խելառ,
զոր կը մղեմ տառապանքով անձամբ
եւ կը կրեմ ռզորումով անտրտունջ,
իբրեւ անէծք անմեկնելի...
Հո՛ս է կարծես,
որ յուշերուս ներաշխարհը հրատեմդ
կ'աբմատամայ, եղբերք առ եղբերք,

մթնոլորտի՛ն այս աւեր,
չցանկալով ո՛չ մէկ ցնորք հեռալոյս,
ո՛չ իսկ ոգի՛ն՝
գրգանքներու բարեյուսոյ հրուանդանին...

Եւ արիւնով ռւ մոխիրով նշխարացած
այս ափերուն մահապարտ,
ուր հրակուլ համազարկը ռումբերու
կը կերպարէ ամէն բնայէ
դար մը տաժամք,
դար մը արցունք,
եւ կը շնչեմ
հակատագրէն ինկած բաժինն այս դժնէ՝
եղբրականչ հազար երգի,
եղբրատանջ հազար սրտի մոլեգնութեամբ...

Եւ կ'ընդվզիմ մերք մշուժով անգիտակ,
սրբաւիրքի ժանիքներէն սրախայք
քարունակուող իբրեւ անի՛մ
եւ աչքերուս վիշտը բոսոր
ազգամուղթին մայրիներու՝
կը տազնայիմ իբրեւ մէկ տարրն հարազատ
տարերագոր այն չրկումքին,
որուն շունչով ծիածանուի՛, հարսնանա՛յ
մարդու հոգին կարեվէր՝
Մարդեղութեան խորհուրդին
Եւ ողբունէ՛ հանգրտանն իր վերացման՝
հազարդութեան հետ կենսախայտ Գալիէի...

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Թ. Օ Շ Ա Կ Ա Ն

ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆ

Դուք գիտե՞ք Անգա Կէօրկէօյնան:

Բայց կ'անգիտե՞ք տրտում պարզութեամբը յուզիչ միւս պատմութիւնը, զոր դրելու պէս ապրեցաւ անիկա, ընելով ինքզինքը հովանավիպական ճշմարիտ հերոս մը: Ձէր գիտե՞ք, թէ ինչու սկըսաւ: Բայց շատ լաւ գիտե՞ք, թէ դէպի ուր կը տանէր, երբ մտաւ ճամբան, հայրենակից աղջիկ մը, Պոլսոյ թերթերուն մէջ գրական իր մուտքը բրած, ապացոյցը տալով մեծ ընդունակութիւններու, հանրային հանդանակութեամբ ինկած Փարիզ՝ հետեւելու Սորպոնի գրականութեան դասերուն: Տաք էր ու պարզ այդ աղջիկը, քիչ մը շատ զգայուն, պոլսական փափկութեամբ ու հայու գորովով: Օտարութեան մէջ անիկա կը ներկայացնէր Արեւելքը, անոր զաղջ դալկութիւնը ու զգայուն բոլոր դարձարանները, այնքան տարբեր Արեւմուտքէ յախտեցական իզակամէմ: Աւելին: գրելու շնորհաւոր շնորհ ու տիրող տուրքեր: Սահակ Պարզեւեան, որ տարիներով ուսանող մնաց անգոյ գիտութեան մը, անոր հետ իր շփումներով արծարծեց սրբազան հրայրքը, անոր շատ Արեւելք ու Փարիզի համար գրեթէ տարբեր կրթնայ համը ու կուտութիւնը expertի մը վայել դժուարահամ զնահատումով ու փարատողը իրագործեց զայն իրեն կապելու, ամէնէն շատ արհամարհելով անոր արուեստագէտի խառնուածքը ու ճիշդ ատոր համար զայն խորապէս նուաստացնելով, իր անձին տնկարելի անկումներովը, ազարտող ու ստորին, որոնց համարձակելու քաջութիւնն անդամ սարսուռ կու տար օրիորդին: Բուռն, միամիտ, գրականութեան ուսանողունին առնուեցաւ անոր հուրքէն ու եղաւ խաղաղութիւնը իր ու անոր քննադատներուն: Գրադէտը, այն ժամանակ երիտաւար դիպող, ձգելով քառասուննոց կիներու անկողինը, անոնց ներկուած միտերուն կծու, քիչ մը աշխած միտերն իսկ լուայու, տնկետելու անփոյթ՝ իր մարմինէն, կու գար ճշուացուելու անոր աշուկաներուն ոսկի լճակին մէջ, իրական ջուրի զովութեամբ: Առաւ անոր կուտութիւնը քիչ մը խղճահար, քիչի՛կ մը, հարուստի մը պէս, որուն իր մէկ աշխատաւորը իր պարտէզին երախայրիքը կը մատուցանէ ու կը հրճուի ատոր համար: Բայց ինչ որ անասելին է այս արկածին մէջ, Պարզեւեանին անբժրունի վատութիւնն է, իր մեծութեան վայել այդ նուէրը կնիկի մը շատախօսութիւնները հոս ու հոն պատմելու, առաւելապէս իր շրջանակէն, դրագէտ կամ գործիչ, որոնք թաքուն հրճուանքով պատմումը գեղազարդեցին: Կը հպատակէր, աւա՛ղ, նախանձներէն ամէն հզօրին, գրականին, երբ ուրիշ ամէն անկողինէ խլուողի պէս լուռ, ու աստով կիներուն ծօտ վարկ ալ վայելաղ երիտաւարը վիպողը կը դրուագէր արկածին իրագործութիւնները, մանրամասնութեանց բացառիկ հանդէսով քւ իրողութիւնները

կը գետեղէր անհերքելի լոյսի մէջ: Անոր ընկերներէն մէկը, որ թերթ
ունէր, ազգային դասը հետապնդող ու հետապնդող նոյն տօնն թարմ
սյուսուհին, շահագործեց «պատահարը» որովհետ ու բամբաստան քրո-
նիկի մը մէջ, լուծելով զոյգ հաշիւներ, Պարզեւեանէն՝ զայն ներկա-
յացնելով «անստգիւտ» հրէշ, որ չէր վարաներ իրեն մօտեցող ամէն
աղջիկ հեթիմի գեւերուն նման հում-հում պատառել, օրիորդէն՝ որ
Սկիւտարի մէջ լաթ լուացող, քայլ միւտ քարձրադահ իր մօրը պա-
տիւը հոս, հեշտութեան քաղիններուն վրայ կու տար կրակի ու աղ-
գին գրամովը փոխանակ միտքը զարգացնելու, զգայարանները կը
հանձնէր ու հտպիտ սիրահարներ կը պարենաւորէր: Սահակ Պար-
զեւեան անշուշտ գիմաւորեց յարձակումը, զօրաւոր, ամբողջ, բիր-
ղացած թոյն ու անկրելի գարշտիւն յօդուածով մը «նշխար», «սու-
սակասպաս», «անյոյզ», «գաճաճ» այդ մեծամտութիւնը տապալելով
հեշտագին խորժանքով ու իրեն յատուկ անսրտութեամբ մը քայքայ-
յելով ուռուցիկ փառքը այդ «էրած» սրտին, փոխադրելով պատահա-
րին ծանրութիւնը տեսարանի մը վրայ, որուն մէջ «կոնակահար» այդ
ոռորունը կը դրուէր դուրս օրիորդ-երամեանին սենեակէն, գրեթէ ա-
յացի, ու փակելէ ետքը հաշիւը իր վրէժին, ու յուսակտուր՝ օրիոր-
դին այդ շարախօտութեամբ դադրած պարէնէն, անցաւ իր տունե-
րուն ծոցը՝ զինքը աւելի ճոխ, աւելի պարարտ բուծանդեներուն:
Այդ վերջաբանը՝ հետեւողական Պարզեւեանի կեանքի դնացքին,
կանխուած է շահեկան ուրիշ միջնարարով մը: Պարզեւեանի բոլոր
սիրարկածները զգրական-հոգեբանական փորձեր նկատուեցան հեղի-
նակին կողմէ: Մի մոռնաք, որ անիկա հիացողն էր նախապէս Պուր-
սէի, յետոյ Միրզոյի: Ըստ այս նախասիրութեանց, անիկա կը բա-
նար հովուերգութեան վարագոյրը, գրական fiction մը կատուցողի
ալլուրութեամբ, աւելի ճիշդ՝ հոգեբանութեամբ, զինքը վերածած
դասական հերոսի մը ԺՁ- կամ ԺԷ. դարու Փրանսական տախտիկ
բերթուածի մը, ու դարգացուցած «թատերական դորձողութիւնը»
ԺԹ. դարու տիքէրմիմիստ տեսաբանութեամբ «ներկուս» վարժապե-
տի մը նման: Իր սերունդէն ոչ ոք անոր չափ եղաւ խառնածին, հո-
գեկան յօդուածով: Դիտող, ինքը այդ պատահարին մէջ, կարծես
ուրիշ մը բլլար այդ ինքը, եբք կը մտնէր իր անձին հետ անոր սեն-
եակը, հանելով իրմէն սեռին եւ հացին նոր օրերու մութացիկը, խոր-
թի մը պէս ու ընէր ինքզինքը հին այդ դարերուն ապակտներէն մէ-
կը, վեր՝ հացէն ու սեռէն, հարուստ՝ իր սիրտով ու դերով, ու նա-
խասահմանուած՝ կիներու փոքր սիրտին մէջ զարկը փորձելու յաւի-
նանական զգացումին: Ինչ լաւ կը նուաճենք երբեմն կեղծիքը: Անի-
կա իր ձեռքերովը կը հագուեցնէր օրիորդը, կը կամթէր թեթեւ, գու-
նաւորելու համար հատած անոր մորթը ու կ'առաջնորդէր Պուլտների՝
անտառը, պատրանքը դռնելու հին այդ քերթուածներուն աւելի հին
տեղորին ու համբուրելով ոռւտ իր սիրովը, անոր մաշկը, ննք,
շար, ինչայո՞ղ՝ խուսափող բերնէն կամ ալտերէն, — իր նախասիրած
ԽՍԵՆԵՐԷՆ մէկը կիները գրպուելու: Կարծես ուրիշի մը վրայ կա-
տարուող փառքը խաղարկութիւն մըն էր ասիկա: Մինչեւ որ
նոր սրտին «անապակ», «բիւրեղ», անմարդկային շորութիւնը: Ան-
շուշտ շատ եւ մեր մէջ պահեր, որոնց վերադարձը չուզէինք պիտի,
այնքան, անոնց մէջ, մեր կորանքը բացայայտ է ալ մեզի: Կան մար-
դեր, որոնց հանգիստը երկիւղադիթ է մեզի ո՛չ թէ իրենցմէ մեզի

Հասած մտանգին կամ վիշտին համար, այլ՝ այդ անձներուն իսկ հաշ-
ւոյն: Ու կան մեր մէջը խորհրդափութներ, որոնց յանդգնելու մեր յի-
մարութիւնը զմեզ ընդմիշտ կը կործանէ: Իր մայրը ուրիշի մը թեւին
մէջ բռնող աղջիկը տեսածէն աւելի պիտի տառապի յիմար այն հետա-
քորքորութեան, որմէ բռնափար անիկա բացեր էր դժբախտ դուռը
դիպուածին ու եկած դէմ դէմի դժբախտ պատկերին: Պարզ է առա-
ւել, թէ մենք ենք զործաւորը մեր տառապանքին: Բայց չենք կրնար
հերքել զայն, երբ կը հաղնի սիրողի մարմին մը ու կը պտըտի մեր
դէմը, մեզմէ օտար, մեզ ատող, բայց մեր անկողինը կիսող: Օրիորդ
երամեան յծեռաւ անշուշտ կեկիծէն. բաւական արուեստագէտ էր յա-
նելի, այդ յիմարութեամբ նուաճուելու համար, ինչպէս տեսեր էր
յեռնիլը նկարչութեան ուսանողուհիին, Անգա կէօրկէօֆային: Բայց լուրջ էր իր հանդիպումը կեանքին մեծագոյն պատրանքին հետ.
սլարմանութեան ընթերցումները, ժամանակակից յուզումները կատե-
լին՝ կ'ընեն այդ պատրանքը սակեզօծելու: Գիրքերու մէջ այնքան խո-
յուրթիւններու տարուած այդ վիճակը: Ուրիշ ի՞նչ է արդեօք անիկա
մենէ շատերուն համար, եթէ ոչ՝ այլիք մը, ուրիշներուն նման, որ
մեզ կ'անէ վրան, կը տանի հանգրուանէ հանգրուան, մինչեւ մեր
երկու կանգուննոց փոսը: Ուրիշ բան ինչ որ կրնանք են անուաներ
տրգանքեր ու հովիւները, իմաստասէրն ու զեղջուկ սրնդահարը:
Բայց ա՛հ է կեանքը երիտասարդ աղջկան համար — տալ ինքզինքը
եւ ստանալ փարթաւ ամալուքիւ: Խոր կսկիծով տարացաւ անիկա
իր ուժերուն փոքր կծիկին մէջ ու թողուց, որ անցնի փոթորիկը:
Զպաղատեցաւ անոր, ինչպէս կը բանաձեւէր այնքան յաճախ, երբ
մայր առանձին իր վիշտին հետ: Ափսոսաց միայն զեղեցիկ ծրուդի-
ներուն ջախջախումէն, որոնք շինուած էին միջին անկողին տանող
կարծ չընէին ընթացքին եւ կը կրկնէին ըստ ինքնապատիր սուտերը,
որոնցմով կը պատմուճանուի սեռային շատ պարզ բնագոյն ու մեզ
իսկ խաբելու չափ մեր կարողութիւններէն: Երբողէի՞ն պիտի հիմէն
մեր զրակհանութիւնը: Այնտեղէն պիտի բով քովի, ու պիտի ոտեղ-
ծէին մեզի պակասող իմացական ազնուութիւնը, ազնուականութիւնը,
տանելով մեր արուեստին սահմանները շատ աւելի ետ, դէպի արձա-
կութիւնները մեծ ազգերու քաղաքներուն: Արեւմտեան ողիւն
անձնական մեր բնագոյններուն վրայ յաջող պատուաւորով մը՝ անոնք
պիտի տային օրինակը նոր հայերուն, խոր ու լուրջ, զգայուն ու խո-
հեմ: Մինչեւ անկողի՞ն, ճամբան զարգարող այս ծաղիկները ինչ շուտ
կը փոթին ու կը տարբերին աշխարհին միւս ծաղիկներէն, անո՛վ՝
որ ա՛յլ անգամ մը չունին բուսելիք նոյն կէտին վրայ...: Իր խաբ-
ւելէն յետոյ միայն հասկնար պիտի իր առպիտին կրաւորական յօժա-
րութիւնը ու պիտի տարաժէր մարդէն, որ ոչինչ կրնայ ուղել բացի
միւսէն ու իացէն: Անիկա ազատեցաւ տապնապէն՝ վրայ տալով զոյգ
կուտութիւնները: Գիտէք մէկը: Մի՛ւսը՝ երազկոտ աղջկան խանդա-
վառ ու զօրեղ կամեցողութիւնը: Գննադատը այս կործանումները կի-
սերտեղ հեղուութեամբ կը դիմաւորէ իր կիսաապիտակ մաղերուն տըր-
տում շուքէն անգամայն յոյժ ու չի կրնար արգարացնել մատաղութիւն
որակուած վիճակը, իր լիութեան մէջ: Օրիորդ երամեան միջին ինք-
զինքը գտնելը, զօպիացումը, իրմէն աւելի անոր սպասող ճակատա-
ւրին անդունով տառապեցաւ: Անիկա կը սարսուար հանգիստօրէն իր
եզրակացութեանց ալ համար: Վաղը, ճարտար գող մը, այդ երիտա-
սարդը կրնար մղել նոյնիսկ ոճիքի, հերիք է, որ խնայուէր զործե-

լուծ ճիշդ: Անիկա պիտի ապշէր անոր ընդունակութեանց անորակելի բողոքականութենէն, կարգալով անկէ ստորագրուած վիպակ մը: Որուն մէջ իրենց պատահարը խորք կը ծառայէր գոհ՝ կ'պատումի, բայց կը տրուէր անկարելի անդթութեամբ, լուսին հանելով շատ առեւելի տրտում բան, քան ինչ որ համարձակած էր կասկածիլ ինքը, առնոր հոգիէն: Վիպակին հերոսուհին կը կրէր արտաքին յարգարանքը, հարազատ հոգեդիծերը օրիորդ երամանին, բայց այն դիծերը, որոնք գորտէն տեսանելի, տեսակ մը լաթը կը կազմեն մեր հոգիին, բայց չեն գայն: Ունէր ատկէ զատ անփոխարինելի վաւերականութիւն մը, զոր առօրեայ չփումը, երկարատեւ մտերմութիւնը կը դիպեն մեր անգիտակից աշխարհին նեարդներուն ու կը գատեն իրականը մտայնածինէն: Բայց աւելի տարօրինակը: Հերոսուհին ունէր, ատկէ զատ, երկրորդ հոգեյատակ մը, կազմուած՝ տարրերովը Պարզեանի հոգիին, կեղծ, ամբարիշտ, ամայի ու բող այն շաղախով, որ ծածկուած կը մնար մեծ արձակագիրէն, քնարակի զօրեղ հաւատարմութեամբ մը: Ինքզինքը կրկնելու անոր դիւրութիւնը — ուրիշ բան չէ, վերջին վերլուծումով, գրագէտ օրակուած կենդանին — բացառիկ զգայնակը չէր այս յաջողութեան: Անիկա այդ պատմութեամբով կ'իրադրէր, ապրող մարդոց վրայ, սիրտը գիշերուան մը մէջ, խօսակցութեան մը զլիսուր գաղափարը, սեռը կարենալ փոխելու անգարարութիւնը, զոր չէր ըմբռնած, իր միտմտութեան մէջ, օրիորդ երաման: Անյուր գրաւ, շահուած՝ անոր հակայ տաղանդէն: Անգ, ընթերցումէն յետոյ անիկա հեղ մըն ալ ափսոսաց ահաւոր անոր տաղանդին, որ լաւ հակուած, զեկակարուած՝ գայն կարող էր վերածել մեր դրականութեան գերադոյն վիպողին, ուրիշներու հոգին այդքան խորութեամբ, իրականութեամբ, հարազատութեամբ ընդդդկող է: արտաքինող, եւ որ, կեղծ իր կենցաղին հազար ու մէկ նանիւր կամ գոհ՝ կ'իմացներուն մէջ, պիտի ծախուէր, մանրուէր ապարդիւն, փշուռելու համար անդարման քաջայումի մը աղէտին ծոցը: Այդ շատ անգ զիպակին մէջ անիկա առած էր իր արուի հոգին, ճերմակ մաղ ու չըջաղեալ հազնելով անոր: Ինքզինքը այսպէս ճորթաւորելէն ետքը, անիկա խորտակումը զարգացուցեր էր, հերոսուհին մէջ ճարտեստի կորովի ու փարթած զգայարանք մը մատնանշելով, որպէսզի այդ իսկ տուրքով, վերածուէր անիկա զգայարանողը հետաքրքրութեանց կողմնացոյցի մը, «հիւանդ», «տպականած», «մութ ու խոնաւ», ընդհանրել տալով անորակելի ուրիշ ալ զգայութիւններ, բանի որ անկարկովի ու տառացի ալ գայն մօտեցուցեր էր Սաֆուին: Այս ցնխահատիկներով գրուագուած, առողջ ամէն արուի համար այդ շրջումը խելութիւնը զգուշի պատկերելէ ետքը, խոր վերլուծումով վիպակը կ'ընթանար անխուսափելի իր վախճանին, ա'յնքան՝ որ իր կուսութիւնը, օտարման տակ, ընդունող ուսանողը, անվերադարձ գայն կը նետէր դուրս իր մահիճէն: Զգայութիւններու, աղէտի լուծումը, հոգեկան դրախտի այսքան յաջող պատկերացում դժուար իրար կը գտնեն: Բաժնուեցան անոնք իրարմէ, Ժորժ Սանի եւ Միւսէի յիշատակին մուսլ ուրուացումին ներքեւ:

— Քաղցկեղ է քու հոգիդ, — պոռացեր էր անիկա, թքնելով երեսին, երբ տեսեր էր իր պատմութեամբ անոր դրպանը:

— Գուկդ ալ սնուցր, — անկարկելով ներկին, զոր սովոր էր գործածելու օրիորդ Երամանը, իր քիչ մը սփռոյն գէմքին համար: Ոնկ աղբիկ, անկարող պիտի ըլլար հանգուրժելու քողերուն

ձեռքով ջոգով խնայելով, այդ պահանջներն էլ, վատաբերելով, խոնարհ լըր-
բուրելունը: Տան աղջիկներէն՝ դէպի աղիճները: Աւ փոխադարձաբար:
Գիտէք, թէ ուր գնաց մէկը:
Միջոցը:

— Այս պատմութեան պնդողին մէջ ալ տեղ չունի այդ միւսը:
Ու լաւ է, որ ձգենք զինքը իր ճամբան: Անշուշտ մեղքըցուելիք աղ-
ջիկ մըն էր ան: Տարիներով անիկա սուգը պիտի կրէր ճանդարանիկ
այդ հերկումին, զոր պիտի չմոռնար նոյնիսկ գլուխը ուրիշի մը կա-
պելէն ետքը, որ, տյա տնգամ հակադիր մարդէն, չհասկցաւ զինքը,
բայց թողուց ազատ: Իր ապագայ վէպերուն մէջ, Տիկին Յովնան-
եան աշխարհը, մարդերը պիտի տար այս երկու հակադրութեանց
կամարէն: Անոր արեւները այլայլուն ճղան Պարզեւեանին մեծ, բայց
անզգամ շուքէն, այնքան անիկա ազդուէր էր փարթոմ, ոսկեհա-
մուկ, էգ, աւաղի պէս անյարիւր այդ ցեխոտտանէն: Անիկա միւսեց
պատահաբար Անդա Կէօրկէօյնային, որ զաւակովը քաշուած էր հիւ-
սին: Աւ դրաւ իր ողբերգութիւնը պատկերին տակ խաբուած աղջը-
կան:

Սուհակ Պարզեւեան կիները այս կերպ գոհելու գիտաւթեանց
մէջ չէր գնեւ գրականութիւն, սակայն անխնայ ռուսական ուրիշ
որակներ: Ամէն ինչ պարզ էր անոր վրայ, երբ կը քաշէր դոժա-
նութեան կիսադունտէն: Ամէն ինչ անպատուակ կը թուէր քիւի:
Բիրտ՝ ինչպէս ծնածեքուն, հաւասարապէս՝ ինչպէս եղած էր կեան-
քը հանդէպ իրեն: Վերջապէս ծնելիք մարդ մըն էր անիկա, ինչպէս
կը յայտարարէր, անդիտակից ու խոր ինքնութեան մը պահերուն,
խորհելով անշուշտ, զապառապուած արձակութեամբ, կիներուն եւ ու-
կիին, որոնք է կաղմուեցաւ արու մեղուններուն պզեպ հեթաթը: Հի-
մա, որ թաղաւոր չէր, ու չէր մարդ թմէնուն նման, ան կը ջանար
այդ զկատարածքներով հակադրուել հոգեկան իր մեծութիւնը, ինք-
նիւրէն, իր սարսափէն անծածկելի՝ ինչպէս անդիտակից զանա-
թիւն: Մեծանա՛լ ու անե՛լ: Այդ էր պատմութիւնը գուցէ, որպէսզի ա-
տէր անիկա տարիներով, այրելը մանաւանդ, արոնք իր հետաքրք-
նէքէն չունէին աղդուելիք, բոլորն ալ դէլ-աղէկ ձեւ էին ճարած հա-
ցի ու խուլ իրենց սենեակներուն մէջ չէին ճուար, իրենց սերմը ծա-
խու հանելով իրենց փորին հաշիւին: Ձուր հեղնէր պիտի իր ընկեր-
ները, անոնց զմարմնակործան երկրպագութիւնը՝ ոսկի հորթերու
նորին հանելով քնարական պարսաւը ու չէր մո՛լնար իր երկրպագու-
թեան համար աւելի պղտոր հորթերու առջեւ: Ձուր անոնց գրական
միջոցները թաթիւեց սեւ թակոյկի մէջ ու անոնց հացի սաճէն պատա-
ռին հաստատելը պարտեց կեղծիքին կարագին: Անիկա վնասեց աւելի
իրեն: Վասնզի հեղեղահտէ, կրկնուելով-կրկնուելով, հոյակապ այդ
արձակը միւրաճուեցաւ առակի հոփիին կանչին: Բայց անոր կրունկ-
ները ծեծը կ'ուտէին, քիչ մը շատ յաճախ, հացին մուրճերուն: Այդ
մղձաւանջն էր, որ ստեղծեց իրմով, զանօթի կզակներու սարսափը,
ուելի ճիշդ՝ քաղաքակրթի ոստաններու մէջ այն տիպարը, որ պար-
սաւոր է իր հացը «որսուլ», ու այդ որսին համար յոժարիլ ամէն պա-
րտաւթեան, նոյնիսկ իր անձին, ինչպէս սրիւնին վրայ: «Երկայրի»
իր ժանիքները երբեմն կը կարտէին սեպհական միւր ու կ'ուտէր ա-
նիկա իր տաղանդը, շատ անհաւաղ օրերուն, ծախելով իր տաղանդը
անանուն գրչակներու, գլխաւորաբանելով ողորմելի դրժոյկներ
տիտղոս քաշիւնով աճուրդով ու հանոնաւոր, վճարովի լեցնելով

երգիծաթերթերու իսկ տիւնակները, գիշերով իր ստորագրութիւնը տնոնց արտօնատէրերուն ու քառասունէն վեր անոնց քոյրերուն ալ իր տունութիւնը, «եղով-մեղրով» չոտուելիք տուն-մնայ այդ սողլիկները նուազագոյնով խորապէս՝ փառաովը իրենց արգանդին սղեղուն-թեան: Հասկնալի է, որ նուազագոյն այս անգուշդէն ասէր անիկա նաեւ իր հարազատ բարեկամները — բալորն ալ ոչ-գրող խաւերէ — որոնք կը սիրէին յախուռն, պերճ իր վերադիրները, ճառերը եւ լըր-բութիւնը, կեղծիքը իբր կեղծիք հագնելու, անկէ չզանելու եւ փարի-սեցիները՝ ինչպէս փղշտացիները անխնայ խարանելու: Անոնք էին, եղած էին իրեն օգտակար զբաղիւ եւ գործով»՝ անոր ամէնէն յուսա-հատ րոպէներուն, որբելով անոր ճաշարանին պարտքը, միջակ ու-րիշ ճաշարանի մը վրայ քանի մը ամսուան համար վարկ բանալով, միշտ զի նշան հիացմանն ու անկեղծ պնահատութեան: Կ'ընդունէր այս ընունները — կա՞ր բան մը, որ արժանաւոր նուէր չըլլար, զիջուած անոր տաղանդին, սիկառի տուփէն մինչեւ աղջիկներուն կուսութիւնը — ու կը ժողովուէր ո՛չ թէ ամէնալուսն, այլ՝ այսքան սպասակալան, այսքան անկայուն ու նիւթակերպ զնահատուելուն, ի՞նչ՝ հայերուն Սուրբիթը, խարանողը, խարազանողը, Եղիան ու Ե-ղեկէլը: Կ'ըմբռնէր մեծ անուններէն Հիւկոն, ո՛չ թէ հետեւելով այդ օրերուն անոր գէժ յարուցուած արժեքիկող մտայնութեան, այլ հառ-տատած ըլլալուն անոր ու իր մէջ կեղծիքի նոյն ծիածանը, որմէ հո-վանաւոր, «կամարաւոր», այնքան հաճ ինքնախաբուսով երկուքն ալ բոնա իրենց ժողովուրդներուն ճիւղ հակառակը իրենց զգացումներուն եւ գործերուն: Այս խելամտումը, սուտին եւ նանրութեան ջու-րերուն ընդմէջէն իր նաւը վարելու ճարտարանքը անիկա զգուշացաւ հրապարակելէ, ի՞նչ՝ որ չէր կրնար, իր խանդին մէջ, պարզագոյն զգացումներն անգամ հետտուրել, Մինչեւ եղունգներուն ծայրը գրա-զէտ էր ան, այսինքն՝ նանրամիտ, մեծամոլ ու սղու չափ յիմար: Ու գերասան չէր գատեր ինքզինքը, երբ կը պոռար նահատակութիւ-նը իր տաղանդին: Ու զի ծայն փողոյ եւ թմբիկ, ուր որ կը հասնէր ուժը իր հազագին, անիկա կը պահանջէր սղեղն, որ հասկնային վերջապէս ճահաւոր մեծութիւնը՝ իր տաղանդին ու զայրապնած իր կաշիին մէջ ուսած թթու մածունի մը նման, ան կը հայտնէր անոնց իսկ, որոնք իրենց հացը կ'իսած էին անոր հետ: Ու կը թուէր կարգալ բոլորին գէժքին՝ իրմով գոյաւոր խորունկ արգահատանքը, զոր մեր անկումը կ'արձագանդէ մեր շուրջը: Պարագայական սաստկացումնե-րով ու թուլացումով, բայց միշտ ալ անհուն զանաւորութեամբ, անիկա վարժուեցաւ ալ տեսողով, զաղտուք փախուստին, զոր մարդիկ կը փութային ճեւեակերպել, իրեն չհանդիպելու, չտեսնելու զարնելու, «երես» չըլլելու քաղցնի հաճոյքով, ազատելու համար հաւանական զլիարցուէ մը: Մեր քաղաքակրթութեան այս զստածումը, իր բառու-վր՝ այլատեսումը, անոր մզմաւանջը մնաց ու ցաւին վերագոյն գոր-ծիքը: Համազամ կերակուրի հանդէպ ու Միւս կերակուրին ալ հան-դէպ իր անկանգնելի տկարութիւնը զինք թափաւեցուց մշտական ֆաթիթի մը պէս, այդ քաղաքակրթութեան շուայտ սեղաններուն մարգերէն ու չեղաւ, չկրցաւ ըլլալ մարդը, որ քանի մը կանգուն աշ-տարակ մը բարձրանալ ուղէր, հոնկէ թքնելու համար այդ «կաւատ» հաճոյքներու համանկարին: Այս ամէ՛նը, երբ աղքատ էր անիկա:

Ինչ որ այս արագ յեղումին մէջ անցաւ վերլուծումը անոր շունեցած նկարագրէն ու հոյակապ տաղանդէն, բաւ է սեւեռելու ա-

նոր գիտագծութիւնը, հիմա, իր մահէն տասնեակ մը տարի ետքը (իր սեւ քախտէն, անիկա պիտի մնար նոյն խոռովի մարդը մահէն ալ անդին, այս անգամ գրական պիտակով), ըսել կ'ուզեմ՝ երբ լուծ են տնոր անձին շուրջը մտախնդր իր ժամանակին եւ վատ, թոյլ, սողոսկուն, ընդվզեցուցիչ խաչակրութիւնը դինքը չբաշտոններուն: Անշուշտ քան տարի մը վերջը կու գայ բերեղացումը բոլորովին: Բայց վէպ մը իրականութիւնը չունի այդ արկածախնդրութեամբ դրողելու: Նոյն այս վերլուծումը օակայն անբաւական է յստակ ընդգրկելու հիմնական տնոր հոգեկոտակը: Վասնզի անիկա փարատութիւն սիրոյն չէր, որ ուրացաւ ինքզինքը, այսինքն՝ հոգին, հոգի մը: Ըսի՞ ձեզի, թէ աշխարհը տեսաւ, տարադեց ու տուաւ իրր թատերարեմ մը համատարած կեղծիքի, աղպէ աղպ ու անհատէ անհատ: Իր զաւակը ուրացաւ հայրը, անոր ստեղծութիւն մէջն իսկ պիտի չվարանէր կեղծիք բռնաձեւելու, եթէ կարենար ինքզինքը հերքել ո՛չ թէ ուղեղէն, այլ, աւա՛ղ, միւս աննահանջ իր կէսէն, իր գառազեղումը անասունէն, ինք, սեռի սողորմը ու վայելքի ծանրամիտումը: Սահակ Պարպեան լրջութեամբ արտասանեց օր մը, հաւաքոյթի մը մէջ, տարօրինակ նախապատկերին մը, զոր չհասկցան: Ան ինքզինքը անուանեց Վնդիկի գըրաղէտ, խորապէս զայրացած մէկ կողմէն սրացաւ քարոզներէ, որոնք իր համակերները կը կործէին զլիսուն, միւս կողմէն՝ դեւ կարած պարկեշտութեան, առաքինութեան մարտկոցներէն իր դժբախտ ժեղքերուն վրայ ուղղուած ոմրակոծութեան համար: Իրե՛նք: Այսինքն՝ պարկեշտասուն տիկիները, որոնք իրենց ժեղքերը պուպրիկի պէս գիտէին խնամել ու ցոյցի դնել իրենց սրահներուն արժանի գեղօր: Այսինքն՝ զարգացած, բազմաշնորհ երիտասարդները, հարուստ կամ ոչ, որոնք կրննրը հայածելու մասնագիտութիւնը պէտք չունէին իրմէն սորվելու ու առնուազն իրեն յափ աղջիկի ցաւ ունէին իրենց սրտին մէջ թաղուած: Որոնց բոլորին ալ կաշիին տակ կ'աճէր աղբին ու ապականութեան համատարած խլիղը, «հոգին հեղուկ է», կ'ըսէր անիկա, մօտեցած բլլալու համար նիցչէին: Ու չբացատրեց ալ նախադասութիւնը: Հեղո՛ւկ: Անշուշտ: Որ հոմանիշ է կապալար, ձեւ շառնելու: Որ հոմանիշ է ամանին, որեւէ ամանի եւթարկելու ինչ որ մեր փառքին լաւագոյն տիպոս եւ մեր հպարտութեան դերագոյն գրաւականը կը կաղմէ քարի, ցիխի, փտութեան սաթահոսութիւն մէջ, երկիր կոշտած ժողովրդին վրայ: Արուեստը: — Բաջաղա՛նք, որով կը խաբուին ներքինները: Ի՞նչ կը մնայ անդին: Հարցուցին իրեն ու չլսաւ: Ամէնէն վատն էր անիկա իր տերունդին մէջ, վատ՝ մահուան դիմաց ու տակէ տակի տխուր, իր իսկ տաղանդին դիմաց, որուն վարուեցաւ այնպէս՝ ինչպէս վարուեցաւ սեպուկան զաւկին հետ: Զոր թողուց տարիներով անօթի, գործածեց նման ծառայի եւ լեցեց բոլորովին, է՛ն կորովի շրջանին, անցնելու համար զոյգութը բուծանելու: անվերադարձ հեղուկութեան: Այդ անձնաձիւր եռանդին մէջ իր կրկնակի կեղծ գրոհները ռազմախաղեր էին մահուան դէմ եւ պատրանք շունէր: Իր հետ՝ դինքը ճանչցողները:

Այսպէսով է, որ անիկա եղաւ այս վերլուծութիւն բոլոր շերտերը, կատարեալ ու հարազատ: Սեղի՛կ: Հեղո՛ւկ: Ուրի՛շ: Այսինքն՝ որքան մը բան շրջանին հոյակապ պատրանքէն անոր ալ մէջը: Անկէ՛սր իր սերունդը բաւ տնքան սրտառուչ, զոհուող, յիմար ու ոտմանիք: Ըսի՞ ձեզի, թէ անիկա սկսած էր զրկուել իրր երիտասարդ մը, առնուած՝ զվաղուան ձայններէն, սիրելով իր աղքը, որ դեռ

«բաղձնին» չէր ու հաւատալով անոր արեւին ու իր ալ ստողին։ Ի՞նչ էր քը։ — Ազրի՛ւր փոխարեութեան, մթերք՝ պատկերի, հոնտորութեան եւ գործարա՛ն՝ անփազի։ Եւրոպա՛ն։ — Նոյնը, քիչ մը աւելի ճիշդ՝ որքան չէր անիկա միւսներուն աչքին, որոնք անկէ սպասեցին նոյնիսկ մորթուելուն վաւերատիպ վճիռը ու յամառեցան անհանդիստ ընել Լրեսփոխաններ ու նախարարներ մեր քերթողներուն զեղեցկութիւնը պարտողրի փորձելով, որպէսզի սիրէին մեզ բռնի՛։ Ուրի՛շ։ Այսինքն՝ մարդկեղէն, սոսկական յատկութիւններ, գրողէն անկախ, որոնք մեզ իրաւ, համակրող, սիրտցաւ ու պարզ կ'ընծայեն նախ մեր աչքին, յետոյ՝ շրջապատին։ Բայց յարատիւր, առնուազն ամէնէն շնական տիպարը եղաւ անիկա իր ամբողջ սերունդին մէջէն։ Ու ամէնէն զօրախառը։ Անոր կեանքը կրնանք նմանցնել կեանքի հաստատեալին վրայ ճամբայի մը, բայց տարօրինակ, մէջտեղ եկած մեր օրերուն ասեղովը ու մեր գործերուն քրտինքովը։ Ըստ միջոց՝ որուն յատակը մշտապէս ծածկուած մնաց դրամին խիճերովը։ Զոր կտրտեցին, սեպ ու ասպառած, խեղդելու ատրիճան, անհուն ոլորքներ, օձե՛րը իր անկումներուն։ Երբեմն՝ արեւնի ու հրակայ պողոտայ, որ կալ կը դառնայ անդունդի մը շրթունքին ու կը վառի արեւին հորքէն։ Ըստ միջոց՝ մշտապէս հանգրուանուած՝ կիւներէ, տարիքի, ազգի բազմաբղէտ արձանակոյտէն։ Ընդարձակեցէք իմաստը այս աշխարհութեան ու դուք կ'ունենաք կոկծալի պատկերը կործանումին, որ անոր բաժինը եղաւ։ Սահակ Պարզեւեան, իր տաղանդին տարողութեամբն ու ուժգնութեամբը իր սերունդէն ոչ ոքէ կ'իյնար ցած։ Ամէնէն մեծերէն։ Անոր տուրքերը, զգայութեան ու իմացականութեան զոյգ աշխարհները, ուրիշ ժողովուրդի մէջ, զինքը կարող էին առաջնորդելու ամէնէն բարեբաւտ պատգամներուն, ճաշկատազրին։ Մեր մէջ՝ անոր կ'ապահովէին առնուազն տանելի փառքը, որ մեր յորելեարները կը մխիթարէ, մոռցնելու չափ զրկանքի, անօթութեան ահաւոր փապուղին։ — Կեանքը դրեթէ մեր բոլոր գրողներուն։ Անոր գրիչը, հազուադէպ գործիք, որ ուրիշներու մասին մէջ կարող էր խանդի, խորերէն վերբերուած թաքուն աւելի հրդեհներ փակեցնել, պարտաւոր եղաւ կշռոցը, ուղղիչը մնալ անոր խառնուածքին ու «պարել զգաստ», փորձութեան նրբանցքէն մշտապէս աշխուժ։ Ու պարել չկա՛մ, վարձանի պարով։ Ու ծախու ապրանք։ Ու ո՛ճը անոր, մէ՛կը՝ ամէնէն խիզախ, պերճ, գունազեղ նրաւանութիւնէն մեր նոր բարրաւորին։ Որ պաշարուեցաւ կարիքին տարզէն ու սեռին ժանգէն ու զգեստեղեցաւ կեղծիքին կեղէն, ու կցկրտուր, ափսափոյ անխնամ էջերու վրայ մեռաւ արեւնաքամ։ Անիկա դիտէր արժէ՛քը այս ողջակէզին ու դիտէր մեղքը իր ալ տուրքերուն։ Աւելորդ է փրկել աշխատիլ այս կործանումին իմաստը գտնէ։ Քանի որ ինքն զգուշացաւ ամէնէն առաջ նման փորձէ մը։ Իր գիւտն է «Վրիպած սերունդ»ը։ Ու թող ներքին ինքի հետեւիլ իրեն ու տարածել տարազը իր գրողի անձին։ «Վրիպած» գրո՛ղ, զժուար է ըսել բոլոր ու անցնիլ հանդարտ։ Աւելի ճիշդ պիտի ըլլար՝ որակել զինքը՝ «որբազան հիւանդ»։ Կարելի է այս պատմուհանը նետել իր յիշատակին ու թաղել զարշակոյտն ու ճահճակոյտը իր դիակին։ Աւանդութիւն մը, ո՛չ հերքուած, ոչ ալ ստոյգ, զայն կը դասէ դարուն մեծ ջլախառնորներուն շարքին, անոնց պէս զարնուած՝ իր կեդրոնէն, վարակուած իր ուղեղէն։ Ու սիրտէն սրտնաչար։ Քառնակ իր կեանքէն յառնող այս միազման կու տա՞ր բանալին անոր տխրութեան

ու հիւանդ փայլին: Ստույլը ան էր, որ անիկա հիւանդ էր, միտքին մարդերէն, անորակելի ցաւով մը, որ կերած արժատաքի շորհուցած էր կամքը անոր մէջէն: Ու հիւանդ էր նոյն աստիճանի վրէժով շատ կարեւոր զգայարաններէն, որոնք լծուեցան սպառող տարապարհա-կի ու հացի ճամբան զոհեցին ինկուսթիւնն իսկ անոր արիւնին, սեր-մի անոր տաղանդին: Ու հիւանդ՝ սիրտէն, զոր ունեցաւ ճոխ, բայց նոյնիսկ մեծագոյն նուաստութեանց ալ խորը, բո՛ւխ, բայց ճահիճի մէջ բացուելու ճակատագրուած աղբերակի մը նման: Ուրիշ չէր ա-ռաջ, մարմինն ալ անոր:

Ապրեցաւ այսպէս, մինչև որ ժառանգեց:

Այս բացատրութիւնը մեր մէջ իմաստ չունի անշուշտ: Պէտք է հասկնալ զայն փոխաբերով: Ամուսնութի՛ւն: Դուք դիտէք անոր ճարած կնի՛կը ու «սակեյորդ» սնտուկը: Յոնարհ էր անիկա սրտով ու սնտուկ մը մեծ բան է յաճախ:

Ուրե՛մն

— Հարո՛ւստ:

Ինչպէս երազեր էր քսան տարիներ:

... Ու շքեղ կնով մը ազատանդ հեքիաթը կոնակին, անիկա տ-ռեւանգուելէ ետքը (ինչպէս բանաճեւեցին իր բարեկամները պատա-հարին անհեթեթ յիմարութեան առջը), Իզմիրէն Գահրէէ դարձին, հասանբազմէն առաջ, անիկտ մտաւ, չափազանց արագ, իր տուրքե-րուն ծիածանին մէջ: Քանի մը շարաթ, ու արդէն կործաներ էր իր սնծին շուրջ բիւրեղացուած ժխտական տրամադրութիւնը՝ կտա՛կ, լսուելին այցելութեան ահաւոր «տնանկութեան»: Ու յաջողեցաւ գախ-րական ու փարթած, առջի շրջանէն եղկելի, մուրացկան, միշտ մե-ծառաջանդ արձակագիրը վերածել համով, պատուական, պատուա-ւոր ազնուականի մը (անդլերէն ալ դիտէր), որ ռիւտի անհեքելի սպացոյց էր տուած, դժբախտ իր ամուսնութեան «սակեյորդ» ճահի-ճէն ազատազրկով իրեն յարող կին մը, զայն ընդունելով «ազատ ու ոսկի» մեծութեան մէջը իր աղքատութեան: Ու կը զովէր չունեցած իր պարկեշտութիւնը, ձեռքը զարնելով սիրտին, որ «զերազոյն դա-տաւորն է մեր արարքներուն»: «Վա՛յ անոր, որ իր սիրտը կը խա-րէ», կը բարբառէր անիկա ու կը հաւատար իր լրբութեան: Անոր մտած տեղը աղբիւրը կը բխէր գարեջուրին ու զուարթ կատակին: Չտե՛ս: — Չեղաւ անիկա:

— Մովսէ՛ս,

— Մարգարէ՛,

— Սինայի ժայռե՛րը,

— Թեփէ աւազնե՛րը...

Մարգիկ կը խօսէին ու չէն էր անիկա:

Ու, ազատանդին պարունակէն ու տարերկրեայ, հնդկ-պար-սիկ քառամանակին պարունակէն անիկա եղաւ աստղը այդ օրերուն: Հիմա, որ դիտէք թաւական բառ անոր անցեալէն, եղէք համ-բերող քիչիկ մըն ալ, հասնելու համար Հելլո անի տնակի յետմիջ-րէին: «Որքան շատ, այնքան լաւ», կ'ըսեն բժիշկները, երբ հիւանդը կը հարցաքննեն:

Դժուար է մտապահելու, թէ ինչ սրտառու, տխրութեամբ օծուած, խոնարհ հոգիով, անիկա երեցաւ Գահրէէ, Աղեքսանդրիա, իմբազրատունէն՝ Երկօրեայ, Էւօրեայ, շարաթաւոր հայ մամու-լին: Առած էր այդ համեստ կեբոյարանքը, «անձին օրինակովը» ան-

դամ մըն ալ Գալմախելու համար քանաստեղծ-մոնառական մը, որ մուսաներու հետ երկերես քաղաքակրթութիւն մը վարելով, ամբիկ-լան հեռուոր, ծովափնեայ ոստանի մը մէջ ոսկի էր դիզեր ու եղջերուաբաղ կը կարգար իր գրչեղբայրներուն գլխուն, իր փափաքները իր իրողութիւններ ներկայելով ու հիմնելով հայ գրողներու տուն, ընկերակցութիւն, հաստատելով ընդարձակ ֆոնտեր, որոնց տակաւր պիտի ազատէր հայ վաստակաւոր գրագէտները հացին հարսէն, բայց չմոռնալով աւաղել նիւթական իր անկարողութիւնը, գընչուի մը պէս ապրելով, իր միլիոնները եւրոպա փոխադրելէ ետքը Պարզեւեան շանթահարիչ երկու սինակ հայհոյանքով դիմակը վար էր առեր այդ անպարարին, որ Ամբիկէ ճեռարած իր գեղը կ'երգէր, անոր ճամբաները ու տնակները ոգեկոչելով սրտառու կեղծիքով:

Ոմբադրատունները հայ մամուլին: Եզիպտոս: Պահ մը պարտաւոր էք մոռնալ 1932ը, 15-20 տարի առաջ, անոնք իմացական իրենց մեծ դերին հաւատարիմ, ամբողջին վրայ լաւ ազդելու համար, «ամբոխէ հեռու», այսինքն՝ սանկ ու նանկ շորքորդական փողոցներու վրայ խանութներ էին, ընդարձակ այնքան՝ որքան տան յատակի նպարավաճառի կրպակը, շորս-հինգ մեթր հակատով, խաւաքարոյ միլիոններով բլիշուած, մեղուանոցուած (չեղեցիկ նմանութիւնը, որ գիւտն էր արամիտ երգիծողի մը), հազիւ քարյատակ: Որուն ձեռնամաշէն երկու մեթր ցած տախտակածած մը կը կազմէր խմբագրական սպայակցիտին շտապը, ուր կը բարձրանային անոնք, խմբագրները, գոյգ մը անօթի ու տօգոյն մարգեր, խարխուլ, շարժական սանդուխէ: Կ'արժէր անանկ Պարզեւեանը, երբ լամբակին ծագիկ-վաճառորդուհիները հաճոյք ունէին ծագիկուորելու արեւելեան իշխանը — կը բազմէր խարխուլ աթոռին, այլուրային, վերահսկող նարհ հայեացքին տակը գթութեամբ ողողելով խմբագիրը ողորձուկ ետորեային, պարզ, բարոտ սատանայ մը, հացի տնիւին կապուած փակալէ ջորիի մը պէս, ու զմշտանօթի, բո՛ւ՝ զոր հնարած էին ընկերովի, երբ կը խմբագրէին միասին, նոյն այդ անկիւնէն, անուշով ուրիշ, բայց խորքով միշտ նոյն թերթուկները: Այդ օրերուն խմբագիրները մտքերուն անզամ չէին անցընէր այժմեան շքասեղանները, թէյասեղանները, քիչ-չաւտ տանիւն պարթանները ու կ'ապրէին Պարթեանով սեւեռուած պարունակէն, այսինքն մշտահալած՝ պարաքէն ու կարիքէն: Ձունէին նոյնպէս տեղ ու ծանրութիւն եզիպտական համայնքին մէջ, որ փաշաներու կործր ասուերին մէջ ժաղաղած, կը դիզէր ոսկին, կը յօրանար ու կ'ուրանար ուրիշ բան: Մեր մտքին եղկելի խլեակները, կարուած իրենց կեղբոնէն, ու նետուած սա անապատը, արգասաւորելու անոր աւազատտանը քարողութեամբ Բանին: Մէկը անոնցմէ, մեծագոյններէն, որ մեր մեծ գրագէտներէն մէկն ալ է նոյն ասան, եղբրաբար իր մահուան ատեն, արիւնոտ իր դրպանէն պատառ մը չոր հաց միայն կտակէր պիտի մեր փաշաներուն միլիոններուն դէմ, մեր ժողովուրդին: Պարզեւեան կ'ոգեկոչէր զայն, կ'արտասուէր անոր արժանիքները, ու կը հանէր անոր տեղը իւրիշ ուրիշ եղկելի մը, բռնի՝ աթոռէն, տանելու համար բացօթեայ վայրեր, պարպելու ըմպելի ու աղանդեր «մշտանօթի» անոր աչքերուն ու փորին, ներկայացնելով, այն բարիքին ալ ու աղբիւր գեղանի տիկինը

— Կինը, Տիկին Գահարեան:

Ու չէր նեղուէր տարազին այլանդակ անիմաստութենէն։
 Մարդկային կեանքը, մանաւանդ Պարզեւեանի գիծէն մէկու
 մը կեանքը նուաճելի չէ՝ վէպի էջերով։ Կը զոհեմ շատ բան այդ ու-
 րավէպէն ու անոր կապուած հոգեվիճակներուն լրիւ շրջափոխութե-
 նէն։ Վյաբանք՝ որպէսզի հասկնալի դառնայ, որոշ չափով, այս ու-
 ժասպառ չէզոքութիւնը, աւերակը, յիսունէն, մեղքէն, պարտքէն վեր
 պայծառ կործանութիւնը, Եզիպտոս, ուր անոր տաղանդին դրուած էր
 կրել զառնադոյն կորանքը, ու անոր զգայարանըներուն՝ հղօրագոյն
 տառապանքը, մտնելէ առաջ աւազին մշտանորոգ պատմութեան ներ-
 քեւ, ուր մոմիայ եղած կը քնանան այնքան հսկայ քաղաքակրթու-
 թիւններ։ Անիկա մեծամիտ էր իրեն հետ թաղել կարծելու իր ժողո-
 վուրդին ալ քաղաքակրթութիւնը, որմէ վեր յայտարարեց ինքզինքը,
 իր խենթութեան օրերուն։

ՅԱՅՈՒՅ ԾԵԱԿԱՆ

(Շաբ. 8)

Յ. Ն Ա Գ Ռ Ի Է Ե Ա Ն

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատերազմէն մնացած հալած երկաթի կտորներ
հաւաքուած մէջ մէջի
քանդակը
նուիրուած անոնց որոնք մեռան պատնէշին վրայ
իմաստ որոնելու անհեթեթութեան ճանապարհին

Պոռչտուք աղաղակ եւ սուլոցներ արձանին բացման վայրկեանին

Ամբոխը կը նայի սարսափած
եւ կարծես կրօնածններուն աչքերն են
որ կը փայլին երկաթէ քանդակին ծալքերէն

Լոռիքին
շշուկներ յանկարծ
կտորներ լացի եւ յիշողութեան
իւրաքանչիւրը կը փնտռէ մէկը
եւ կը շօշափէ ինքն իր ձեռքերը
դիմացի մետաղին անփայլ սառնութեան մէջ

Կենդանի աչքեր կը նային ամբոխին քանդակին ծալքերէն
մետաղեայ ու մեռած հայեացքով



Բացման հանդէսի աւարտին մեռան ամէնքը
կղմինտրի կտորներ ինկան տանիքէն մարմիններուն վրայ
«Նաթիւր մորթ» որ չունի կենդանի էութիւն

Թռչուններն անգամ խնդացին մեր վրայ
եւ քանդակը արձան
արեւի տաքութենէն սկսաւ հալիլ ու ոչնչանալ

Վերջացաւ պատերազմը
աւերակ տուներ
յոգնած աչքերով մարմիններ
քանդակներ իբրեւ դարձան մոնումենտ

Մարդիկ շուտ մոռցան պատերազմն ու մահը
արթնցան կոռուելու համար
հետազային

փշրուած ապակիներու կտորներէն
դիմացի բլուրին վրայ արևան մը եւս յաւերժացնելու երկունքով
Մարդիկ չեն մեռնիր տակաւին
իրենց տենչերու ծանր բեռան տակ
մեծ երազներու ճանապարհին մէջ

Քաղաքակրթութիւնը
աւերակ տան մը ապակիներուն պէս
կը փշրուի ամէն օր քիչ մը աւելի



Դրախտը կործանեցաւ ամէն տեղ
եղք չկայ այլեւս
մնացէք հոն ուր արմատներ ունիք

Հոն Պոյան
բերքատուրելու յոյսեր կան տակաւին
ուր որ էք հողը դեռ բերրի է
ցանեցէք ինչ որ մնացած է հին արմատներէն

Չմոռցուելու ժողանգականութիւն

Ակօս առ ակօս հողը կը պայթի
բաց տափաստան են երկիրներն ահա ճակատամարտի
մի գաղթէք այլեւս
մնացէք հոն ուր կաք

Սրբութիւններ ունիք
շիրիմներ շինեցիք ու մակագրեցիք
հանգրուանէ հանգրուան
Մարդարարկատէն շատ թարիներ առաջ
Սարգաթապատէն մինչեւ այս օրերը

Տառապանքի կոթողներ են մէկիկ-մէկիկ մեռնող հայրերը մեր
որոնք կոռուած են անընդհատ
Աստուծոյ դէմ անգամ
կոռուած են անընդհատ
հին Հայաստանի տափաստաններուն մէջ
իրենց արմատներուն համար
իրենց ակունքներուն համար
եւ կամ Զէյթունի կամ Մուսա Լեռան կատարներուն վրայ
Հայաստանի համար

Բուն երգը կը սկսի հոն ուր կաք
այն տան մէջ ուր մեծցաք
կը դառնայ քայլերդ յաջորդ սերունդին մեր աշխարհին մէջ
պիտի երգեն զայն հոն ուր այսքան տառապանքներէ ետք
արեւը պիտի ծագի

մեր երկիրը
 մեր հողերը
 ուր խաւար է դեռ
 ուր մեր արմատներն անգամ չորցեր են թերեւս
 Ասիկա կռիւն է ժամանակին ու երկինքին դէմ
 վերջին ու համատարած ճակատամարտը
 կենաց եւ մահու

Հանգրուաններէն պատգամներ կը լսուին
 իբրեւ արձագանգ
 ժառանգուած ներաշխարհին մէջ մեր
 նոթա առ նոթա
 մետաղի ձայներուն ընկերակցութեամբ
 ստեղծեցէք բայերովը հորիզոններուն
 վայն մակազրեցէք
 դարերու ընթացքին գրուած յաղթանակի իբրեւ համերգ

Համերգ ուր չկան այլեւս
 աղերսանքներ ճիչեր ու հեկեկանքներ
 ուրիշ ելք չկայ
 դրախտը կործանած է
 նոր դրախտին ճամբան մեր երազն է մեծ
 որ կ'անցնի դժոխքէն
 նոր Աւարայրի ճակատամարտէն

Ցանեցէք ձեր հոգին ձեր շուրջը տարածուած հողերուն մէջ
 ձեր ապրած տան մէջ փնտռեցէք արմատները

Փոխանակ թաղելու ցանեցէք ձեր անցեալը
 որ հետագայ սերունդներուն մէջ ծիլ դնէ բուսնի

Փոխանակ մոռնալու
 Ցանեցէք ձեր յուշերը
 որ ձեր տառապանքը
 հետագայ սերունդին համար հասկնալի դառնայ

Ցանեցէք ձեր այքին լոյսը
 որ բազմապատկուի եւ արեւ դառնայ

Ցանեցէք ձեր կռիւը որ արմատանայ
 արմատաւորուի
 ճակատամարտ դառնայ
 որպէսզի պայքարը ձեր հետագայ սերունդին մէջ
 յաղթանակ դառնայ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԳՈՒԼԵԱՆ

Պ. Ս Ն Ա Պ Ե Ա Ն

ՄԻՋՆԱՐԱՐ Բ.

— Ոչ անկարելի է անկարելի է ոչ անկարելի է բնագրոս չի խաբեր դիտ աշխարհ չեն խաբեր բարեւ ինչպէ՞ս եւ հետուէն զգացի ներս մտած վայրկեանիս զգացի որ հայ եւ բարեւ եթէ այդ գիրքերը շտեմելէ նորէն պիտի գիտանայի պիտի գիտանայի ալքերէդ պիտի գիտանայի օհօ հայ ճարտարագետութիւն մեր պտպերը հանճարեղ մարդիկ կառուցեր են շիներ հրաշալիքներ շալտտան եղա՞ծ եւ պէտք է երթալ պէտք է պէտք է աչքով տեսնել շուափել ինչպէ՞ս ալ պիտեցայ հայ մը հազարներու միլիոններու մէջ կրնամ ճանչնալ սեւ աչքեր սեւ քաղցրական ըսէ նայիմ հայրդ ո՞ղջ է մայրդ ո՞ղջ է քոյր եղբայր ունի՞ս եւ ալ սեւ մազեր ունէի առատ մազեր տես գրեթէ բան չմնաց քանի մը սպիտակ թել ամէն ինչ անցաւ բան չմնաց չմնաց յիշատակներ յիշատակներ անոնք կը մնան չեն մեռնիր դուռն ո՞րտեղացի եւ ինչ կարեւորութիւն ունի հայ եւ վերջացաւ գնաց բայց այդպէս չըսենք շատ վճռական չըլլանք ունի յեռնական մարդը տարբեր կ'ըլլայ դաշտային մարդը տարբեր կ'ըլլայ ունի ունի ինչպէ՞ս թէ չունի իրը թէ ժամադրուած էինք անպիտանները հիմա հոս պիտի ըլլային անպայման կու գանք ըսին բոլոր անկիւնները աչքէ անցուցի չկան չեն եկած ունի ջուրը օդը հողը ծառը ժայռը կարեւոր են մենք մեզ յիշարենք լիւնականները քաջ կ'ըլլան լմբոտ կ'ըլլան լմբոտութիւն սրբազան բայց մեզի պէտք եւ դուռն դեռ ուրոտութիւն սրբազան ինչ ճիշդ ըսած է բանաստեղծ Թէքէեանը բայց մեզի պէտք եւ դուռն դեռ չաւ որ քեզ դուռնայ հոս միտակութեմէն կը ճայթէի կարօտ կարօտ արիւնք կը քաշէ ախ մեր արիւնքը նոր եկայ Պէյրուէ՞ քանի մը օր եղաւ Պիշուրթին եկայ հայերու հետ խոտելու եկայ կարօտ կարօտ գիտե՞ս ուր է Պիշուրթին հետու Սփրիկէ հոն ուսուցիչ էի վարժապետ էի հանգստեան կուշեցին զիս ծօ ինչ հանգիստ կուշեցին յամառեցան կուշեցին ուշացան զարմանալի տղաք են Փրանսերէն շատ կը խառնեն իրենց խօսակցութեան մէջ մաքուր պէտք է խօսիլ մաքուր հայերէն գիրք մը կը կարդային գրականութիւն բանաստեղծութիւն ունկընդրեցի ունկընդրեցի սրտիս յիտեցաւ բառ մը ասկէ բառ մը անկէ հայերէն Փրանսերէն թուրքերէն գրաբար բառեր աշխարհաբար բառեր կարծեցի թէ Նահապետ Թուսինեանի Ուղղախօսութիւնը կը կարդան կարծեցի Մինաս Ձերապի Ընտրողականը կը կարդան սրտիս յիտեցաւ յիտեցաւ Նորահրաշ պսակաւոր եւ զորազլուխ առաքինեաց օխ մարդուս քէ՞Քը կու գայ պաղպաղուն բանաստեղծութիւն համ կ'առնես համ համ Սփրիկա ապրողն ալ համ կ'առնէ Եւրոպա ապրողն ալ Պաղտատ ապրողն ալ Ծղիպտոս ապրողն ալ Նորահրաշ պսակաւոր ասոնց գրածէն համ չեմ առներ չեմ հասկնար հին գրութիւն եւ կ'ըսեն չեմ հասկնար իրենց ըսածին տակը չմնացի հասկնալը մէկդի գրութիւն եւ կ'ըսեն չեմ հասկնար երկինքն ալ չեմ հասկնար ըսի ծովն ալ չեմ հասկնար չեմ հասկնար հոգն ալ չեմ հասկնար հոգն ալ բայց կը զգամ թուրքն ալ կը օրհնէ չեմ հասկնար բայց կը սիրեմ ձեր գրածին մէջ շաբթում չկայ ըսի աւելորդութիւն չկայ արեւ չկայ հողի բոյր չկայ ըսի բառերու քաղցրութիւն կայ կը քաղցրէք ու կը քաղցրէք ըսի ձեր լեզուն բարեկոնեան լեզու մըն է ըսի հայաստան չի-

նորէն նորէն կ'ըսեմ թող զան կ'ըսեմ չեկան ինչ որ է թող չգան ես շարունակեմ եղբայր լուսինն Հանգարտութիւն խաղաղութիւն ծով ամէն առտու Հոս կու գամ սուրճ մը կ'ստանեմ ծովը կը դիտեմ ծովը ծովը ծովը մը կտոր մը ծով անգամ չտունին մեզի շատ տեսան պիտի տային խանդարեցին խաղաղեցին խանդարեցին Քրիստոսացիները խանդարեցին անգլիացիները ռուսները բոլորը ծօ ես ասոնց մեղք որ չեմ կրնար Հայհոյել Վազգէնը ըլլար կը Հայհոյէր մայրը կ'ըսէր քոյրը կ'ըսէր դուն կը ճանչնամ Գ Վազգէնը ախ Վազգէն ինչեւ լինէ փախած տղայ մը կը ճանչնայի ինչեւ Պատուից ծովուն վրայ պղտիկ նաւահանգիստ մը ինչեւ Մեծառնանի փրկած տղաներէն էր Բաքուի կուռնեւրուն ինչեւ խաղաղութեան հազարաւոր Հայեր Բաքուի կուռն ախ այդ անգլիացին նենգ Ալպիոնը չպաշտպանեց Բաքուն յետոյ ինչեւ Սալ լեռն Գերասիմ Բայրախանը իր վեց-եօթը հարիւր զինուորներով Հոն գնաց ինչեւ անգլիական բանակին միանալու Թուրքերուն գէշ կռուելու անգլիացիները մերժեցին քիչ մնացած էր որ ինչեւ ի մէջ կը կորսուէր Անտոնանի Արմատական բաւարարեալ աղէտ կ'ըլլար աղէտ այդ ինչ մարդ էր այդ Անտոնանը Հանճար Հանճար բռնիկ ռուսոսթիցի էր աշխարհին Հիացում պատճառած Հուսկաւոր գիտնական դուն զիս կը ճանչնամ ուրկէ պիտի ճանչնաս հօրդ տարիքը կամ ախ ախ մեր կեանքը Հէյ Մումպուճ Հօ Հօ Հօ Նայիմ պէյը Գրիգոր Զօհրապէ աշաղկերտ եղած էր անոր քաշած էր երկու թիկնապահ ունէր քէֆը ինչ ուղէր ան կ'ընէր տասնամէկ տարեկանիս Տիմրիկէն Պոլիս գացի Սահմանադրութենէն հաջէր էր Հայրս տարաւ զիս նախ իսպանա մտայ յետոյ Կեդրոնական Անտոնանի ալ Կեդրոնականէն էր Բաքուէն Սիւնիի գասընկերը Պանջ Օթմանի Բարպէն Սիւնի մեծ ուսուցիչներ ունէինք դրագէտներ բանաստեղծներ պատմաբաններ մեծ մեծ մեծ ինչ կ'ըսէի՝ հա այդ բանաստեղծը կը գարմէ հա կը դարմէ լեզուն լեզու չէ որ մեր ուսուցիչներէն մէկը պարտիզակցի էր ես ութ օր օգափոխութեան զացեր եմ Պարտիզակ Հոն կու գային Հայ մտաւորականները գրագէտներ յեղափոխականներ Զարդարեան Ակնունի հակաւեր Հակաւեր ինչ օրեր էին հոսն անեղայտից Կառվարենցն ալ Պարտիզակցին չըմանաւարտ ելաւ ամերիկեան վարժարանէն Գէորգ Կառվարենցը վինն անմիջեւ կը Հեծէ երգիս վրայ միայն վինն անմիջեւ կը Հեծէ ահ ինչ անուշ թախիծ է շո՛ւի-նեքուն մէջ գալար առաջին անգամ Ճակատամարտին մէջ կարգացի այդ բա-նաստեղծութիւնը Պոլսոյ Զակատամարտին մէջ Նուրբ Նուրբ Նուրբ բանաստեղծ էր ամերիկեան վարժարաններէն բանաստեղծ չ'իյլէր Կառվարենցը բա-ցառութիւն է Նուրբ քար մը անար ծառ մը քնար ընտրեցի սօսափն օրօր սար-սափն անդորր է ինծի Պոլսէն ուղղակի Մարտիլիս դացի նաւով Հիմա ասոնք ձգենք կարծես նիւթէն չեղեցանք ինչ ընենք ամէնքն ալ պէտք են պէտք չէ մոռնալ գանք Նայիմ պէյին աղջկան Ֆաթմա էր անունը լուսնկայի պէս աղ-ջիկ ես քանուրթ տարեկան ինք քանուրթու Մումպուճի մէջ բոլոր կիները աղ-ջիկները ծածկուած դուրս կ'իյլին չատուր կը դնեն Ֆաթման ոչ Նայիմ պէյը արածեալ էր իրեն բաց երեսով դուրս ելլել լուսնկայի պէս աղջիկ չէրքեղու-հի գեղեցկուհի Մարտիլիսէն Վալանս գացի Տեսին գացի Լիսն գացի քացի Բուսն գացի Հոն գտայ Վազգէնը ինչ տղայ ինչ խառնուածք գեղուն ես ութ ամիս չափահաս որբերուն մօտ անոր տեղը բռնած եմ Գրիգորը ի՞նչ էր մականունը մոռցեր եմ մականունը սեքսատացի էր մեծ համալուծար մը տեղի ունեցաւ Պօղոս Նուպար փաշան Հրաւիրած էր Հոն գացի ծօ Արմէն ծօ զիս չճանչցա՞ր բաւ մէկը ծօ այնքան շո՛ւտ կը մոռնան Նայիմ ով ըլլայ փրօֆէս-սօր Քալատուրեանը պատմաբան Աստուածատուր Քալատուրեանը գուն պէտք է համալուծար մանեւ բաւ փրօֆէսէօրը ուսուցիչ կ'ըլլաւ պատմա-թեան ուսուցիչ յետոյ Հայաստան զնաց փրօֆէսէօրը ամսոս ստալինականե-րը չլուսն կերան վախ Մարդիկ Միմասեան մըն ալ դնէինք քաբի ապիւր մեր

անձինք հուրիւրեալներէն էր ան ալ ի թթիւ հատական բորենիներուն զաւին զո՛ւ
զնաց տղաքը կը խենթանային Ծաթմային համար կատարեալ գեղեցկուհի եւ
թէ Նայիմ պէյը չըլլար կը փախցնէին դինք Նայիմ պէյը շատ հայեր փրկած
էր քննութիւն տուի ֆրանսերէն յաջողեցայ երեք էջոյ Նորմալ կայ ես միջի-
նը աւարտեցի քննութեան մէջ յաջողեցայ ինձմէ առաջ երկու հայ միայն յա-
ջողած են փրոֆեսօրը ալաշկերացի էր Գէորգեան ճեմարանը աւարտած էր
յետոյ Սթրազպուրիկ համալսարանը երկար տարիներ պաշտօնավարած էր
Սանատարեան վարժարանը կարենցի ազայ մը ճանլցայ Փարիզ ախ Ռոստոմ
կ'ըսէր շարունակ ուր որ երթար Ռոստոմ կ'ըսէր Ռոստոմ Ռոստոմ Ռոստոմ
կ'ըսէր ատամները կը կճրտեցնէր կու լար կարծեմ մինչեւ հիմա նոյնը կ'ընէ
ատամները կը կճրտեցնէ ու կու լայ իրաւունք ունէր իրաւունք ունի Սիմոն
Յակոբեանը վայ Սիմոն վայ շատ փոփոխութիւն մարդ էր ամէն օր կարծիք կը
փոխէր հակասական կարծիքներ կը յայտնէր դուն քեզի կը հակասես կ'ը-
սէինք վնաս չունի կ'ըսէր ան ալ կարծիք է ան ալ բոլորն ալ կարգացէր ի-
մացէք կարմիրներուն ուզած մարդն էր կարմիրները ատանկ մարդ կ'ուզեն
դուն քիտե՞ս ինչ սատանայ են անոնք հաստատաւոր մարդ չեն ուզեր սկըզ-
բունքի տէր մարդ չեն ուզեր անոնք լաւ գիտին ինչ կ'ուզեն ով պիտանի է ով
պիտանի չէ գերմանացի կին մը ունէր Սորպոնի գրականութեան ճիւղին կը
հետեւէինք հոն ներկայացումներ կու տայինք Արման կոթիկները գերաւան էր
ինչ տաղանդաւոր գերասան Վահրան Փափագեանը կ'ըսէր ես միայն Արմանին
հետ կ'ընամ խաղալ չերկարենք Սիմոն Յակոբեանն ալ Հայաստան զնաց
փրոֆեսօր Պաշտօնաւորեանէն ետքը զնաց Ստալինը անոր ալ գլուխը կ'երաւ
1925ին աւարտեցի Սորպոնը մէյ մըն ալ Լեւոն Շանթին նամակ մը կը ստանամ
հոս եկուր կը գրէր Լեւոն Շանթ Փարիզի առաջնորդը Արտաւազդ եպիսկո-
պոսն էր ոչ Պալաքեանն էր Թոքաթցի Արմալը աւարտած էր ուղղամիտ ան-
վախ մարդ էր շատ շարժարուն արարադրութեան օրերուն գերմանացիներուն
քով բանուորութիւն ըրած մարդ էր քաջ մարդ ազգասէր Ծաթման տարբեր
էր արտեր վայ վայ վայ Պալաքեան կանչից դիտ մօտը Վալանս պիտի եր-
թաս ըսաւ դաս կու տաս ըսաւ կը քարոզեաւ կը դաստիարակէր մանուկները
կ'ընայի՞ր չերթալ Լեւոն Շանթի ձեռքին տակ մէկ տարի սուուցութիւն ըրի
Վալանսի մէջ քիչ մնաց կոթիւով վերջանար տեսակ մը մարդ էր Լեւոն Շանթ
կոճկուած մարդ զուսպ խոտակրօն գինուորականի կը նմանէր իսկ ես հէյ հէյ
կատարեալ տերմինը անհանգաւոր օրերուն հետ ապրած երեսասարդ փողոց-
ներուն մէջ լուսցուցած երիտասարդ ան իր կեանքը յարմարցուցած էր ժամա-
ցոյցին խենթութիւն բնաւ չուենէր բնաւ երբեք ամէն բանի մէջ կարգապահ էր
եւ ատանկ կ'ընա՞մ ապրիլ ատանկ մարդու հետ կ'ընա՞մ ապրիլ չեմ կ'ընար
չեմ կ'ընար չեմ կ'ընար սկզբունքի մարդ էր մեծ մարդ էր մեծ վաստակ ձգեց
չեմ կ'ընար դպրոցէն ելայ եւ անմիջապէս Վալանսի մէկ տպարանին մէջ գործ
դտայ Զարիկի տպարանը մեծ տպարան մըն էր Գերասիմ Բալայեանը փոխ
տնօրէնն էր Կարճեւանի Գերասիմը Շիրակի Սուրմալուի Նախիջեւանի հայու-
թեան պաշտպանը փրկիչը քաջ քաջ կարին լուռ մարդ էր Բալայեանը
ախ Գերասիմ տպարանի փոխ տնօրէն փորձերը ես կը սրբազնի հալլել ութ
հարիւր ֆրանք կու տային ինծի այն օրերուն փառաւոր գրամ ութ հարիւր
ֆրանք Վազգէնը կը գրէր ու կը գրէր պատմութեան կը գրէր հրապարակագրա-
կան յօդուած կը գրէր քննադատական յօդուածներ ամէն բան հա չժող-
եամ այն օրերուն Շիրվանդադէին վրայ յարձակեցաւ Պաշտօնի Նաւասարդին
մէջ շատեր դժգոհ մնացին շատ ծանր դրած էր չոր մարդ մըն է գրած էր բա-
նաստեղծական բոցէ զուրկ մարդ մը որ իր սովորական էջերը գրեց փետուրը
իր գինովութեան մութ ու պղտոր սկահակին մէջ թաթիկով փոխանակ ա-
րիւնը գործածելու ախ քաղսկալի մարդը օդիով գրեց ըսած էր ախ ախ ախ

այս ստղծակալի մարդը կը սրբազրէի կը սրբազրէի եւայն եւայն մեր երիտասարդ բանաստեղծը կ'ըսէին հա հա հա հա պարզ պէտք է գրել պարզ պարզ պարզ լազանակէ քու վարսերուն հիւսուածքէն ինչ բուրումներ ինչ բուրումներ կ'առնեմ ես պարզ պարզ պարզ սիրեցին զիս ես ալ գիրենք սիրեցի այս բոլորը ձգենք Ապրիլին էր չեմ գիտեր քանիին վարդան Գէորգեանը եթէ հոս ըլլար պիտի ըսէր նորէն կը լափապանցես հօ հօ հօ տարիքիս մի նայիր գիտեմ քանի տարիկան եմ միշտ կը շարժիմ չեմ կրնար նստիլ բնասորութիւն է իննթ քնաւորութիւն այսպէս ոտքի վրայ կը խօսիմ դասականները պարզ էին Rodrique qu'as tu fais où viens-tu Գոմէտի Թրանսէլ կ'երթայինք յe demande sa tête, et crains de l'obtenir հապա պարապ ժամանակ չէինք անցըներ տանկ բաներ կը լսէինք mourir pour la pays n'est pas une triste sorti c'est s'immortaliser par une belle mort ինչ պիտի ըսէի հօ հօ հօ Սիմոն Թալորեանը Հանրաժանութ մարդ էր Հայաստանի Հանրապետութիւնը երբ ինկաւ կարմրեցաւ դուրսը կեղծ էր սուտ էր բայց սղաքը քովը կ'երթային եւ ազոց ուզածը կը խօսէր ախ Մահուտ Նայիմ պէյին աղջիկը ես քառնութ տարեկան ինք քառնեակու Արեգ կը հրատարակէր 1919 20 Ձին Պերլին էր կեղծ էր սուտ էր Օշականը Բարձրալանքին մէջ գինք ալ հարթեց բայց ինք բնաւ չազդուեցաւ կեղծ էր սուտ էր Արեգէն շորս թիւ ունիմ պիտի բերեմ սղոց տամ հիմա հոս պէտք է ըլլային ուշացան ձակատամարտին մէջ ինչ յօդուածներ կը գրէր ինչ յօդուածներ յետոյ կարմրեցաւ Ծաթման միակ աղջիկն էր որուն հայրը արտօնած էր իրեն բաց երես դուրս հլլել նոյնիսկ հայերը շատուր կը գնէին նոյնիսկ Մրտոյին կ'ինք ծածկուած դուրս կ'ելլէր այդ գիտեա Գէորգեանին մայրը անցեալ օր Հանդիպեցայ իրեն Ծօ դուն Մոմպուճի Մրտոյին աղա՞ն ես Գարեգինը կարեւորութիւն չտուաւ Ծօ իմ հօրս Ծանօթ ունէ մարդ սուրբ է ինք կարեւորութիւն չտուաւ Թող չտայ Մրտոն ողջ ըլլար կը մեղցնէր գինք Մրտոն պարզ մարդ էր մեծամիտ չէր քաջ էր խոնարհ էր երէկ ամանոցի մարդ մը տեսայ հայրը չէր յիշեր Ամանոն ալ չէր հանչար կօշկակար էր Բաակեանն ալ Սիմոն Թալորեանի պէս եղաւ կարմրեցաւ Սիմոն Թալորեան 1924ին գնաց լաւ ըրաւ որ գնաց եւրոպական տեսակէտներ տարաւ հետը ինչեր ու ինչեր հոս ինչ պիտի ընէր թերթ մը կը հրատարակուի հոս կարծեմ անունը Բազին է լաւ բաներ կան մէջը բայց եղբայր ոմանք ինչ տեսակներով բաներ կը գրեն չեմ հասկնար ինչ կը գրեն որո՞ւ համար կը գրեն Փարիզէն ուղղակի Պէյրութ եկայ օրաթերթի մէջ մտայ ինձմէ առաջ մէկը կար ֆրանսերէն լաւ գիտէր հայերէնը տեղաւ ես երկուքն ալ ունէի Հիմա ոնենակ մը ունիմ հանգարտ կը կարդամ Լ'Օրբան կը կարդամ Լը Ժուռ կը կարդամ այդ այդպէս այդ այդպէս բոլոր էջերուն մէջ հայ կը փնտռեմ հայ Օթէլ Լորի կ'երթային հոն կու գար Հրաշ ֆափաղեանը միակ պաշտելի մարդն էր ինձի համար ատանկ դաշնակցական կ'ուզեմ ես ատանկ լուռ դործը նախ հա Մոմպուճ հայկական սրճարան մը կար Մրտօ երկու չեքէզ թիկնապահ ունէր ախ ախ ախ իր աղջիկները փայլն անոնցմէ մէկը Սիմարեանի կ'ինը եղաւ խանութ մը ունէր մէկ Ծուկը միւսին վրայ կը գնէր Ծարափի բազին մէջ թուղթ կը խաղայինք կոխ պոռչտուք եղբոր պէս էինք կը կռուէինք կը խաղայինք մազերն ալ թափած էր Փարիզէն եկայ Կարօ Մասուճին հարցուց Մոմպուճ կ'երթա՞ս գիւղ օհօ ըսի ոչ միայն գիւղ կ'երթամ այլեւ անապատները կ'երթամ կ'երթամ հոն աղայ մը կար արմաշական էր հոյակապ էր վայ Լիւքսէնպուրիի սրճարանը կ'երթայինք Արմէն գիտեմ ով անցաւ արմաշական այդ տղան հոն մղեց զիս վազեց գնաց նշանաւոր դաշնակցական էր Մատաթեանն ալ կար դեռ երիտասարդ էր դերասան հոգին սիրեմ լաւ կ'արտա-նօնէր պարզ պէտք է ըլլաւ պարզ ու բոյրն ես Լուսա բոյրը մեղրածոր հօ հօ հօ ախ վազէի Օննիկ էր անունը օր մը վալանսի մէջ կը քալէինք Ռիւ տը

Ռոմ աղջիկ ժը տեսանք Ռիւ տը Ռոմը նշանաւոր է աղջիկն ալ ինչ ըսեմ ինչ տղաք ունէինք Մումպուճի մէջ կրակ կը ցալտէր իրենց աչքերէն կրակ կրակ կառվարենցը ճանչցա՞ր նկարը կայ թերթերուն մէջ դաշնակցական փողկապով դաշնակցական փողկապ կը կապէր Արապական էր ժականունը Արապականն ր հայացուցած էր եւ եղած կառվարենց Գէորգ կառվարենց նուրը նուրը դիւարեկ ըմբաստող՝ օր ժըն ալ այդ կառվարենցը դաշնակցական կառվարենցը դաշնակցականի պէս բամբ ձայնով պոռացած էր յառաջ նահատակ ցեղի անմահներ երթանք կոթողենք դրօշակ եռագոյն Մումպուճի տղաքը իրենց հողին ուրեմ կ'երգէին կ'երգէին երթանք կոթողենք դրօշակ եռագոյն կ'երգէին երթանք երթանք երթանք կոթողենք Վաղգէն ուրիշ էր այդ սրկական կեանք կուտար կեանք սպասէ տյատեղ խառն են մտածումներս հա ինչ պիտի ըսէի մտցայ շուտ կը մոռնամ հա թրստողիմ Մէյէի սրահը լեփ լեցուն էր Ահարոնեանը պիտի խօսէր եկեր են եկեր եկեր հազարներ հազարներ հազարներ ես եւ Շուշանեանը մօտը ամէնէն մօտը նստած էինք դուքը ձայներ լսուեցան օտարներու ձայներ սպանացիներ իտալացիներ ձայներ դաշնակցական տղաքը մարերին լացուցին յանկարծ տեսնեմ Շուշանեանը չկայ յանկարծ տեսայ յինք իր ընկերներուն խառնուած է եւ ալ ու ձայն կը փարտէ բռնեցը զաշնակցական տղաքը կը պաշտէին գինք դաշնակցական տղաքը մարերին լացուցին վերջապէս Ահարոնեանը խօսեցաւ աման աստուած խօսեցաւ փոթորիկի պէս կատարեալ փոթորիկ ժողովուրդը մաղնիրացած ախ ինչ օրեր էին լաւ օրեր մէտով մը լաւ օրեր Սիրանոյլը տասնըվեց տասնեօթ տարեկան աղջիկ չեա դիտեր ինչպէս Միսէլ կ'իյնայ հոն քիւրտերը եւ չեքէզները կը սիրահարին աղջկան Մումպուճի արիտասարդները կը լսեն ասիկա եւ հայտէ գէնքբով դանակներով գինուած կ'երթան Միսէլ կ'անեն աղջիկը եւ կը բերեն Մումպուճ եղբայրը Հալէպէն կը լսէ որ պղտիկ քայլը ողջ է Մումպուճ է ամոթիջապէս Մումպուճ կ'երթայ հայկական պատմութիւն եկուր Սիրանոյլ կ'ըսէ եկուր քեզ Հալէպ տանիմ կ'ըսէ Մաքրուհի քայլը ալ հոն է տանիմ տանիմ կ'ըսէ ախ այդ ողբերգութիւնը ախ եթէ մեր հողին վրայ ըլլայինք չոր հաց ուտէինք անօթի մնայինք հոն ըլլայինք հայ մը կար տյատեղ այնթապի էր կօշկակար էր ուրիշ հայ մըն ալ կար լաւ մարդ էր դեղեցիկ կարծեմ ալ կընցի էր Մեծարեանցի աշխարհէն Մեծարեանցի ան ալ շուտ գնաց քայլ մօտեցուր իմ մեքէին աստուածարօցն հրացան դի ամէն բան ինձ կրկին կը յիշեցնէ վրէժն արեան ախ հոն ըլլայինք այդ ակնցի հայուն անունը Լեւոն էր ծնողներուն նկարը հետը կը պտըտցնէր Լեւոնը հիմա ո՞ւր է արդեօք եղբայր այդ ինչ լուսթիւն է բան մըն ալ դուն ըսէ սփինքի պէս կեցեր ես դիմացս դուն խօսիլ չե՞ս դիտեր հա՞մը ես ինչ է բայց միեւնոյնն է միեւնոյնն է չէի մգեր ես պիտի խօսիմ ես ես ես միայն ես տարիներէ ի վեր չեմ խօսած հանդերձեան կոշուելէս ի վեր ես քէն ըրի ամէնուն հետ անոնք ալ քէն ըրին քըտեան կոշուելէս ի վեր ես քէն ըրի ամէնուն հետ անոնք ալ քէն ըրին ինձի հետ ծօ ես հանդստեան կոշուելիք մա՞րդ եմ ես պիտի խօսիմ ես ես տարիներէ ի վեր մարդու հետ չեմ խօսած ես ինձի հետ խօսած եմ Վաղգէն ինչ հրաշալի տղայ էր յախուռն էր անինայ էր ճշմարիտ էր չէր կրնար որոնիլ Շահնուրին շնականութիւնը Շահնուրը օտարամուլ էր օտարները հայեբէն աւելի կը սիրէր տաղանդաւոր դրագէտ էր լըվանթէն էր այդ մոլուրէն թիւնը ջղադար կը դարձնէր Շուշանեանը Շուշանեանը հակապատկերն էր անոր ողբուծուծով հայ էր ոտոսթոցի էր քաջ հայրենասէր պատուախնդիր շատ կը սիրէր Ճումպուլի հայերուն պատմութիւնը անոնք իսկական հալածի էին պատմական Հայաստանի հայեր փռապան հողադործ հօտաղ հողի բոյր կու դար իրենցմէ ցորենի բոյր կու դար կենդանիներու բոյր կու դար կենդանիներուն մօտ կը պատկէին ամառը հողածածկ տանիքներու վրայ գոմերուն վրայ փարախներուն վրայ կալերուն մէջ կը գէշերէին աստղերուն

տակ լուսնին տակ կայերու գիշեր օ կայերու գիշերը Վարուժան մեծ նահա-
տակ Հեթանոս քուրմ եւ բանաստեղծին նման տատուած ալ որպէսզի ստեղծէ
հարկ եղաւ նախ լալ գուն ըսէ Հիմա Հիմակուանները բանաստեղծ են կը
բաշխեն հա կը քաշքշեն փոխանակ իրենք լալու կը ձգեն որ ընթերցողը լայ
շարշարուի տառապի չէք հասկնար կ'ըսեն ու կը վերջացնեն ծօ ինչու պի-
տի չհասկնանք իրենք Եկեղեցիքէն մեծ են Տանթէէն մեծ են Նարեկա-
ցիէն մեծ են որ պիտի չհասկնանք Մեծարեցէն աւելի՞ խորունկ են
տնանկ ժամանակ անցընելու համար թատրոն չէինք երթար նախ գիրքը կը
կարդայինք յետոյ կ'երթայինք ինչ գերասաններ ինչ խաղարկութիւն էն-
ֆանթին ծայրը խեղճ ինֆանթ երկու կրակներու մէջ կ'ապրէր ինֆանթին
ժայնը դեռ ականջի մէջ է Rodrique ta valeur te rend digne de moi նախ
Սորպոն դպցի յետոյ ժտայ էթոյ Նորմալ Սէն Քլուէ էթոյ Նորմալը աստանկ
եղաւ Ահարոնեանք խօսեցաւ խօսեցաւ խօսեցաւ Զաւարեանն ալ լաւ կը խօ-
սէր բայց Ահարոնեանք տարբեր էր Զոֆէ Զոֆէ Արաքսի պէս յորդանոս
Մրտոն զիւրտ ծառայ մը օւնէր բարի հաւատարիմ իր տան մէջ մեծցած էր
անունը Ենթօ օր մըն ալ այս բարի Ենթօն կ'առնէ Մրտոնին նոյնպէս և խոյս
կու տայ կը փախչի բայց Մրտոն աստանկ բռներ կու տուող մարդ չէր
կ'առնէ հետը երկու շերտէր թիկնապահները եւ աստուծոյ երկու կարիճ տը-
պայ եւ ճամբայ կ'իյնէ մէկ օրէն կը բերէ նոյնը զիւրտը չի գտներ լաւ որ
չի գտներ դռնէր ուղղակի կը մեռցնէր կը մեռցնէր անպայման կը մեռցնէր
սիս այս զիւրտերը նորէն իրար խառնեցինք հա զանք նիւթին Վաղգէնը չը-
կրցաւ կատարելութիւնը զսպել եւ օր մըն ալ գիրք մը գրեց Եսահուրի մասին
յիման գիրք մը Մարգ մը որ Արարատ չունի իր հոգւոյն խորը աշպէս 1939ին
էր այն օրերուն եւ արձակուրդով Թրանսա դպցի կարդայ ինծի քանի մը էջ
տալ զիւրտ անխնայ փոթորկալ գիրք մը ինչ լեզու ինչ ջերմութիւն ինչ
զնայք երկու հարիւր էջ երկու հարիւր ամբողջը Եսահուրի մասին չէր կէ-
սէն աւելին ուրիշ բաներու մասին էր Վաղգէնի տէրերուն մասին էր իր դա-
պարտներուն պաշտամունքներուն պաշտած անձերուն մասին էր Նարեկա-
ցիէ մասին Վարուժանի մասին ինչ գիտեամ Հայաստանի մասին յեղափո-
խութեան մասին յեղափոխութեան լոյսէ զօտիին տակ կը սիրէր ըսել ասանկ
ալ կը գրէր, քաջերու մասին հերոսներու մասին վարք հերոսաց Եսահուր-
եան առկաի պարտեղ հայոց լեզու որքան կը սիրեմ ճեղ մէկը աշղ գիրքին
մեռադիրը Հայաստան տարեր է մեղք հոն չեն տպեր տպեն ալ կը խեղա-
թիւրեն մեղք մեղք ափսոս հազար ափսոս Եսահուրի նման մտքի անվարտի-
նէրն են միայն որ չեն գիտեր թէ արժէքներ կան որոնց վրայ զգուշութեամբ
քննադատութեան լոյսը պետք է ձգել եւ ամէն Եսահուրի տրուած չէ Սկիւ-
տարի խանութպանի ծուռ կշիռ մը մեռքը կենալ պատմութեան դիմաց ու
նմարին մէկ կողմը զնեւ ողջ աղբ մը ու միւս ափին մէջ հասարակ սրկկայի
մը անծայրածիր անպարտութիւնը եւայն աշպէս բաներ մեղք տեսարակի մը
մէջ արձանագրած եմ ասանկ Հինգ-վեց պարբերութիւններ ժամանակին բո-
լորը գոց գիտէի բոլորը ուրիշ շատ բաներ գոց գիտէի բանաստեղծութիւն
արձակ թատերգութիւն էջերով կարդացածս միտքս կը մնար Հիմա կը մոռ-
նամ հոս կարդացածս հոն կը մոռնամ շուտ կը մոռնամ տեսարակս պանդու-
կը ձգած եմ վաղը կը բերեմ վաղը հոս կ'ըլլա՞ն նորէն չեմ մոռնար կը բե-
րեմ վախ Վաղգէն վախ շուտ մեռաւ շատ շուտ մեռաւ շատ կեանք էր ամ-
բողջ կեանք էր իր գրածն ալ խոսածն ալ աղօթքն ալ վարակիչ էր հայհո-
յանքն ալ կ'ըլլէր էր փոթորիկ յետոյ տեցի որ Սիրանոյշ ամուսնացեր է լաւ
բոն է շատ լաւ ըրեր է աղուոր նամակ մը գրեցի իրեն ինքն ալ պատաս-
խան մը գրեց ամուսինն Սուլուիսի գիւղէն է կը գրէր երեք տղայ ունեմ կը
գրէր հրեքն ալ մկրտած եմ Սուլուիսի կոխին նահատակուած հերոսներուն

յաստան ներգաղթին Մուսուլմաններն քանի մը ընտանիք Հայաստան գացին լաւ ըրին ուրիշ քանի մը ընտանիքներ ալ հեռացան Մուսուլմաններն Հալէպ գացին Ամերիկա գացին Գանատա գացին ծօ Գանատա ինչ կայ մահ կայ մահ մահ գանդազ մահ զոնէ Մուսուլման մնային հայու պէս կ'ապրէին մարդու պէս կ'ապրէին մեքենայ չէին ըլլար Հայաստան պիտի երթամ անպայման պիտի երթամ զաւ տարի պիտի երթամ ես իրենց պէս չեմ մտածեր չեմ կարծիր չեմ չեմ չեմ Հայաստան ափսոս տասը անգամ աւելի կը ծաղկէր եթէ այդ երկու հրէշները չըլլային այդ Ստալին եւ Բերիա կոչուած արիւնարբուները չըլլային սատիք սատիք մարդ մեռցնելէն հանոյք կ'առնէին սատիք խելա-դարներ որքան տաղանդներ հեծեցին Բակունց ախ երթամ Մարութայ օտը հաւաքեմ գիւմ գտներ տամ գիւմ ծիրանի փող իմ քաջարծիւ թռուիկին քա-ջարծիւ քաջարծիւ ինչ զեղեցիկ բառ Բակունց լացօ կու գայ այդպէս աչքե-րուս մի նայիր մի նայիր գորղներէն կը վախնային հիմա ալ կը վախնան կը վախնան այդքան հակայ ուժ ունին հակայ կայսրութիւն ունին կը վախնան մտածող մարդ չեն ուզեր կը վախնան հա նոր պարբերութիւն մը յիշեցի Մարդ մը որ Արարատ չունի իր հոգւոյն խորը յիշեցի լմուցած ըսեմ արդ տասը տարիներէ ի վեր է որ դրիշ կը շարժէ այս մտաւորական պերճաղիւճը որ կը պտուկի բոլոր յետաշրջական Շարլ Մօրսեներու եւ Պուրճէներու եւ մանաւանդ ծառուղիական յետին գրչակներու հետ որ զոց կը սորվի զոց կը սորվի զոց կը սորվի նորէն մոռցայ շարունակութիւնը մոռցայ շարունակու-թիւնն ալ այդպէս է կրակոտ պարսաւ խարազան խարան խարան օտարածո-լութեան ու նահանջականութեան դէմ խարան գիւս հանգստեան կոչեցին ծօ ինչ հանգստեան եւ կրնամ հանգստեան ընել դործ գործ գործ հինները լմուցին դուցին Շահթ Աղրալեան Օշական լմուցին հանգստեան իրենց հոգիներուն խա-զաղութիւն բայց չհափազանցենք նորեր ալ կան նոր ծիւրեր առջի օր խժառ-դատուն մը գացի ալ նայեցայ մայր նայեցայ բոլորը երիտասարդներ ապրիք ծօ ըսի պրուս ըսի ապրիք հազար ապրիք նոր նոր ընծիւղներ ապրիք ծօ ըսի եղբայրօրէն լաւ դործ կ'ընէք գործը կը շարունակէք եթէ այսպէս գործ ը-նէինք հին դարերուն հայութիւնը այդքան չէր ձուլուեր Պալքաններու հա-յութիւնը չէր կորսուեր հոս լաւ ենք Ամերիկա լաւ չենք Յւրոպա լաւ չենք իւրտումներ կան բայց լաւ չենք կը մայրիք կը հիւծինք վայ վայ վայ հա-յութիւնը մօր կաթին հետ չեն ծծեր մեր մանուկները վայ վայ վայ մեղք ձուսուել վաթսուել եօթը աշակերտ ունէինք կէսը անապատէն հաւաքուած վշտահար վրէժխնդիր մանուկներ կարդալէ աւելի երգել կը սիրէին կ'երգէին կ'երգէին լիաթոք կ'երգէին անվախ քարին տակ չոքողը անսխալ խփողը թող գայ թող դայ թող գայ անսխալ խփողը ախ վազգէն ձուսուելի տղոց շատ կը հմանէր վշտահար ցաւ ունէր անապատ տեսած էր պատերազմ տեսած էր Հայաստանն ալ տեսած էր արմաշական տղոց հետ գացած էր Հայաստան ոտ-քին տակը դիտե՞ս ինչ կ'ըսեն ոտքին տակին ներքան կ'ըսեն այս ինչ զեղե-ցիկ լեզու է մեր լեզուն պէ բոլոր բառերը պէտք է սորվիլ ներքանները ճանչցած էին հայրենի հողը արիւնազանգ մեր հողը ինչ ճշմարիտ բառ է այս արիւնազանգը արիւնաթաթախ ցաւ ունէր ցաւ վազգէնը խորունկ ցաւ Շահ-նուրը այդպիսի ցաւ չունէր տառապանք չէր տեսած զրկանք տեսած էր մի-այն հա ուրիշ բան մըն ալ յիշեցի վազգէնին գրածէն կեցիք աւելի ամփոփ-ւիմ ու ըսեմ քեզ վէրքերովդ քեզ տառապանքներովդ քեզ արատներովդ քեզ կը սիրեմ Հայաստան այդպէս զօրաւոր կը սիրեմ կը սիրեմ կը սիրեմ կար-ծես մանճրացար հա սկսար ուրիշ կողմ նայիլ յայտնի է մանճրացար այս բաները չե՞ն հետաքրքրեր քեզ լաւ փոխենք նիւթը մէկ տեղ մնալ չեմ սիրեր չեմ կրնար առաջ ալ չէի սիրեր քնաւորութեան հարց է հա զանք ձուսուել-լին օր մըն ալ պիտի մզեմ երթամ ըսի մի երթար ըսին մեր տղաքը քեզ շատ

սիրելիքն են եւ ալ զդրեմէ պիտեցի ըսի բայց պիտի եթժամ բնաւորութեան հարց է նոր տեղեր կ'ուզեմ տեսնել ուրիշ հայեր երանի թէ իրենց խոսքը մայիկ ընծի յողնեացայ երեւի շատ կը խօսիմ սիրտս նոր սուրբ մը կ'ուռչէ դուն ալ կ'առնեն ոչ այս անգամ եւս պիտի վճարեմ կարսուն եթէ տուր չիս ուզեր գարեջուր մը առ կարսուն անգամ մըն ալ երբ իրարու պիտի հանդիպեմք առնենք իրարու կենացը խմենք կարսուն քումպուշի հայերը տարբեր էին մէկը բան մը կ'ըւէր քովինը կը հակահաստէր մէյ մըն ալ հայտէ կուիւ կը փրթէր պտուղացի հայհոյանք մէկը Սասունի բարբարոսի կը հայհոյէր մէկը Վանայ բարբարոսի սասունցիները Ռուբին փայլաւ կը ղովէին վանիկները Արամ փառ շան արի Արամ փառ ինչու այդքան շուտ մեռար տարի մըն ալ ապրէին երկու տարի ալ ապրէիւր բախտ չուները բախտ բախտ ալ պէտք է բախտ չուներք Հայաստանի Հանրապետութիւն Օձան կարու կը ճանչնամ Որբիթներէն մինչև խորհրդարան լաւ դրած է Արամ փառայի ծախն շատ լաւ այսչիւրեքի բարբարոսի հայհոյողներ ալ կային ամէն կողմէ կար բոլոր կողմերէն ճողողալըս մեկամ էին ինչու պիտի չկուէին թող կուսին հայհոյին այս ըսածս է Ժողով պահէ թող կտաւի լլայս առանց կոտիւ հայ չլլայր դուն ինչեղ հայեր լին լինիլիս մայ մէկ անկիւնի քաշումներից միայնիք ձմուպուշ ամենքը կը կուտէին իրիկուրը կը կուտէին առտու կը հայտանէին առտանկ հայեր էին կարդացցէք ըսի մէկ երկու բանաստեղծութիւն նորէն կարդացցէ՛ք կարդացին հեղինակը կեցիցի եւ հեղինակը մոռցայ անունը նորէն միտքս տող էր միտքս բոտ էր միտքս ասիկա բանաստեղծութիւն եղաւ հիմա քիչ իրարու երես հաշիցան կամաց կամաց կը հոսակեան ըսին վարժութեան ինչիւր է Ծօ ինչ վարժութիւնն տալը տարի է կը կարդում ձեր նոր կոչած այդ բանաստեղծութիւնը թերթերու մէջ կը կարգած դիւբերը կը կարգած եթէ նորութիւն լլայր անունը մէջ ինչու պիտի տեսնեի սիրտս պիտի տեսնեի արեւնս պիտի տեսնեիք նայեցան իրարու քրքջացին հոգս զիս չհաւնեցան եւ ալ զիրենք չհաւնեցայ եւ իրենցով տեսիլ խօսեցայ եղբայր մենք ալ եւրոպայ տեսած ենք Սարպան տեսած ենք էջըլ Նորմալ աւարտած ենք Պաղէր կարդացած ենք Մեծպօ Ալպաթրուս Գինովի նաւը խորունկ խորունկ բաներ միայն չարժում նոր նոր պատմիկներն չեղաւ չեղաւ անունով մէջերումներ ընկնով խօսեցայ Նաւրեկացիէն ալ մէջերումներ ըրի Սպարթ-Նուպայէն ալ աստեղ իրենց դարը տպւած վերջացած են ըսին հիշեցած են սըլեւց նայէ հիշեցած են եղիւ երբ երկու հայեր Նարեկացի կարդան իսկոյն եղբայր կ'ըլլան ըսի ուր ալ լլայն եղբայր կ'ըլլան Սպարթ-Նուպա կարդան եղբայր կ'ըլլան Արզիւան կարդան կ'ըլլան Դուրեան կարդան կ'ըլլան Մեծաբեց կարդան կ'ըլլան Վարուժան կարդան կ'ըլլան Թէգեան կարդան կ'ըլլան Սիմանթիօ կարդան կ'ըլլան Օշական կարդան կ'ըլլան Չարեց կարդան կ'ըլլան կ'ըլլան կ'ըլլան ձեզ կարդալողը պիտացան ալ կը ժողնայ ըսի պառակտիւններ ձեր գրածին հետ մարդ ոչ կապ կը գրայ ոչ եղբայրութիւն ձեր գրածին մէջ հողի չկայ որ եղբայրութիւն լլայս ձեր գրածէ թարգմանութեան հետ կ'առնեմ քոյ հոգալով քոյի իրենցով՝ պիտի պիտեմիք Ֆրանսերէն թարգմանուած բաներու հետ կ'առնեմ անգլերէնէ թարգմանուած չինուսալիներէն ձերը նոյնիսկ լաւ կ'առնեք հայուն ունեցածը կ'օտարացնեն ամէն ինչ կ'օտարացնեն լեզուն կ'օտարացնեն ոգին կ'օտարացնեն ո՞նք կ'օտարացնեն արի այդ թուրքը չարիքին տրմաւոր ան է ան թուրքը լաղագոյն չարի ալ տարանջից մեզ մեր հոգիներն աստեղահան ըլլաւ արմատախիլ եղաւք մեր հոգին ալ արմատախիլ եղաւ աստեղահան ըլլաւ ձօ աստեղ հայերէնը հայերէն է ցուրտ ցուրտ ուսնց հողիկ լեզու՜ կ'ըլլայ ձօ աստեղ

ՀԱՅԿԱՐԱՅ

բլլայ նորէն հայերէն է հայերէն կը գրեն ասիկա մեծ բան է պէտք չէ յուսահատիլ եթէ տաղանդ ունին կը խելօքնան կը խելօքնան անպաժան կը խելօքնան տաղանդը կը խելօքնէ՝ օր մըն ալ լաւ բաներ կը գրեն եւ ասոնք աւելի կը սիրեմ քան օտար լեզուով գրող հայերը հարիւր անգամ աւելի կը սիրեմ հազար անգամ աւելի կը սիրեմ բիւր անգամ անոնք օտարամոլներ են ստրկամիտներ են ֆրանսերէն գրող անգլերէն գրող թու նոյնիսկ տաղանդաւոր բլլան արժէք չունին հանճարեղ բլլան արժէք չունին չունին չունին ու չունին հիմա եթէ հոս բլլային ոտքս այսպէս դեռտին չէի զարներ իրենց գլխուն կը գարնէի դուն հիմա պիտի ըսես կը շափազանցես պիտի ըսես դուն ազգայնամոլ եւ ըսէ ինչ կ'ուզես ըսէ կը ստակեցնէի այդ դաւաճանները հիմա աստիկա ձգենք աստիկա բարդ խնդիր է հասկա այդ Սիւրմէլեանը այդ Շահնուրը Ծօ մարդ Լոյս գումարթ գրելէ ետք կ'ելլէ անգլերէն կը գրէ նա հանջը առանց երգի գրելէ ետք ֆրանսերէն կը գրէ հաստ մըն ալ ուսմանէն գրող ունինք Մարիետտա Շահինեան աստիկա դեռ ինչ որ է աստիկա կնիկ է տղամարդը աստիկա բան կ'ընէ՝ Սիւրմէլեանը ըրաւ Շահնուրն ալ ըրաւ աստիկա բան Արարատ շունեցոյնները միայն կ'ընեն հոգիդ սիրեմ վազգէն հիմա ինչ հղաւ ամերիկեան գրականութեան մէջ նոր տաղանդ մը աւելցաւ անոնք հազար ֆրանսական գրականութեան վրայ նոր տաղանդ մը աւելցաւ անոնք հազար հազար Սիւրմէլեան ունին հազար հազար Շահնուր ունին պղպշակ պղպշակ փրփուր մեզմէ բան մը պակսեցաւ մեզմէ ափսոս թուրքը միւսնորը ջարդեց ասոնք ալ իրենք գիրենք ջարդեցին ախ այդ թուրքը չարիքի արձատը ան է ջարդեց տեղահանեց բայց վերջացաւ ինչ վերջանալ հայ ժողովուրդը չի վերջանար փրկել փրկել փրկել պէս յարութիւն կ'առնէ նարեկացի Երանորհայի Նաղաշ Յովնաթան ինչքան հանճար խելք եւ տեսել էլի կը տեսնես էլի էլի էլի վայ վայ վայ տես իրենք են եկան այդ երիտասարդներուն կը սպասէի եկան երթամ քիչ մըն ալ անոնց հետ խօսիմ թող նորէն հին գլուխ ըսեն ինծի հոգս թող ըսեն եւ ալ իմ գիտցածս կ'ըսեմ չեմ վստիսար կ'ըսեմ կ'ըսեմ

ՊՕՂՈՍ ՄԻՆԱՅԵԱՆ

(Հատուած)




Իմացական Զարեու

Գ. Ա Բ Ա Ջ Ե Ա Ն

Բանաստեղծ Վահագն Դալքեանի ծննդեան 60ամեակին առիթով գրուած Գեորգ Արաքեանի հետազոյ գրութիւնը, ինչպէս եւ Մարտիկ Դալքեանի բանաստեղծական վաստակին անդրադարձող ուրիշ մը, մեզի զրկուած են ազգային, Սփիւռքի եւս Մշակութային կապի կամիսէի կողմէ:

Ձերմայէս յանձնարարելով Արաքեանի գեղեցիկ վերլուծումը, «Բազին» կը միացնէ իր տըրտաբույս քարեմազքութիւնները տաղանջաւոր բանաստեղծին ծննդեան 60ամեակին առիթով ընծայուած մեծարանքին:



ՎԱՀԱԳՆ ԴԱԼԹԵԱՆ

ԾՆՆԴԵԱՆ 60ԱՄԵԱԿԻՆ

Մեծանուն բանաստեղծ Վահագն Դալքեանը ընթերցողներէց, մինչեւ իսկ մերձաւոր մարդկանցից աննկատ բոլորեց իր կեանքի 60րդ տարին: Իրողութիւն է թէեւ, բայց դժուարութեամբ եւ հաւատած այս պատկանելի թուին, որովհետեւ տեսանելի չէ տարիների բնու բանաստեղծի ուսերին, ու

բովանդակել նա պահպանել է տակաւին երիտասարդ սրտի թրթռն ու կրտսիւ, ինչպէս թարգմանական, հրապարակաստական, խմբագրական ու հասարակական գործունէութեան ասպարէզներում եւ առաւել քերթողական արուեստում: Վ. Դաւթեանի գրիչը այժմ աւելի վարար է ու բեղմնաւոր, պոեզիան առաւել խորունկ ու յուզական: Այս իրողութեան վառ վկայութիւններն են վերջին ամիսներին նրա գրած բանաստեղծութիւնները, մանաւանդ «ԼՅՄ ԱՆՈՒՍՈՒՄ» բանաստեղծական շարքը: Նրա վերջին մի քանի տարիներէ ստեղծագործութիւնները մտքի եւ յոյզի դաշնութեամբ հասել են բիւրեղացիութեան վերին սահմաններին:

Ստեղծագործական բարդ եւ խորունկ խառնուածք է Վ. Դաւթեանը: Աւելի քան քառասունամեայ մի միջոցի չափաբերական արուեստի արտայայտչամիջոցներով նա կերտել է բանաստեղծի իր աշխարհը՝ շեղ ու լուսաւոր եւ անկրկնելի, աշխարհ, որ իրենն է եւ ուրիշներ չինել չի կարող: Ոգու թաղաւորութիւն է այդ աշխարհը, ուր յառնում է Վ. Դաւթեանի պոետական դէմքը անասուններ: Ոգու բանաստեղծ է նա, այն աննիւթականի ու սննդօրէնի, որին կրելու եւ եկողներին փոխանցելու իրաւունքը ժողովուրդը վստահում է իր քանքարաւոր զաւակներին: Այդ ոգու գերազանց գրեւորութեան իր ստեղծագործութիւններով, մասնաւորապէս «Ծաւփ Ծխանի» ժողովածուի առաջին գրքով (Իրաւունքի իրաւունքներով ու պոետներով («Ո՛ր տայր ինձ գծաւ ծխանի», «Աստիւղիկ եւ սրի», «Ճերմակ ձիւարք», «Զուարթնոց», «Թոնդրակնիցիներ») մեր պոեզիային բերել էր մտածողութեան ու պատկերակերպման մի ինքնատիպ համակարգ, որ երեւոյթ եղաւ սովետահայ բանաստեղծական արւեստի առաջնային անհապարհին:

Իր ստեղծագործական խառնուածքով Վ. Դաւթեանը դարձել է քանդակարար: Իր ստեղծագործութիւնները աշխարհն ու մարդուն ընկալում եւ իմաստաւորում է քանդակչուի նուրբ զգայարաններով՝ իր մտածումները թաթախելով ճշմարիտ յոյզերի անխառն աւազանում: Հայրենական զգացմունքների տեսական կոտակման, ապա եւ ծայր շիկացման ու բոցավառման մեծախորհուրդ մի արարում է «Ծննդավայր» շարքը:

Բանաստեղծը ծնունդ է Արեւմտեան Հայաստանում՝ Արարիկում, բայց վաղ մանկութիւնից տարել է Երեւանի Արարիկ թաղամասում, ուր հիմա նրա տունն է: Եւ հազիւ թէ աշխարհի բարուն եւ շարին անհաղորդ մանկան ընկալումները չինէին այնքան առարկայական, որ իր առնական հասակին կարենար կրկին վերականգնանքնել, յարութիւն տալ դրանց: Միայն անախ երեւակայութիւնը կարող էր ստեղծել միացող յուշերի, անցածաց կարօտների, լուսածին թախիծների ու հեքիաթային անսխիւքների այն ոսկեայ շղթան, որ «Ծննդավայր» շարքն է: Իրականի աննշմար մի բեկորից Վ. Դաւթեանը կարողանում է կերտել երազների մի տաճար: Ներշնչանքի նման պահերին պարզ ու մեկին յայտնում է բանաստեղծի ուսմանտիկական խառնուածքը: Բանաստեղծը իր հայեացքը յաճախ է դարձնում իր նախահիմքերին՝ եռակ հարցականը շուրթերին: Ո՞վ է ինքը, որտեղից է գալիս եւ ո՞ր պէտք է դնայ: Այս հարցումների տրամաբանական ընթացքը բանաստեղծին առաջնորդում է դէպի համապարփակ ու համամարդկային վսեմ իդէալը, կանգնեցնում նրան մարդը իր պարտականութիւնների առաջ ծանր խնդրի դիմաց: Մարդկային պարտականութեան այդ ծանրութիւնն է, որ Վ. Դաւթեանը կրում է ներշնչանքով, անճիգ, անկաշկանդ, կրում է իր բոլոր սեփական դոյութեան կենսական պարժան: Բանաստեղծի հարցումները ո՛չ անմահական են, ոչ էլ ցեղային ինքնատիրութիւնը շոյելու դաշնակցութիւն: Դրանք

մարդկային հողում տիեզերական ներդաշնակութիւնը գտնելու որոնման տեն-
շանքի թելադրանք են: Ահա թէ ինչու բանաստեղծը իր հայեացքը յաճախ է
դարձնում իր նախահիմքերին՝ պատասխան գտնելու իր հարցումներին:

Ու ես քօթափամ իմ անհնաւթեան տաւերները սեւ
եւ ստուերներից միակ կապաշտը՝
Կարօտը առած,
Դէպի սկիզբն եմ ընթանում ահա...

Վ. Դաւթեանի հայրենասիրութիւնը պարզ սիրոյ խոստովանութիւն չէ,
նրա գոյութեան հիմքերի հիմքն է, իր էութեան սրբազան թրթիւրը: Եւ այս
թրթիւնն է նկարել բանաստեղծը երկնային կապոյտ, թափանցիկ ու ջինջ գոյ-
ներով, պատկերել հայրենի օրրանը, հեռում մնացած իր տնայն առաւելին
սուաւօտը, հաղթիւրը ջինջ, գլուսեղէն ամպը, Ոսկեգետակի ափին վեր խո-
յացած բարդին, հողի բուրմունքը, հայրական տան ճակատի կտուրը, ճիթ
վերձակը, ողբերգականի բնագոյական զգացումից ունացող շունը, արեւոտ
հանդերձ ու կանաչապատ լեռները: Վերջապէս ա՛յն ամէնը, ինչը ամփոփել
կարող է հայրենի եղերք հասկացութիւնը: Հայրենի, որ հիմա հեռաւոր մի
տեսիլք է, ցաւոտ կորստներէից փնջուած տանջող յուշ:

Դու՝ իմ կորուսեալ, դու՝ իմ անտեսաց,
Հեռաւոր զօղամբ փշրուած զանգի,
Դու՝ զանգակատուն իմ անբախտում,
Դու՝ տա՛մ անխնայ իմ երազանքի:

Բանաստեղծի հոգեկան տուայտանքները իրենց տրամաբանական ըն-
թացքի յաջորդ աստիճանին փոխում են բողոքի՝ ընդդէմ ուշիտարհի անար-
դարութիւններին ու անբարութիւններին, աւելուած մայր ժողովրդի պատ-
մական ճակատադրին:

Խնչու այնպէս եղաւ, որ աշխարհում
Եւ կարող եմ հիմա ամենայն տեղ գնալ,
Լույ չեմ կարող գնալ հայրենի տուն:

Եւ տուայտանքների խորքից հնչում է արդարութիւնը հրամայաբար
պահանջող բանաստեղծի մայնը:

Հասկացի՛ր, Աստուած,
Կանչում է մա ինձ...

Յաղթահարելով տառապանքի ահադնութիւնը բանաստեղծը ընթանում
է դէպի լոյսի աղուսները, կերտում հեքիաթ — տեսիլներ, յաւերժակա
դոյի խորհրդանշիչը:

Անկէզ մտքեմիւ այրում է, այրում,
Եւ չկայ մոխիր,
Զկայ սայառում եւ չկայ վախճան...

Այսպէս անմոխիր այրումով է ստեղծագործում Վ. Դաւթեանը: Թէեւ
բանաստեղծի արտայայտչական միջոցները, բառերն ու բանաստեղծական

պատկերները ձեռնարկուած են աստղալուսի մէջ՝ հասցուած վերացարկման բարձրագոյն կէտին, միտքը, տեսիլքը, սակայն, զարմանալիօրէն կոնկրետ է, շօշափելի՝ ժամանակի ու տարածութեան մէջ, «հողեղէն», «նախնական ու սլարք» եւ յոյժ ժամանակակից:

Վ. Դաւթեանի յետադարձ հարեացքը «նախնական առաւօտներին» նաւ հանջի կոչ չէ մարդկութեան ականջին, մարդու մէջ ներհող սուրբ ու անաղարտ զգացմունքներ արթնացնող կանչ է:

Գնա՛ւ... .

Եւ աղբիւրների՝

Ջինջ ու գրեզուն մանկութիւնների

Ակումքների մօտ

Խնկաչափ իջած

Հաւաքեմ աքաբար արեգակ ու խիզմ... .

Բանաստեղծի այս անշը մարդուն մաքրագործելու նպատակի գիտակցումն է, իր ժամանակի ծանր բեռը կրող արուեստագէտի մասնագիտութիւնը մարդու հակաստեղծի հանդէպ: Անսկիզբ ու անմահական ժամանակի մէջ բանաստեղծը որոնում է գտնում է լոյս-տեղեկութիւն, որից կարելի է հաւատքի զարգացում արեգակ ու խիզմ՝ մարդկանց տալու համար: Այսպէսին է Վ. Դաւթեանի աշխարհընկալման առանձնաշատկութիւնը՝ փիլիսոփայական խոնձը, թրծումը՝ տաք զգացմունքի քուրայում: Այս միասնութեան մէջ են ծընունւմ բանաստեղծական գիւտերն ու ենթարկւողութիւնն ծաղաւորումները, որ բանաստեղծի ծանրակշիռ աւանդն է մեր պոետական արուեստի զանաւարանում:

Դաւթեան արուեստագէտին քննորդ է սիմֆոնիկ կոմպոզիցիոն մասնագիտութիւնը: Այս էլ իր կարգին պայմանաւորել է նրա հակառակութիւնը բանաստեղծական շարքերին: Բանաստեղծի ոտնդադործ տուայտանքները ծընունւմ են եւ այն գիտակցութիւնից, որ անթուարկելի են մարդու զգացմունքները, միջոցաւ մարդկային լեզուն սահմանափակ է եւ ոչ բոլորի համար անուն ունի: Այս պարագան ստիպում է նրան սրունել-գոնել զգացման առաւել ամբողջական բառ — համարժէքը: Այստեղից էլ բառապաշարի հարստութիւնը՝ գոյներն ու պատկերների բազմապիստութիւնը, յուզական շաղախը:

Այս տոնումով բացառիկ գործ է «Ինքզինքն» պոեմը, որի նիւթը առնչւած է մեր ժողովրդի մեծագոյն ողբերգութիւնից՝ Ելեոնից: Պոեմում մահու եւ կենաց օրհասական մաքառումի խուչ հաւաքանքների խորքից բարձրանում է կենաց կանթեղը՝ «Սուրբ-սուրբ»ի մեղեդին, եւ բանաստեղծի, հետեւաբար եւ ընթերցողի հայեացքի դիմաց բացւում է «Արեւաւոր հովտի» ու «Անկէզ մարմնու» յանձնական պատկերները:

Այնտեղ՝

Յաւերթի կապոյտ սանձամբ

Վառում, ցոլում է ծաղիկը երկէզ...

Քա ջայգաւաղկի

Կերտնի առաջ

Խնկաչափ եմ ես...

Հարուստ է պոեմը տաղաչափական բազմազանութեամբ, բանաստեղծ յղկուած ստեղծական արուեստով: Սակայն այդ չէ զարմանալին ու հազուադէպը: Ազգեցուցիչը բանաստեղծի լինելութեան կարողութիւնն է: Վերջում...

ւը, ինչպիսին էլ այն լինի, երբեք չի կարող ունենալ ապրումի պահի ուժգնութիւնը: Բանաստեղծը ծնունդ է Եղեռնից տարիներ յետոյ, չի տեսել կոտորած ու արիւն, եւ սակայն աղչային ողբերգութիւնն ընկալել է մահուան ռարսափն աղբողի զգայարաններով: Այստեղից էլ պոեմի ցնցող ներգործութիւնը: Խոշոր արուեստագէտների ստեղծագործութեան խորհուրդը չի կարող ամփոփել նրանց ապրած օրերի, նրանց ֆիզիքական դոյութեան չըջանականութիւնը: Լինելիութեան հրաշք ուժով նրանք ապրում են այն ժամանակի մէջ, ինչը պատկերուած է իրենց ստեղծագործութիւններում: Լինելով ժողովրդի համահաւաք յոյզերի արտայայտիչը, նրանք քայլում են անյիշելի ժամանակներից մինչեւ իրենց օրերը եւ իրենց ֆիզիքական դոյութիւնից յետոյ էլ դարձեալ քայլում են եկողների հետ: Եւ տարեքային թուաբանութիւնը կորցնում է իր իմաստը:

Վ. Դաւթեանի հայրենասիրական քնարի ամենազիւ զօղանջը «Հայաստան, Արա Գեղեցիկ» պոեմն է: Այն մի մեծածաւալ պաննօ է՝ դնուած հայոց լեռնաշխարհին այնքան բնորոշ գեղանկարչական տաք ներկերով, արեւային թէ՛ դոյներով: Պոեմը հարուստ է հնչիւնային եւ գունային ելեւէջներով, բառը, ժայռակոփ պտտկերները արժակում են արեւային ջերմութիւն:

Պղնձէ քար է, պղնձէ վիեեր,
Պղնձէ տապ է,
Պղնձէ սօք է,
Պղնձի հեւք է,
Պղնձի քարակ տաք ու շէկ փաշի...

Պոեմում Հայաստան աշխարհն է թանձրացած գեղանկական առաւօտներէից մինչեւ ներկայ օրերը, եւ դեռ գալիքը, աշխարհ, որ հող ու քար չէ, ոչ իսկ աշխարհագրական սահմանի հասկացութիւն, այլ՝ մի դոյացում, որ բազմաբնուէն է գերազանցիկ տաք աճիւններից, «հացի բոյրից», «կարօտներից», «հաւատանքների սուրբ մատուցներից», «ցայգածաղկի բոսոր այրումից», «ծխանի ծխից» եւ, վերջապէս, «մեր համբերութեան քարէ բերդերից»:

Հայաստան աշխարհ,
Դու խաչելութեան, ցաւի քախծութեան
Եւ հրաշալի ու մեծ յարաբեան
Անվերջապալի արարողութիւն...

Այս գանգիւղանալի արարողութեանն ոգուց բարձրացող մառախուղից գասողեր են ծնւում աշխարհում: Այսպիսին է Վ. Դաւթեանի կերտած Հայաստան երկիրը:

Անհանգիստ, անդադար որսնող է Վ. Դաւթեանը, որոնում է տակաւին, անյայտ գեղեցկութիւններ, որոնում ներդաշնակութեան իր իշխալը, եւ որքան մօտենում է իդէալին, այնքան վերջինս հեռանում է: Այս անգիւղանալի որոնման մէջ է բանաստեղծի ստեղծագործ կեանքը, եւ սպառումի երկիւղն է անծանօթ նրան:

Վ. Դաւթեանի քնարի միշտ զօղանշող լարը սէրն է, սէրը բիւրացատու հիւսիքներով, ասրոտուն թրթիռներով, անմատչելի գեղեցկութիւնների հսկիւր անգիւղ վազելու քաղցր աքնութեամբ ու թախծաւ մրմունջներով, վայելքի հրճաւանքներով:

Աշխարհի քաղաք ճախապահներից
Ամենաերկար
Տանգալին է մնա
Նուրազալին է, սակայն ամենից:

Այս «ամենաերկար» ճանապարհը նրան տանում է սիրոյ յաւերժութեան
գաղափարին՝ յինակէտ ունենալով մարդու երաններում հուսցող արեան թըր-
թինն ու բնութեան առողջ մայնի հեթանոսական զօղանջը: Միայն զեղեցիկ
սեռի օրհներգութիւնը չէ սէր Հասկացութիւնը Դաւթեանի պոեզիայում. այն
Համապարփակ է, տիեզերական: Այստեղ է ամփոփում բանաստեղծի ողջ
աշխարհը իր բազմերանգութեամբ: Եւ պատահական չէ, որ իր 60ամեակի ա-
ռիթով Հրատարակուած Հաւընտիրը կրում է «Աստ սիրոյ» խորագիրը:

Վ. Դաւթեանի քնարի բոլոր լարերը Հանդուցաւորում են «Տաղարան»
շարքի գործերում: «Տաղարան»ը արտակարգ ներութեամբ կերտուած բա-
նաստեղծի աշխարհի մանրակերտն է, արաման ու ներշնչանքի, կարօտի ու
երազների, հողի ու ծաղկի բուրմունքի, երգի ու կրակի, արեան ու սիրոյ
թրթիռների մի Հոգեզմայլ Համանուագ:

«Մի լիցի ինձ երկմիլ եւ ոչ ծնամիլ... Ամպիլ եւ ոչ ամօրեւիլ... Ընթա-
նալ եւ ոչ հասանիլ»: Նարեկացու այս հանճարեղ խոհը արձագանգ է գտել
Դաւթեանի գրեթէ բոլոր հատընտիր գործերում, դարձել Հիմնական մեղեդի:
Դրա փայլուն արտացոլանքներից մէկը «Երբ վերջին անգամ աչքերս փակ-
ւեմ այս աշխարհի դէմ» տողով սկսուող բանաստեղծութիւնն է, սովետական
պոեզիայի դժգոհներից մէկը: — Սէր, հայրենի եզերք, հրդ. — ահա՛ այն եր-
րորդութիւնը, որի վրայ բարձրացել է բանաստեղծի աշխարհը: Սա երեւու-
թականն է: Բանաստեղծութեան խորհուրդը խորքում է թաղուած: «Ուսարո-
րիկ աղջկայ» Հետքերով վազել է բանաստեղծն ու չի հասել, «արեւաւոր Հե-
ռաւոր Հովիտը» գտնելու համար քայլել է անվերջ ու չի հասել, «անմեկնելի
ու անեղերական» մի երգ թրթռացել է շուրթերին եւ այդպէս էլ չի ծնուել:
Այս անհասանելիութիւնը զանազան թախտութեամբ է լցրել բանաստեղծի
սիրտը: Այս անհասի որոնումների մէջ է բանաստեղծի ինքնատիպ անհատա-
կանութիւնը: Իրականութեան եւ երազանքի միջեւ ընկած պարապը ո՛չ միայն
չի լցւում, այլեւ աւելի է խորանում, որից բորբոքում է բանաստեղծի ապ-
րած դրաման: Իւ ո՛րքան փոթորկւում է, ա՛յնքան նա մղւում է նոր որոնում-
ների: Բանաստեղծի գրամատիկ ապրումների մեծաբուհեացող դրսեւորումներից
է եւ «Գիրք ծննդոց» («Արարչութիւն» խորագիրն ունի վերջին գրքում) պոե-
մը, որն ըստ էութեան հերքումն է բիրտական ուսուցիչի: Աստծոյ՝ մար-
դուն շնորհած Կիրակին չեղաւ, մարդը չհասաւ իր երազանքին եւ ահաւոր
սառապանքի գրկում ստեղծեց լոյսի իր տեսիլքը, եւ սակայն՝

Նա ուզեց քանի լայն աչք հեռացնալ,
Բայց աների մէջ պարապը մնաց:

Մարդը, սակայն, չի վհատւում: Անհասանելիութիւնը աւելի է բորբո-
քում որոնման տենչը եւ ծնւում է երազանքը, երազանքի կարօտից՝ սէրը,
սիրոյ տառապանքներից՝ երգը, երգից՝ կրակը, կրակից՝ գինին եւ այսպէս
անվերջ, միշտ անհաս, եւ մարդու առջեւ փռւում է «յոգնած յաւիտենութիւ-
նը»: Վերջապէս է Վ. Դաւթեանի փիլիսոփայական խոհերի շղթան: — Թեա-
լիքը ուժանտիկական շրջանակներով պարփակուած՝ այսպիսին է Դաւթեա-
նի արուեստը: Նոյն անհասանելիութեան գաղափարն է սնցնում եւ «Երթանի
ծառը» գրամատիկական պոեմի մէջով: Բանաստեղծի փիլիսոփայական խո-

Հերի ծուռություն տարբերակն է այս պոեմը, ուր կրկին յայտնւում են նախորդ պոեմերից ծանօթ խորհրդանշականները՝ «կարմիր ու կանաչ աշխարհի» տեսիլքը, ծիրանի ծառը՝ նոյն ինքը անկէջ մորենին, երազանքն ու որոնման տառապանքը, երազանքներում թրծուած ճախրող միտքը, ասէրն ու երջանկութիւնը, կատարելագոյնի ետեւից խելայեղ վտպքը։ Որոնման վազքի մէջ է տեսնում բանաստեղծը մարդու երջանկութիւնը՝ որոնման տառապանքը դեռուող աստեղծի անդորր վայելքից։ Վ. Դաւթեանի ստեղծագործութիւնը իր հաշուեկշռում մարդու որոնող մտքի ներբողումն է, յաւերժական շարժման, կեանքի յարատեւութեան, մարդու հոգու մէջ տիեզերական ներգաշնակութեան տեսիլքի փառաբանումը։ Բանաստեղծի ստեղծագործութիւնը անթերի պատասխան է ո՞վ է ինքը, որտեղի՞ց է գալիս եւ ո՞ւր է գնում եռեակ հարցումին ու նաեւ մարդը իր պարտականութեան առաջ մեծագոյն խնդրի լուծումն է։

Սնյիշելի ժամանակներից քայլող, պատմութեան արեւնոտ քառուղիներով անցած, ապա եւ «սքանչելի յարութեան» բերկրանքով ապրող ժողովրդի բանաստեղծ զուակը չորս տասնամեայ մի միջոցի մեծ աւանդ է ներդրել հայ պոեզիայի զանաւարտում։ Վ. Դաւթեանը այն բանաստեղծն է, որի բնատրանիով համարձակ կարելի է մտնել եւրոպական ժամանակակից պոեզիայի ունգտստանը եւ ներկայացնել հայ ազգայինը՝ հայկական համամարդկայինը։

ԳԵՈՐԳ ԱՅՆՁԵԱՆ

Դու աչքերդ աւելի պայծառ եմ քան հոմ շողացող արցունքը
— Հարցուցէ՛ք անձրեւին —
Նախանձը կը գրգռեն երկինքին

Բիւրեղը երբեք այնքան կապուտ չէ որքան երբ կը փշրի
Ո՛վ թրջուած Լոյս՝ եօթը վիշտերու մայր
Եօթը սուրբը նեղքած եմ գոյներու պրիսմակը
Շատ աւելի ներթափանց է Այգը որ կը ծագի արցունքներու մէջէն
Ծիածանը աւելի կապոյտ է գիմէ ծակող սուգին սեւ կէտով

Գծրախտութեան մէջ քու աչքերդ գոյգ խռոշներ կը բանան
Ուր կ'իրագործուի Մեղերու հրաշքը
Երբ երեքը մէկ կու գան սրտատրոփ
Մարիամի վերարկուն մտորին մէջ կախուած կը մնայ

Բառերու Մայիսին՝ բերան մը լռի քաւարար է
Բայր տաղերուն եւ բալար հատաչներուն համար
Բիւրաւոր աստղերով երկինքի կտոր մը միայն
Անմէք պէտք ունին աչքերուդ եւ անոնց երկտարեակ խորհուրդին

Գեղեցիկ պատկերներով հմայուած Մանուկը
Իր աչքերը կը բանայ նուազ անհունութեամբ
Երբ դու աչքերդ լայն բանաս չեմ գիտեր թէ կը ստե՞ն
Կարծես տեղատարափը կը բանայ վայրի ծաղիկներ

Աչքերդ փայլակներ կը պահեն այն ծաղիկին մէջ
Ուր միջատներ իրենց տարփագին սէրը կ'ապրին
Եւ բռնուած եմ թռչող ասուպներու ցանցին մէջ
Նման նուագի մը որ կը մեռնի Օգոստոս ամսուն

Եւ մատներս աչքած եմ քու աչքերուդ արգիւտած կրակէն
Ո՛վ գրախտ հորիւր անգամ վերագոնուած եւ վերստին կորսուած
Աչքերդ իմ փերուս եմ իմ Հայտարարատու իմ Հնդկաստան

Պատահեցաւ որ իրիկուն մը տիեզերքը խորտակուի
Ժայռերուն վրայ գորս նաւաստիներ քոցավառեցին
Եւ ծովուն վերեւ կը տեսնէի աչքերուդ փայլքը
Ելգային աչքերը Ելգային աչքերը Ելգային Աչքերը



ՏԱՂ ԷԼՁԱՅԻՆ

Կը դպիմ քեզի եւ կը տեսնեմ մարմինդ եւ դուն կը շնչես
Այլեւս իրարմէ հեռու ապրելու օրերը չեն
Դու՛ն ես ահա կ'երթաս ու կու գաս եւ ես քու կայսրութիւնդ եմ
Հաւագոյնին եւ յռոնգոյնին համար
Եւ դուն երբեք այսօր հեռու չեղար իմ տենչամբէս

Միասին մեմք կը գտնենք հրաշքներու երկիր մը
Բացարձակին գոյնով լրջագոյն հանդէր
Բայց կ'անդրադառնամ որ կ'արթնամ
Եթէ ականջիդ շնչեմ հրաժեշտի խօսքեր
Կարծես դուն գտնենք չես լսեր այլեւս

Ան երկար կը բնանայ եւ ես մտիկ կ'ընեմ իր լուսիւնը
Ինքն է քուերուս մէջ մերկան եւ սակայն աւելի
բացակայ եւ ես աւելի մեծաւոր
Իր խորհուրդին այնքան մօտ
Ինչպէս քախտախաղի մօլի մը որ իր մետած
զարհրուն վրայ կը կարգայ կորուստին կէտերը

digitised by A.R.A.R.@

Օրբ որ կը թուի զինք դուրս բերել իր բացակայութենէն
Աւելի յուզիչ կը դարձնէ զայն եւ աւելի գեղեցիկ քան ինքը
Ան պահած է ստուերներուն բոլորն ու էութիւնը
Ան մահն է զգայարանական երազի մը
Օրբ որ զինք կը բերէ ինքի գիշեր է տակաւին

Ամէնօրեայ մացառուներուն կառչեցանք մենք
Կեանքը պիտի անցնի ինչպէս յամառ եղանակ մը
Երբեք պիտի չկշտամք իր աչքերէն որոնք զիս սովորաւ կ'ընեն
Իմ երկինքս իմ յուսահատութիւնս իմ կինս
Տասներեք տարի հետամուտ եմ եղած քու երգեցիկ լաւութեանդ

Ինչպէս որ խեցին կը ձայնագրէ ծովը
Դու՜ հոգիս գիտնուցիր տասներեք տարի տասներեք ամիս տասներեք ամառ
Տասներեք տարի դադացած եմ ցնորքներու շեմին
Տասներեք տարի փոքրահասակ ռաբաթիկ մը
Տասներեք տարի դաւակից ցնորածին կորուստներու

Ով իմ պզտիկ ժամանակին հետ չեմք կրնար չափուիլ
Հագար ու մէկ գիշերներն իսկ անբաւարար եմ սիրահարներուն
Տասներեք տարին օր մըն է միայն եւ յարգի բոց
Որ կը վառէ մեր շտեմարանն օդակ առ օդակ
Կախարդական գորգը մեր առանձնութեան

(Հայացող՝ Մ. ԻՇԽԱՆ)

ԼՈՒԻ ԱՐԱԿՈՆ

Ս. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ

ՏԱՍՆԵՐՈՐԴԸ՝ ԻՆՆԵՐՈՐԴԻՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ



Իսպրահիմ Մարգարի զրոյնի՝
«Սրճարան» Փէյրուի մէջ

Ութ տարուան պարապալիւր ընդհատումէ մը ետք, Սուրբ Թանգարանին կերպարուեստին 10րդ «Անան սալոնը» (125 գործեր, 72 արուեստագէտներէ՝ վերջը մահացած 1975էն ետք) (*), կարեւոր «դէպք» մը ըլլալէ աւելի, մեզի՝ լիբանանցիներու համար, կը նշէ ուրախալի՜ փերազարձ մը: Սակայն ընթացիկ լրագրութեան կը թուոյնք անոր առնչուած գրականութեանց բացայայտումը, վրատահ՝ որ այժմէ հզածը պիտի գրուի:

Սովորական պայմաններու մէջ, եւ առարկայականօրէն զիտուած, Թանգարանին տարեկան գոյգ «Մալոնները» կարեւոր եղածին չափ ամբողջական ներկա-

յացումներն են տեղական ժամանակակից կերպարուեստին եւ, իբրեւ այդպիսի՝ այս նուաճանդէսները եղած են առնուազն պատմականօրէն արժէքաւոր առիթներ: Բայց 1982-1983ի «Անան սալոնը» շարքի մը մէկ օղակը կարեւոր չէ նկատել, որովհետեւ թէեւ միւսները մնացած են երեւոյթներ՝ փոխուած են սակայն շատ բաներ, ամէնէն կարեւորը՝ փոխուած է ինքը՝ իրականութիւնը:

Մարգարի, եւ այս պարապալիւր՝ արուեստագէտին, քննադատին եւ գիտողին արխարհաշխարհը, առնուազն տեսլակերպը կը պայմանաւորուի առեւալ իրականութեամբ. այս պայմանաւորումը կրնայ տարբերիլ՝ կրաւորական ֆերդաշնակումէ մինչեւ բուռն հակադրացութիւն. կը մնայ իրականութիւնը՝ իբրեւ հիմնական ազդակ:

Վերջին ութ տարիներու մեր իրականութիւնը պատերազմի իրականութիւնն է. անոյ պայմանաւորումն են մեր աշխարհահայեացքն ու չափանիշները, այսինքն՝ անկէ զառաջի՞ք եւ «վերջի» ստորագրութիւններով: Բազմաառական մտածողութիւնը եղած է մօտեցումի կերպ, նոյնիսկ եթէ այդ թուի ոչ-մասնագիտական կեցուածք գեղարուեստական քննադատութեան համար, հետեւաբար՝ արժեւորումի խորթ կերպ: Իրողապէս, սակայն, զառաջի-ետքի՞ք ստորագրութիւնները առժամապէս կը կազմեն մեր իրականութեան ներքին տրամաբանութիւնը: Եթէ արուեստը, ամէնէն անհատապաշտական-ներհայեցողական գեղագիտութեան տեսանկիւնէն ալ, գերազանցապէս զգացական-զգայական գործունէութիւն է, որեւէ բանի արտայայտութիւնը ըլլալէ ոտաջ, ապա այս երկրին մէջ չկայ նոյն-


digitised by

A.R.A.R.®

իսկ մէկ մարդ, որուն առօրեան եւ ներառաւ չփոթորկէր։ Ուրեմն, աւելորդ է արծարծել տեսական հարցեր՝ թէ ճիշդ է «Տասներորդ սալոն»ը դիտել առօրինակ տրամաբանութեամբ, կամ թէ՛ արուեստագէտը որքան էր արուեստէն պէտք է զօհէ ոչ-արուեստագիտական խնդիրներու։ Առնուազն լիբանանեան արուեստներուն պարագային, նման կէտերուն վերջին կէտերուն հետեւին արուեստի պատմութեան ընթացքի թիւը ըմբռնում։ Անշուտին կեանքը հոս հասած է այնպիսի հանդիմանի մը, ուր ընդելուզուած է ներքին եւ արտաքին, հոգեկան եւ ֆիզիքական թիւալիկան եւ նիւթական տարրերը՝ ուժական միութեան մը մէջ։ Թիւալիկան թանաստեղծութեան եւ իմաստասիրութեան, արուեստանոցի ներկայութեան ժամանակները անցած են։ որովհետեւ ուղղուած են մահու եւ կեանքի, չափի եւ ուրախութեան, բնագոյնապէս եւ անհատական քարտափի բոլոր երանգները։ Ապրումն են պահեր, ուր անցնել եւ ներկայ տեսութիւնները, վարդապետութիւնները ենթարկուած են խրդախաբի հաշուէյարդարին։

Լիբանանեան կերպարուեստի պարագային կարելի չէ կառնած մնալ այնպէս կոչուած «միջազգային» ոճերու՝ իրեն զեղեցկութեան մնայուն արժեքափերու։ Նոյնիսկ եթէ անոնք յարմարած ըլլալին նախապէս, անոնք այսօր ժամանակավիշակ են։ Նոր իրողութիւնը դոյն թիւն ունի բոլորին համար եւ բոլորէն անկախ, ինքն է, որ տնհրաժեշտ կը դարձնէ միակ հրամայականը՝ փնտռելու ո՛չ թէ սովորական իրողաշտութիւնը, ո՛չ թէ անստեղծագործ բնագոյնութիւնը, այլ՝ պարզապէս արուեստագիտական անկեղծութիւնը եւ, մանաւանդ՝ քաջութիւնը ընդունելու նոյնիսկ սեփական անկարողութիւնը արտայայտելու զգացումը՝ իր մղձաւանջային հեռաւորութիւններով։

Ինչ թէ շատ դիտակից այցելուն ա՛յս մասսեւիտումով կը բարձրանայ Սուրբ Թանգարանին առաջին յարկէն, ուր կը ցուցադրուին միայուն հաւաքածոյէն գործեր, զէպի երկրորդ յարկը, ժողովին փոխանցուելով զառաջուան արուեստէն «Ետքինին», եւ ոչ թէ պարզապէս 1974ի ձիւներորդ աշնան սալոն»էն դէպի 1982ի «Տասներորդ աշնան սալոն»ը։ Սակայն



Միշտ Գաղափարի Համապատասխան ընդունող պատկերային զարմ մը
Digitised by A.R.A.R.®



«Շուկան», գործ՝ Փարիս Հատտաթի

այդ աստիճաններում վրայ կը լքուի ներկան, այսինքն՝ «ետքը», քաղիքներու ետին կ'անցնի ութ տարիներու ժամանակաշրջանը եւ դիտողը կը պարտադրուի իններորդին տրամաբանութեամբ շրջանը բնի։ Երա՛հին։ Այս ժամանակաշրջանին եւ առհասարակ մարդուն բացակայութիւնը անպայմանօրէն ուշադրութիւնը կը գրաւէն դիտող հասարակութեան եւ երեւոյթը կրնայ արժանանալ որոշ հետաքրքրութեան։ Սակայն հարցը շատ աւելի բարդ է նոյնիսկ ամէնէն ձեւապաշտութեան պահանջները արուեստարանին համար (վկայութիւնները կարելի է գտնել տեղական մամուլին մէջ)։ Սալոնին մասին լոյս տեսած յօդուածներուն մէջ)։ Որովհետեւ, այս ցուցահանդէսով՝ կը նահանջէ ո՛չ միայն մարդուն արդար իրաւունքը ինքզինքը արտայայտելու իր արուեստին մէջ, այլեւ կ'իյնայ զբաւը, որ սովորաբար կը դրուի անհատին փորձառութեան ուժգնութեան վրայ՝ իբրեւ հայրթայթիչը գործին անկեղծութեան, նաեւ՝ զեղեցկութեան։ Յաճախ կը մոռցուի, թէ գործնականապէս Հոմերոսը չէր աշխատում քանդակագործութիւն չափաւորօրէն ներշնչելով։ Էականը արուեստագէտին աշ-

խորհաշայտացին բնոյթը եւ անոր համապատասխան արուեստի ըմբռնումն է։ Փորձառութիւնը ինքնին մեկնակէտ է։ Հոմերոս, որ արուեստագէտին անհատականութեան ընդմէջէն կը վերածուի մնայուն արժէքի։ Արուեստի առարկային մասին արուեստագէտին պատկերացումը այնպիսին է, որմէ ինքը՝ առարկան անտեղեակ է, պարզապէս որովհետեւ առարկան կրաւորական է։ Բնական զեղեցկութիւնը հարանօրէն տարբեր է արուեստային տակաւնէն։ Այս յարաբերութեան ճշգրիտ բնորոշումը կը մնայ զեղադիտութեան անյոյժ հանդիպումներէն մէկը։ Երկուքին նոյնացումը չի վերացնէր հարցը։ Միջակ տաղանդներու համար բնական զեղեցկութեանց կամ «զաղջ» որս-մարտութիւններու վերաբրտագրութիւնը նորձան քնքոյլ ոճով՝ շփոթուած է արուեստի նպատակին հետ։ «Միջազգային» ոճերու հարազատ ընդօրինակումն ալ տարբեր երեւոյթ մըն է հոս, արդիւնքը՝ 1960ին հոգ զանազան ազդեցութեանց զանգուածային մուտքին։

Որպէսզի չափազանց ժխտական չլինի՝ քննադատը թերեւս պէտք չէ, որ առնէ նախաձեռնութիւնը «Ճաստերորդ աւելնին» գործերը դիտելու նոր իրականութեան տրամաբանութեամբ։ անիկա թերեւս պէտք է բաժնէ անբաժանելին, կոտորակէ ամբողջութիւնները, բաւարարելի ձեւական զեղեցկութիւններով։ Աւելին. անիկա պէտք է զատորոշէ մարդուն ներքին եւ արտաքին կեանքերը այնպիսի՝ ձեւով մը, որ արտաքինը ոչ մէկ կերպով չաջողի ազդել ներքինին վրայ։ Այսպէս, դիտողը պէտք է, որ տեսողութիւնը սահմանափակէ պատաստին քառակուսին, կամ՝ քանդակին զանգուածին, իսկ միտքն ու հոգին պահէ թանգարանին պատերէն ներս։

Գործնականապէս դժուար չէ ստեղծել պահանջուած արամադրութիւնը, այսինքն՝ թիւ մը վարժութեամբ կարելի է վերանել բոլոր անձկութիւնները, փակել մտքին անցքերը եւ իրաւորեցնել վերացական-անիրական հոգեվիճակ մը եւ ահոր ընդմէջէն դիտել գործերը։ Այս մեկնակէտով՝ ցուցադրուած գործերը կարե-



Ժամ Խալիֆի մեծածառալ պատտաւանքէմ մէկը՝ ԳՓ.Ն.Ե.Կ.Ե.Կ.Ե.Կ.

լի է դասաւորել շատ ընդհանուր գլուխներու տակ. կը խուսափինք յիշատակել հազճեպ նկատողութիւնները պարզաբանութիւններէ անդին չեն կրնար տնցնիլ:

Գաւառական-հովուերգական սգիով բնակարչութիւնը եւ դիմանկարչութիւնը՝ երեսունական թուականներու գործուն տպաւորապաշտութենէն ի վեր՝ փրնաւորուած մարդ է հոս, առնուազն ժողովրդական մակարդակի վրայ. հին վարպետներուն ոճերուն վրայ եղած են որոշ վերապահանցումներ, սակայն չկայ նրկատելի յատկագրիմութիւն անոնց իրադործած մակարդակներէն անդին: Իննհարիւրականներու տկաղամեմականունութեան դէմ իբրեւ հակազդեցութիւն զարգացած այս մարդը ինքնին վերածուած է պահպանողական դպրոցի ժը: Կիսա-կրօնական քալիփաթիք արուեստը՝ յիսունականներուն աշխատող տաղանդաւոր նկարիչներու սկսած արեւելեան նկարչութեան անկումային շարունակութիւնն է: Յիսունականներէն ետք, վերացական եւ փիլիւրաքիւ արտայայտապաշտութիւնը գրաւած է ամէնէն լայն շերտը իրանական ժամանակակից նկարչութեան մէջ, եւ այս պարսպան յատակ է հուցահանդէսին մէջ: Գերբապաշտական ոճի գործերը ո՛չ միայն հոս, այլեւ Եւրոպոյ աշխարհի արուեստներուն մէջ կը

հանուին դպրոցին քիչ թէ շատ դասականացած փիլիսոփայութենէն տարբեր հասկացողութեանց վրայ. այս ցուցահանդէսին մէջ, գերբապաշտութիւնը օգտադործուած է խորհրդանշական, սեռային կամ պարզապէս նորարարական նպատակներով:

Անհատապէս առած՝ նկարիչներուն մօտ կարելի է նշել փոփոխութիւններ, ոճային յղումներ. կարելի է խօսիլ իւրաքանչիւրին գործին մէջ բանաստեղծականութեան չափին եւ քնոյթին ժառին: Կերպարուեստի մէջ բանաստեղծականութիւնը յաճախ անտեսուած կամ անտեղիօրէն չեղտուած տարր է. յստակ է, որ անիկո բոլոր արուեստներուն պարագային տարրական նախատուեալ է: Զգացումի նրբութիւնը, չըջապատին նկատմամբ յաւելեալ դիւրազգածութիւնը եւ ճշմարտութիւնները ըմբռնելու ներհայեցողական ուժը դժբախտաբար չեն ստացւիր դաստիարակութեամբ կամ վարժութեամբ: Ընդ է նաեւ հակառակը. այսինքն՝ բանաստեղծական խառնուածքով մարդիկ, երբ մեքենականօրէն գործի կը լծեն իրենց տաղանդը՝ ստեղծագործական աշխատանքը կը դառնայ սովորութիւն եւ կր սպաննէ վինք ծնողը՝ բանաստեղծական ոգին: Այս է պատահածը «Աշխան սայունին» մէջ: Արուեստագէտներ, ո-

digitised by

A.R.A.R.®

որոնց մաս կային անհրաժեշտ տուեալները, ժամանակի ընթացքին նահանջած են. միւս կողմէ՝ կան ուրիշներ, որոնք լատգոյն նպատակներով անցած են գործի, սակայն անհրաժեշտ խառնուածքին բացակայութեան՝ անոնց ստեղծագործութիւնները մնացած են խոցելի:

Հնդհանուր առմամբ, կարելի է կրկնել այն՝ ինչ որ ըսուած էր նախորդ Սալոններուն մասին, սակայն այսօր կարելի է անցնել շատ աւելի անդին, որովհետեւ այն վտանգները, որոնք կը սպառնային «վերթիկոյով» ատաւանող լիբա-

նանեան կերպարուեստին՝ արդէն պատահած են իբրեւ անշրջելի իրողութիւններ, որոնց պէտք է գիտակցի ամէն մարդ արւեստի մարդէն ներս եւ դուրս. մինչ այդ, սակայն, կը թուի, թէ պիտի շարունակենք մնալ նման ցուցանանդէսներու մըթնորոտին մէջ, «Մոլորաշաշտ»-ին մէջ արձանագրուած Թ. Ս. էլիթի խօսքերով՝

Եւ պիտի խաղամք ճատրակի խաղ մը՝ փորձելով փակել ալքերը մեր անկող, Սպասելով գուր՝ թակոցը դրան:

ՍԵՂԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ

(*) Մանակոյդ արուեստագէտներն են.— Շափիւ Ազգուտ, Սամիր Ազի Բաշտ, Համի Աւի Սալէն, Իվէ Սաքա, Լաբի Ասէյմի, Գրիգոր Գալստեան, Լաթի Ասիս, Ալֆրէտ Պատարտ, Ժոզէֆ Պատարտ, Մանա Պատիլ-Սանճատի, Հենրի Պատարտ, Անթուան Պատարտ, Ալի Շամո, Բեմոն Շաիքի, Տիգրան Տատրեան, Ռիքա Տաւիտ, Թարս Տէր Գալստեան, Նաիմ Տուֆթ, Մալա Խո, Ռաւաոտ Պարան Միտ, Ազատու Բանիմ Ղալէյ, Միքիմ Ղալի, Լոթ Ղալէյ, Ժորժ Կիւլ, Զաւէն Խոջեան, Մարուս Հաքիմ, Պատարտ Ժաւիտ, Հասան Ժաւի, Հալիմ Ժալաւ, Լիւնա Գալստեան, Պատարտ Ել Բըլ, Մանամէտ ալ Գալստի, Էլի Գանաճան, Աննա Խաւա, Օլիւ Լիւնա, Հիւսէյն Մատի, Ժիւսէյն Մաքի-Պատարտ, Սեֆա Մանուկեան, Պարս Մանուր, Աննա Էլ Մատի, Ժոզէֆ Մաքար, Օսիլ Մալաւ, Տատի Միւլթա, Խալիլ Նախտ, Ռաֆիկ Նախտ, Մու-

Յիր Նախտ, Ալֆոնս Պիլիպ, Եանիմ Բաֆիւլ, Սալաւ Բալաւ-Շաիքի, Մանուսէտ ալ-Բալաւ, Մաքի Բիֆա, Աննա Մաիտ, Նախտ Սալալի, Ժիւսէյն Սալալի, Ռաւա Սալալի, Սիւր Սալալի, Մալա Թիլա, Տարս-Թիւմ Թարսեան, Պատարտ Թարսի, Ժամ-Փիւտ Ռալի, Բալի Ռալի, Մալա Եալալ, Անի Երաւեան, Վերա Երաւեան, Պատարտ Զալալ (տաւալ Զալալ):

(*) Մանուսէտ Երաւեան են.— Պարս Սալալ (1924-1982), Հիւսէյն Պատարտ (1939-1975), Միլի Պատարտ (1921-1981), Ժամ Սալի-ֆի (1923-1978), Խալալի Մալալ (1937-1976), Խալիլ Զալալ (1911-1975): 125 պատարտներէն 22ը կը պատկանեն այս վերջիններուն: 360 գործերով ներկայացուող 140 նկարիչներէն ընտրուած են 66ը՝ 103 գործերով: Յուշանկարներ՝ 20 Դիւտիւրէն մը: 20 Յուշանկար 1983:

ԱՐԴԱՐՆԵՐԻ ՏԵՍԼԱՀԱՐ ԳՐԱԳԵՏԸ

«Իսկ զարնանը Բարսեղը վերցրեց փայտը եւ շարունակեց կրգրում կիսատ թողած հախորդութիւնը: Եւ այդ զարնան ճուշկեղով արտերում հաւանդեց, յանկարծակի՝ հանդիպեց հանութիւն... Գինարը ծաղիկն էր: Աչքերին չէր հաւատում. ախր, Գինարը կրգրի սարերում մնաց, չգողութեց՝ մնաց, լինելով բան է... Ձեր հաւատում: Իսկ Գինարը փառաւորի աչքերով փայտում էր: — Քու անուն Գինարը է:»

«Մաղիկը դիտով արեց:

«Քու անուն Գինարը է, չէ՞: — Ենկեց, շնչեց ըստը: Կասկած չկար՝ նա էր: Պոկեց՝ դրեց ծոցը: Նախկինը թաղեց. Գինարը որոնեց, հաւանքեց՝ փունջ արեց, հաւանքեց՝ ուժացրեց զըլթարկին եւ աչք անեց արեւին՝ չթնքումս, իրեկուն չէ՞. ախր, էրգրեց ծանօթ է եկել, դեռ պիտի սանի:»

«Այդ իրեկուն Բարսեղը զիւր իջաւ՝ գլխին հաճութեամբ հիւրը: Իջաւ երգելով:»

«Միմեռնակը ծիւծիւ եկաւ,
Հայաց երկրից լուր բերեց...»

ՄԱՌՇԵՂ ԳԱԼՏՈՅԵԱՆ



Մուշեղ Յովէի Մանուկեանը իր մահկանացուն կնքեց 1980 թ. Հոկտեմբերի վաղ առաւօտեան: Գրող Մուշեղ Գալտոյեանը դեռաց իր ստեղծած «Բարեւ Առաքել»-ի Տիգրանի հման: Նրա մահը, կարծես, անցնում է, փոխակերպում, թւում է անառքամարանորէն ճիշդ, եւ որքան էլ ողբերգական լինի՝ միշտ պահում է իր մէջ լոյսի մի շերտ, որի ճառագայթումն աւանդաւ պիտի անցնէ, ներշնչում: Թերեւս դալճոյեանական մօտեցում է սա, թելադրուած՝ ի՛ր աշխարհընկալմամբ: Հիմա մօտեցումն ամենանճիշդն է, քանի որ լոյսի ճառագայթն է թողնում մահուան սեւ փաստից այն կողմ:

1933 թ. Դեկտեմբերի 13ին թալինի Ղրջանի Մեհրիբան, այժմ՝ Կաթնաղբէր զիւղում, զէնքը Սարգսրապատի սերան-

քից յետոյ միայն վար դրած Յովէն ու բանաստեղծութեան շնորհով օժտուած Հոռմէն տղայ ունեցան: Իր Սասնայ տուն՝ մի նախնեաց տնան, Յովէն զրեթէ մի դար ապրեց, իսկ Հոռմէն աշխարհ բերեց վեց աղջիկ եւ երկու տղայ, որոնցից մէկը իրենց կապուտաչք Մուշեղն էր, մեր՝ պայծառ Գալտոյեանը, իսկ մեր ժողովրդի համար՝ Ֆիդայի Գեալճ Մանուկի թուր — արեւմտ եւ զրչո՛վ:

Եւ երանի՛ միայն զրիչ բռնէր, որ իր մեռում, միեւնոյնն է, զէնքի ուժ ունէր: Ապրէր կապուտաչք ու խարտեաչ այդ երիտասարդը, որի ապրած կեանքը եւ մեզ պէս բախտաւորներին հասած դժբախտութիւնը ստիպելու էին իր գրչապէս ընկերոջն ու անսակարկ հայրենասէր Հրանտ Մաթևոսեանին զրեւ հետեւեալը:

«... Մեզանից նրա կորստավ խնայելից շիտակութեան, սիրոյ, գաղտնիքի, վրէժի, պատմութեան, ցամառի, յաւառանտութեան եւ յայսի այն անսրտեղի կոփւածը, որ մեզանում մարմնաւորուած էր նրանով»:

Ահաւոր ճշմարտութիւն կայ, ուրեմն, իր ձեռքով գրեթէ ճշգրտօրէն նկարագրուած «Բարեւ Առաքել» պատմութեանը, որ չգիտես նախադասութեամբ, թէ ճակատագիրն է ներշնչել: Ո՛չ, Մուշեղը չէր կարող զէնք չընել...: Գալչոյեանի ծայրայեղ ճշմարտութիւնը, երեւի, իրեն թոյլ չէր տայ գրելու «Բովստուն» վէպը, եթէ նա չունենար գիւղատնտեսական ինստիտուտի այգեգործական բաժնի ուսարտական վկայականը: Եստ քան է ասում նրա մասին այն փաստը, որ 1957-ից մինչեւ 1966 թթ. նա աշխատել է որպէս գիւղատնտես, նախ՝ Աշտարակի շրջանի Կոչ գիւղում, ապա Թայիի «Արտենի» սովետտնտեսութիւնում: Այսինքն՝ ոչ թէ իր պատշաճութիւնը է դիտել Հայրենի աշխարհի գեղեցկութիւնը կամ զրօնելիս շնչել հողի բոլորը, այլ ծառայել է այդ հողին եւ ձեռքերով մշակել այն:

1960-61 թթ. Գալչոյեանը աշխատել է Թալինի «Կոմունիզմի դրօշով» շրջանային թերթում, իսկ 1961-62 թթ. Աշտարակի միջնակարգ «Արագած» թերթում, որպէս գրական աշխատող և միայն 1964-ին է, որ փոխադրուել է Երևան ու սկսել է աշխատակցել Կոմերիտ միութեան «Աւանգարդ» թերթին, որպէս գրական աշխատող, ապա՝ բաժնի վարիչ:

Այդ շրջանում Մ. Գալչոյեանի ստորագրութեամբ լույս տեսան բազմաթիւ յօդուածներ, ուր բծախնդիր թղթակցի տողերից յոտակօրէն ուրուագծուած էր մտահոգ եւ հայրենիքի որեւէ պակասութեան հանդէպ գերզգայուն ու անհաշտ հայրենասէրի պատկերը: Թղթակից Մանուկեանը մի նոր կերտուածք է ի յայտ բերում գրող Գալչոյեանի մտաւոր աշխարհից, որը ո՛րքան բազմաձև, ա՛յնքան հետաքրքիր է եւ հարուստ:

1967-69 թթ. Մ. Գալչոյեանը աշխատեց «Գարուն» ամսագրում բաժնի վարիչի պաշտօնով, այնուհետեւ, 1969-71 թթ. սովորեց Մոսկուայի Մ. Գորկու

անուան գրականութեան ինստիտուտի բարձրագոյն դասընթացներում: Թէ որքան ժամանակ է տրամադրել ուսմանը, դժուար է ասել: Բայց նոյն թուականներին պարբերական մամուլը եւ իր անդրանիկ «Կոմունի» խորագրով գիրքը վկայում են ստեղծագործական հոսքի առատութիւնը: Բարեբախտաբար, լեռնային յորձանքի պէս այդ հոսքը երբեք չբարակեց, այլ, բնականապէս, լեռնային յորձանքի պէս միշտ խորացրեց իր հունը, խռով, բայց վճիռ պահեց շուրջ: Անարտնայի դասերն ընդհատեցին, զարմանալի չէ, որ նա փերագործու «Գարուն» ամսագրի խմբագրութիւնը: Այն տարիներին զա միակ օրինակ էր, ուր տիրում էր ստեղծագործական որոնումների բարեբախտ մթնոլորտ, ինչու էր մտքերի անհաշիւան շփման տրամադրիչ ուղղութիւնը:

1968-77 թուականների միջև ընկած կարճ ժամանակամիջոցում արգէն հրատարակուած էին «Զորի Միքում» («Գալչոյեան», թիւ 4-5, 1968), «Կոմունի» (1969 թ.), «Ընծայագիր» (1972 թ.), «Մաղկած քարեր» (1973 թ.), 1974-ին՝ «Ինքնուրու» վէպը, որը նախ հրատարակուել էր «Սովետական գրականութիւն» ամսագրում ու արժանացել Հայաստանի սովետական գրողների միութեան առաջին կարգի մրցանակին:

Կոմիտասին նուիրուած «Ծիրանի ծառ» շտրից «Գարուն» ամսագրում հրատարակուեցին «Մաղթամբ» եւ «Օրմաւետեաց» պատմութեանը (1969 թ., թիւ 6): Վերջինս իր ժաբութեան եւ արտայայտչական ոճով կարելի է համեմատել Գորիս Գասանեանի զգացական գամմային: Հիսկ Սողոմոնը այժմ ու ակամբով գանգակների զօղանցն էր հաւաքում: Զանգակները մօտ, մօտ էին՝ ձիերի պարանցներից ու անուրներից կախ, գամգակները աչքերի պէս մօտիկ էին նրան, իսկ զօղանցները՝ հայեացքի պէս հեռու, նրանց գալիս էին հեռու, հեռու սարներից, ուր փչրուել էր արեւը: Ղօղանքը սարերի վրայ փչրուած արեւի զրնգոցն էր»:

Վաղուց բնգունել եւ ընտելացել ենք, որ գրողների այդ թւում նաեւ լաւ գրողներին ճնշող մեծամասնութիւնը անց-

նում է խարխափումների, ձայնի տարողությամբ (դիաֆոնի) փորձերի շրջաններից: Բուրբուրյան տարբեր եւ ուրոյն է Գալլոյանի գէպը: Նա նման եղաւ բընութեանը՝ իր խորհրդաւոր գաղտնիքներով, միայն իրեն յայտնի հասունացման ժամանակաշրջանով: Որքան էլ հետեւենք բողբոջներին, ծառը միւտ թաքուն է ծաղկում ու յայտնում իր նոր կերպարանքով: Յանկարծ է զգացում վերահաս մարմնի թուլութիւնը, երկարօրէն բոցաւառ տերեւները միանգամայն են գետնին խըշխըշացող կոյտերի վերածում, անհասկոյն մերկ (նորից մի կերպարանք) թողնելով սեւ ծառերը: Այդպէ՛ս, յանկարծ ու անսպասելի եղաւ Մուշեղ Գալլոյանի գալուստը գրականութիւն, անպայման զայնձստը, և ոչ երբեք՝ «մուտը»:

Նա լուռ եկաւ ու գրաւեց իր տեղը, առանց շեմքին ամաչկոտ սպասելու կամ բայլ առ քայլ առաջանալով ուրաններ պցնու իսկական (բայտ Յ. Օշականի՝ «էրաւ») գրականութեան ամբողջում: Եկաւ միանգամայն ամփոփ ու հասուն, իր անխորհրդաւոր լուս իմանալով, յատուկ ու հաստատ ձայնով սկսեց պատմել:

Նա գրաւեց տոյն տեղը, որի գոյութեան մասին միայն կասկածում էինք, յուսալով ենթադրում, թէեւ այն պէտք է լինէր եւ ուրախութիւնն անսահման եղաւ, երբ այնքան լիովին ու հրաշայի իրականացան այդ յոյսերը: Իր անառիկ պիրքից Գալլոյանի թողած գանձը գեոկրիկոր կը շողարձակէ, լուսաւորելով ուրիշներ յուշին, ինչպէս ճշգրտէն նկատել է տալիս Ռաֆիկ Դաւոյանը՝ իր «Միլիոն»-ի որ հասցնա Ոսկայապարիտը՝ խոհանարանի ինքնակալ յոգնածում, Գալլոյանի նմանների մասին բնականաբանութիւն: Ի միջի այլոց, ես չեմ հաւատում, երբ Գալլոյանի յետեւից հառաչում են, իրեն թէ նա գեոեւս լուսագոյն կամ գործունիքից ճաւելի լաւ գործ կամ գործի պիտի տար: Ինքն ճշտեմքերի 12ի ճակատագրական գնդակը նոր գրաւածքների փոխարէն սպիտակ էջերի չղատապարտէր մեզ, այո՛, Գալլոյանը գեոլաւ կը զբէր, գուցէ եւ մեծածաւալ գործեր կը տար մեզ, բայց իր ուրոյն ար-

եւտի բարձր չափանիշը չէր փոխուի: Դրա համար մի փոքր վերաբերական է այն վայնասունը, որ ուզեցեց նրան, կարծես թէ զիջ անգին էջեր է թողել: Ես կ'ուզենայի, որ մենք երախտազիտութեամբ ժօտենայինք նրան, որը ո՛չ թէ յօրինում, այլ տնդնագործում էր:

Կարելոյ է նշել, որ Գալլոյանի գործերից շատերը թարգմանուել են մի քանի լեզուների եւ առանձին գրքերով հրատարակուել: Դեռ 1972 թ. Մոսկուայում լոյս տեսաւ «Արի Միլիոն», այնուհետեւ՝ «Քարէ հովտում» հատորը, որի մէջ մտնում էր նաեւ «Բովտում» (1977 թ.): Նոյն թուականին Երեւանում աւստրիէն թարգմանութեամբ լոյս տեսաւ «Թաղկած փորեք» ժողովածուն: «Արի Միլիոն» հրատարակուել է Վիլնիւսում՝ լիտվերէն թարգմանութեամբ 1977 թ., իսկ մէկ տարի անց Սոֆիայում՝ բուլղարերէն: «Բովտում» վէպը նոյնպէս լոյս է տեսել բուլղարերէն թարգմանութեամբ:

Ուշագրաւ է, որ «Երեւան» խորագրով («Ժողովուրդների բարեկամութիւն») Մոսկուայում հրատարակուող լուրջ ամսագրի 1978 թուականի տարւալ լուսագոյն պատմաւածքի մրցանակը շնորհուեց Մ. Գալլոյանի՝ «Մարութայ սարի ամպիրը» շարքից երկու պատմաւածքի համար: Սա խօսում է այն մասին, որ արժանապէս սխալ է համարել, որ Գալլոյանի ստեղծագործութիւնները արժէքաւոր են միայն մեզ՝ Հայերի համար կամ իրենց ողով միայն մեզ են հասկանալի: Մէկը թողնելով հոգեւոր անվիճելի ազդեցութիւնը, փորձենք ժօտենալ գրական չափանիշով: Թարգմանուած գործը, պարզ է, միայն ու միայն իր գրական արժէքով է, որ կարող է ուշագրութեան արժանանալ: Մ. Գալլոյանի գէպում աւելի՛ առաջնութիւն շահել գեոարի մրցոյթում, որովհետեւ ՍՍՀՄ ժամանակակից արժակը իրաւ բարձր մակարդակի վրայ է: Ուրեմն, նոյնիսկ թարգմանաբար, լիարժէք գրողի օտեղծած գործերն անխուսափելիօրէն գնահատում են բոտ արժանւոյն, որքան էլ անծանօթ լինի պատկերուած աշխարհը, փոխ չէ: Վստահ ենք, որ վերջերս լոյս տեսած «Մարութայ սարի ամպիրը» ժո-

զովածուի ոռոսերէն թարգմանութիւնը («Սովետական դրոշ» Հրատարակչութիւն, 1982 թ.) ջերմ ընդունելութեան կ'արժանանայ ընթերցողի կողմից:

Քչերին է յայտնի եւ այնքան էլ կարեւոր չէ, որ Մ. Մանուկեանի (Գալչոյեան) ոտաջին գրութեամբ լոյս է տեսել 1959 թ. «Լեւոնիստի» շրջանը թալինի շրջանային թերթում, բայց շատ շատերին յայտնի դարձաւ 1968 թ. «Գարուն» ամսագրի լոյս տեսած «Ձերի Միրոն» վիպակը: Այն «առանց գրութի» գրական անձանք ընթերցողի եւ դժուարահաճ քննադատների հասարակարկի անտիկ բերդերը: Ընթերցողի դէպքում, թերեւ, ունենաւով բարեացակամ վերաբերմունքի հարաբերակներ, որ բացառուած է քննադատների դէպքում: Ինչպիսի արձագանգ էլ դանդաղ «Միրոն», անվիճելի էր մէկ բան՝ հրատարակ էր ինչի մի նոր գրող՝ Նուրազարու, ուղիղ, եւ գարձանախորհն իւրօրինակ: Ճիշդ է, նման թեմայով արդէն գրել էին Հրաչեայ Գուլարը, Պաշտիկ Դաւիթեանը, Կիւրաբեանը գրողներից շատերը, բայց, ասեմք «Երեւանի» եւ «Միրոն» միջին ընկած էր ժամանակի զգալի մի հատուած եւ հեղինակներն էլ երկու իրերալարող սերունդներից են:

Հարազատ, սպասուած ու այդ սպասումին չափով սիրելի դարձաւ Միրոնի կերպարը, որում խտացած է՝ բերեղանալու տառիւն՝ մի ամբողջ սերունդ, տեղահանուած ժողովրդի մտայնութիւն, հողի մշակի արտաքուստ պարզ, բայց խորը մտածելակերպ, վերջապէս՝ հողի հոնդէպ հասարակի ճշունւած փոխադասութիւն. «Յարութ, աշխարհի ամենամեծ կորուստ մարդու կորուստն է: Մարդու կորուստ անդարձ կորուստ է», խրատած է Միրոն, ապա հակադրում՝ անյաղթ հաւատքով. «Երկիր ու հողի կորուստ ծանր կորուստ է, բայց հող անմահ է, լոնց, հող ուրիշ տէր չի՝ ընդունէ, լոնց, հող իր տիրոջ հետ արեւակից է ու իր արեւակցին կը սպասէ, կը սպասէ, ու օրերից մի օր՝ կը հանդիպին: Հողի կորուստ անդարձ կորուստ չէ»: Այսպիսի՝ Կոհար պարբերութեամբ Կուլչոյեան հայր սերունդներ է դաստիարակելու...

«Միրոն» հասարակական ընդունուելը ընթերցողների տարբեր խաւերի կողմից, ո՛չ միայն «տեսլահար արիւն» ունեցողների, այլեւ՝ նոյնիսկ նրանք, ովքեր Միրոնին ծանոթացան... պատասխան՝ Սօս Մարգարեանի կերտած անդուգական կերպով: Բարեբախտաբար, շարժականութեան Մ. Գալչոյեանի կենդանութեան օրօք եւ նա ունեցաւ իր Միրոնի, այսպէս ասած, «կենսա» աննկատելի: ու ուրախութիւնը: Անարդարութիւն կը լինէր չնչիւր, որ Սօս Մարգարեանի ծանոթութեանը մեծ է նրանով, որ «Ձերի Միրոն» նման խորը գործին ծանոթացան, հաղորդակից դարձան գրականութիւնից բաւականին հեռու կանգնած մարդիկ (ի միջի այլոց, Վ. Ի. Լենինը ասել է. «Կիրոն ամենամոգովորակ ֆիւզմ է արեւտում, այն պէտք է զարգացնել...»): Ճիշդ է ասել: Իսկ թէ դա որքա՞ն կարեւոր է, կարելի է դատել նոյնիսկ մի փոքրիկ հատուածից. «Յարութ, գառ, լսէ ու մտախմբ չանիս, վիզ չծնես, մահ չընդունիս կամօք: Կուրի քա մահուան դէմ, յաղթ եղար, կ'ապրիս, չէ՛ մեռնել կայ ու կայ: Քու ձեռք ու սուր կը կապեն, սիրտ կապել չեղի: Մահի դէմ կուրի ճար կը գտնի կապած սիրտ... Յարութ, էն մարդ կամօք կ'ընդունի մահ, որ վրէժ ու փափաք չունէ»:

Միրոնի պատգամները ո՛չ միայն իր որդու, ո՛չ իսկ միայն մեզ բախրիս, այլև սերունդների համար են: Ուղադրաւ է, որ, չնայած հեղինակի խօսքի բացակայութեանը, Գալչոյեանը ամենայն ճշգրտութեամբ արտայայտում է իր տեսակէտն ու վերաբերմունքը: «Մեղապարտը տաղանդաւոր պատմաւորութեամբ, օրինակ, տեսնում ենք, թէ ինքն իրեն ծանրօրէն տրուած խրթին հարցերին ինչպիսի՞ հոգեմտաւոր լարումով է փորձում պատասխաններ գտնել, թէ որքան տանջուից է պատասխանների մէջ միշտը որոնելու:

Դժուարին հարցադրումների, քննադատականների հէնքը հիւսելիս ուղղակի հիացմունք է պատճառում Գալչոյեանի բացառիկ չափի զղացումը: Վարպետութեամբ նետուած մէկ բառով, դոյնի մէկ երանգով նա կարողանում է իր այս

կամ այն վերաբերմունքով իսկոյն տրամադրել ընթերցողին այնքան, որ յիշողութեան մէջ յատուկ տպւում է տրուելու գործի ո՛չ միայն առանցքային գէժը, այլեւ՝ երկրորդական, հինգերորդական մի անձ։ Այդպիսի օրինակներէն է լազաբի երեսասարդը («Շուկան» պատմածքում) իւր նողկալի յղիացածութեան մէջ, Անդարդ Աւէն («Վամբրէ արքան»), Սալայական Արոն («Ձաքի Միրոն»)։ Վերջին երկուքին թեթեւ, բարի հեղանջով, կարծես ներողամիտ ժպտը դէմքին է նկարագրում Գալլոյեանը եւ համարում իւր անաշու, իւրովի հիւստի զգացումով։ այս հիւստիք, ի դէպ, նա ինքն իրեն էլ չի խնայել։ «Փռլիս Մեղին» պատմութեամբ, երբ հարցնում է հօրը, թէ ինքը նման է հայդուկ մօրեղբայր Սպարիին, հայրը պատասխանում է. «Իսրայիլի աշխարհ մեկնապէս կապաւտ եմ»։ Եւ միայն այսքան նմանութիւն է թոյլատրում իր եւ կորովի ֆիզյոյալ միջեւ։

Գալլոյեանի արտայայտչամիջոցները մասին խօսելիս անհրաժեշտ է կանգ առնել նրա ուրույն լեզուի վրայ։ Նրա լեզուի զգացումով զործածուած հայերենի Մշոյ բարբառի եւ անպաճայե խօսակցական լեզուի փոխադրածութիւնն այնքան բնական է, որ սչ մի պատեղի չի տալիս կեղծ կամ ընդգծուած ո՛հակասութեան (ստիլիզացիա), միաժամանակ ստեղծում է անհրաժեշտ բնական կոյտրիտը։ Արտայայտչական տեսակէտից որոշ արտայայտչութիւններ, նոյնիսկ առանձին բառեր չեւոյում եւ խորացրած են իրապիճակը կամ կերպարը («Եստատու ու հաստատու է», «Քակուեց», «Գամեց ընկելուք ձեռքը», «Կալիփիլով գրեաց», «Եւսաբ-տաբ գլխովից Միրոյի հոգիին», «Էս ճամբան կծկիս ու ետ գաւ», «Վնգան աղբիւր», «Աղոյկայ սարի մուրը լցուեց աշխարհի մէջ», եւ այլն)։ Շատ շատ օրինակներ կարելի է բերել, բայց սահմանափակուենք, վերը բերուածները վրայ աւելացնելով մի հատուած «Գիւնար» ծաղիկը պատմութեան։ Նոյնիսկ Գալլոյեանի զրկին, ոճին, աշխարհին կարծես թէ ծանօթ ու զննողացած մէկին, նորից ապշանք է պատճառում Բար-

սեղի տպւումների քննուշ նկարագրութիւնը՝ միշտ պաշտպանուած թաղցր-մեղցր զառնալուց դալլոյեանական ոճի վաճանդի, Բարսեղի արտաքինին նկարագրութիւնը՝ դալլոյեանական երկու տողով...

Եւ չենք էլ նկատում մի քանիգործաւոր տրուած որեւէ այլ գրութեամբ չինծու եւ հնարովի կը թուար, իսկ Գալլոյեանը առանց քմիծաղի հաւատացնում է, որ հենց այդպէս էլ եղաւ։ «Ծաղիկը գլխով արեց»։

Եսկ գարնանը Բարսեղը վերցրեց փայտը եւ շարունակեց իրգրում կիտաւ քողած մախրադաւթիւնը։ Եւ այդ գարնանը հաւելելով արտերում եւ հանդիպեց, յամկարծակի իսկողիպեց ծանօթի... Գիւնարը ծաղիկն էր։ Աշխարհն չէր հաւատում։ Եւ Գիւնարը իրգրի սարերում մնաց, չգաղթեց՝ մնաց։ Լինելու՞ բան է... Այդ հաւատում։ Իսկ Գիւնարը խառնուի աւելելով ժպտում էր։

«Գու ամառ Գիւնար է»։

«Ծաղիկը գլխով արեց»։

«Գու ամառ Գիւնար է, չէ՞»։ — Ծնկեց, շնչեց բոյրը։ Կուսած չկար՝ մտէր։ Պոկեց՝ ցրեց ծոցը։ Նախիրը քողեց։ Գիւնարը աշունց, հաւաքեց՝ փուրը արեց, Իսաբեց՝ սարագրեց գլխարկին եւ աչքածնեց աշունին՝ չքեքուեց, իրիկուն չէ՞, սխր, էրգրեց ծանօթ է եկել, գիւղ տիտի տանի։

«Այդ իրիկուն Բարսեղը գիւղ իջաւ՝ գլխին համարաւրելու հիւրը։ Իջաւ երգեւիկ»։

«Միծեռնակը ծիւծիւ եկաւ,

Հայոց երկրից լուր բերեց...»

«Այդ իրիկուն գլխարկի փախարէմ գլխին Ծովասարից մի կտոր չայր, էրգրեց մի կտոր մշխար՝ իջաւ գիւղ։ Բաժանելով անցաւ ցեղամիջով, մթնշաղի հետ քաց ուրախութիւն մաղթեց, հաշտուում՝ վերջինը մեկնեց կնոջը»։

«Եւ ճամբանը»։

«Հրի, մեր Գիւնարն է»։

«Նախարապա՛յ Բարսեղն ու գիւղի հոյիները աւրիշ տեղ չհանգիւցնեցին Գիւնարին, միայն խաչերով աղտերում կար։ ... Հիւսն ճարից գարուն էր, Բար-

A.R.A.R.®

սեղմ արդէն հայեացքը ձեռնափայտիմ թելած մի պստիկ, ճերմակ ծերունի, երկրի ու երկնիքի արամբում՝ կապայտ ցընորք, գնում էր:

«Հաստա քրամբալը, անցաւ, յետոյ էլ ի մի քիչ աչքերն աւ գետինը համբարնեցին իրար, եւ հայեացքը ծանօթ սալափորէ Կոնստանդնուպոլիս մէջ լող տուեց»:

Հիմնականում նկարագրական տեսարաններում է երեւան գալիս գրական լեզուի ճոխ բառապաշարը, ճշգրիտ բառերի բնականորէն ընտրութիւնը: Պատկերներն անսպասելի են, համեմատութիւնները խիստ ինքնօրինակ: Դուք էլ դա մասամբ նրանից է, որ Գալչոյեանի հերոսները աշխարհին ոչ թէ տեսածանելի մի մասնիկն է բնութիւնը, այլ ինք շրջապատում է նրանց, այլեւ մուլուած-պատկերներն են բնութեան, չրջապատի հետ, որն, իր հերթին, զրեթէ շնչաւորւած է, ուղղակի՝ «գործող անձ»: Իրա յաւագոյն օրինակներից է, թերեւս, «Թաղում» պատմութեան ծերունու վերաբերմունքը եղան նկատմամբ, որին հայր համարեաւ աստիճան հարազատ է զգում իրեն:

«Հօ, դուրբան, — արտակարգ զերմութիւն գգաց, լծկանների մկատմամբ: — Դառ քան, ախպէր քան, եւր քան... Հէր քան: — Կրկնեց կրճատ եւ շտէր կախ գըցեց: — Հըրիի՛, — հայեացքը կապայտով մշուշուած Հայոց լեռնազանգի, քակուեց Հլոյի թաղում: — Իմ քոք եզ, Հլո... Իմ քոք եզ, իմ հէր: — Յիշեց էրգրի իրենց քոք եզիմ, ճրան, որ Հլո հօր անումն էր կրում՝ քէ ինչու եւ երբաւանից, ինքն էլ չգիտէր: Իրենց քոք եզում ամուրը Քաշէ էր, բայց գիւղում Հլո էին ասում: Այդպէս էր կոչում Յանի ինքը՝ Հլո հայրը: Եւ կոչում էր շոյուած, որովհետեւ իր անուանակիր եզը ուժեղ էր եւ աշխատասէր:

«Իմ քոք եզ՝ իմ հէր, դու ինչպէ՞ս իմացար, քէ էդ գարնան աչք փակելիս անելի տաւ էր՝ ճու երեց տիրոջ Ետեւից էր-քալմ անելի լաւ էր...»

«Բա եզների անունն ինչպէ՞ս է: — Թաղում չկոչուած մայեց լծկաններին:

«Եւ մանր բռնած, դարձաւ մայեց

գիւղի կողմ:

«— Սերոբ, անաստուած մարդ, — դժգոհ դիմեց լծկանների տիրոջը, — քաւ եզներն աւանց անումի՞ տուեցիր: Աստուած գիմ ուշքն աւ միտքն է անէ աւ մտաւան արի՛ չհարցրի, դա՛ւ ինչի՛ չբաշխեցիր:

«Եւ այդ քիչիմացուքեամ համար թաղում, չիմացաւ ինչու, հայեացքը հարեամ գիւղացում, նրան, որ իր եզները մարքել է:

«Յետոյ մա հարցական մայեց լծկաններին, փորձեց գաղակել անունները, բայց չգտաւ ոչ մի մշան. ոչ արտակարգ գայն, ոչ ճակատներից ճերմակ ծաղիկ, ոչ ընդգծուած պոգեր... անունները յուշող ոչ մի նշան չկար:

«— Հարկ էր, որ Աստուած ձեզ լեզու տուած էր: — Բազմեց ծերունին, լծկաններն արձակեց, տնտեսում աւ խտր գաւտեց իրարից. տնտեսումի պարկը ծրարեց քարելով, խնկ խոտը դրեց եզների դիմաց եւ պատուիրեց:

«— Կերէ՛... Եւ հասնիմ գեղ. ձեռնունուններն իմանաւ աւ դառնում...»

Օգտագործուած է ճիշդ աշխատանքի, որ կուսենք երանգը, այնքան գծեր, որ պատկերն ուրուագծուի, առանց տաղտկալի մանրամասնութիւնների ուղղանք ընկնելու: Ահա մի անփոփոխ, սպասելի պատկեր «Փողփուշ Մելուն» պատմութեան ժող. «Շանչը պահած անուսիմ գիշեր է: Մշոյ գետակը մշշում է ճնած քաղաքի անկանքի տակ եւ անելի խորացնում գիշերայն լուսաթիւնը: Ընդամէնը երկու նաստապատութիւն: Մի անջնջելի պատկեր: Գալչոյեանի ազդու, լակոնիկ պատկերներինց ահա մի վառ օրինակ. «Պատուանանից ներս ընկած լուսն թելը դէպի երկինք էր ձգում Դաւային»:

Եւ, վերջապէս, իր էրգիւրը, մի ողջ դերդաստան, սիրելի կնոջը կորցրած Միւրոյի դառն ապրումները իր միտումներն պատերազմի երախր ուղարկելիս, Գալչոյեանը մէկ հատիկ նախադասութեամբ է տալիս. «Իմ աչաց միջէն աշխարհն է կը պոկուի-կ'երթայ»: Մի, բայց մի տաղանդաւոր նախադասութիւն:

Իր «Ակզորունք եւ ելակէտ» յօդուածում («Առկետակամ գրականութիւն», 1971, թիւ 4) Գալլոյեանը մտաւայտութիւն է յայտնում. «Քիւնստ Է, քէ վաղւայ տարեցները չեն մանկամայ, չեն անմեղաբայ (որովհետեւ այսօրուայ երեխաները կիսատ են քողնում մանկութիւնը)։ ... Ու «ասփայթը» իրատեսակ միջնորդ է մարդու եւ հոգի միջեւ եւ այդ «ասփայթի» վրայ երեխաների մանկութիւնը կիսատ է մնում»։

Մինչ իր բոլոր հերոսները, բացի Արմայից, տարեց են, այնպիսին, ինչպիսին չեն դառնայ մեր ժամանակակիցները՝ «մանկացած, միամտացած»։ Նրանց մանկութիւնը բնականօրէն շարունակուել է, որովհետեւ չէ կորուել հողից։ Գալլոյեանի դրուածքներում գրեթէ միշտ առկայ տարիքային անցումները, վերլուշի ու ներկայի համադրութիւնները սահուն են ու ներդաշնակ։ Նոյն անձին տեսնում ենք ժամանակի տարբեր շրջանների մէջ, տաւա տարբեր հայելիների մէջ միաժամանակ արտացոլուած։ Աւելին. յանկարծ դնում ենք բազմաթիւ մանուկներին, պատանիներին ու կանանց կերպարներ, որ առեւ պարփակուած, ամփոփուած ին տարեց հերոսի կեղեւին մէջ։ Այսպէս, քարից քար թռչկոտող պատիկ Ալէքս դառնում է մի բուռ, մի պառաւ, որ համբիկ ու չախուկ» (զեղեցիկ յայտնաբերութիւն) չեւ ու դուրս է անում։ Գալլոյեանի իմաստնացած ծերունիները իրենց մէջ պահել են մանկութիւնը, իսկ այն անցել է ճնշողապայր հայրենիքում, ուրեմն, միահիւստուած է իրարի հետ եւ վերլուշները դառնաբաղցր են, որովհետեւ մանկութիւնը անվերապարձ է, ծընրիղապայր՝ դեռեւս անմատչելի։ Ինչպէս ինքն է առել իր երէց էրգրացու գրքակցի, հոգեհարազատ ուսուցչի՝ Խաչիկ Դաւաճիցի ռիւմիլպարների կանչը՝ էպիպտիկան վէպի գրախօսականում. «Խաչաւեցը պատմում է իր մանկութեան աշխարհի մասին, իսկ մանկութիւնն ինքն է հեքիաթ, պատմում է առասպելից ծնունդ եւ առասպելի դարձած մի նրկի մասին, իսկ առասպելն ինքն է հեքիաթ, եւ, յիշելին հաշուով, այդ աշխարհը իրօք

հեքիաթային էր՝ իր բնութեամբ, իր տեղիկ ժողովրդի բնական-մայրատեղծ-հեքիաթային կեանքով»։ Տեսէք, թէ ինչպիսի հիացմունք եւ սէր է յորդում այս տղայից։ Սրանով Գալլոյեանը մեզ է տալիս ի՛ր աշխարհի բանային, յուզում է ի՛ր հերոսների ճիշդ ընկալելու մօտեցումը, որովհետեւ նրանք ո՛չ թէ մտացածին, այլ Դաշտեցի, ապա նաեւ Գալլոյեանի այդ «նախառանգ-հեքիաթային» աշխարհի իրական բնակիչներն են։ Ահա տալիս է մի քանի տողով նաեւ մեզ է փոխանցում աւանդոյթի մի թանկ մասունքը.

«Անւարի ամառում հաւքեցի հարսը ունեցաւ տղայ։ Ոչ ոք չտեսաւ մանկի աշխարհի գալը։ հաւքեցի հարսին աշխարհում տուող չեղաւ եւ ոչ մէկը միտք չունեցաւ անուն բաշխել մանչին։

«Բզկտուած մարմնի կը հաւքեցի հարսը, ծնւել էր ծալում, ռոկ նստից փոխում առ, օրօրում էր ու մէկ-մէկ յիշում. որ ուսերից կախ ընկած կապ-քրքրի մէջ շուճ ու շնչաւոր է։ Յիշում էր ու մտահան անում, օրօրում, գնում...

«Չխօսկան էր հաւքեցի հարսը։ Կոտորում էր, գազը էր, հարսնութիւն էր անում։ հաւքեցու հարս էր՝ չխօսկան։

«— Կառ,— ասում էր իշխմանցի Կամէն,— քու հոր աւեր տան հետ ուրաւ քու հարսնութիւն։ Մեծ ու փոքր, հարու ու հարսնութիւն չկայ, հաւասար գազաւ կան ենք... հօսա՛, կը տրաքալի քու սիրտ»։

Բայց դեռ պահում է իր անիրաւած հարսնութիւնը Խաչիկի հարսը, քանի դեռ նորածինը, այսինքն՝ ոչնչացած գերդաստանի անօջախ, անանուն, բայց այնուամենայնիւ շտապիղը կախուած է իր ուսերից։ Բայց յետոյ.

«Ակունքն ընկած խօսքը կա՛մ հասնում էր մօր արեւիկն կա՛մ ընկնում փշերի բնաւը, աւաղների մէջ։ Եւ չիւմացաւ, քէ մանչը իր լեզուն՝ օդ ու գետից հաւաքած իր նրկու բառը. ե՛րբ առաւ-համբարձաւ երկինք... Մատ-միտ սնունդ մարմինը սեղանից կրծքին, ամուր, ամուր սեղանից՝ առաջիմ անգամ։ Եւ ճշաց ու լաց եղաւ ու լացի միջից եղբորցեց...

«— Իմ երեխան քաղէ՛ք... Կը խղն-

դրիմ՝ քաղե՛ք... Մեղքո՛ւկ է... անկընդհատ է... ամեն շունչով...

«Ե՛ւ սեղմեց կրծքիմ, Ե՛ւ կոծ ու պաղատում արեց, Ե՛ւ ճանկեց սառած գետինը, Ե՛ւ ասաց եղբրախազ...»

«Մեղքո՛ւկ է, քաղե՛ք...»

«Ջամամ մարկն գետափից առաւ պըտ-զուց ցնխ, խաչ արեց մամչի պարտ ու ճակատիմ, ծաղէ կնունձ արեց, ու Մուրադ գետի ավիմ անխաղաւ մի փոքրիկ կըմբիւ...»

«Այդ օրը առաջին անգամ լսեցիմ խաչ-քեցի հարսի ձայնը»:

Ջամանը, Միբոն, խուժեցի Աբրոն ու նրանց նման շատերը, եթէ չառնեց բոլորը, ոչ մի պահ մաքից չհանելով իրենցից իրուած հայրենիքը, ոչ մի պահ չըկարելով հանդերձ իրենց հոգեկան կապը իրքի չեաւ, սակայն, նոր հայրենիքի հողին խառնեցին իրենց ամբարներ քրտինքն ու նոյնպիսի նուիրումով քարոզչական արտի վերածեցին, ինչպէս որ կ'անէին կորուսեալ ծննդավայրում: Սա փրկեալ փայտէի են է ու պատգամ: Գալչոյեանը անդհանահանելիօրէն կարեւոր դաս է տալիս մեզ, իր կերպարների միջոցով համարում է չփոխուել, այսինքն՝ անխաթար պահել մեր ազգային նկարագրի լուսազույն գծերը, որովհետեւ, ինչպէս գրում է Ստեփան Թովչեանը. «Անցնալից մնում է մերկամ, իսկ առանց մերկայի հմարաւոր չէ ապագամ կառուցել»:

Ձգիտեմ, թէ յետեալ ասելիքս ինչպէս կ'ընկալուի սփռութեան իրողից, բայց ինձ, որ հայրենածին եմ ու ինձ պէսների համար դա կարեւոր է: Գալչոյեանը մեզ մի անհրաժեշտ յիշեցում է անում. կա՛յ մեր Հայաստանը, որի համար կամ որտեղ բոլորս աշխատում ենք ձեռք ձեռքի, որը բոլորիս համար անսահմանօրէն թանկ է, բայց մեզանից ու մանք կամ շատերն ունեն ('ո՛չ երբեք գուհէլին) նուիրական հայրենիք ու նրա կարօտը: Ունեն անաւա՛յն հողի գերաւած կէտի կարտեան ցաւը, անդին ծննդավայրի չլուրդ կանչը: Բայց չէ՞ որ մենք հարազատներ ենք, ուրեմն իրաւունք չունենք սեփական՝ նախնեաց հողի վրայ ծնուած լինելու բարտաւորութիւնն ու-

նենալու պատճառով չկիսելու աղէ կարօտը, շնորհակալութեամբ ցաւը, չլսելու աղէ կանչը եւ անմասն մնալու նրանց ձեռն-տուածներին: Ահա սա, ըստ իս, շատ կարեւոր է դարձնում Գալչոյեանի ստեղծագործութիւնը ազգային-գաստարարական տեսակէտից:

Նայն առումով ուշադրաւ է նաեւ նրա հաստատ համոզումը, որ կռուել գիտնալն ու կարողանալը նոյնքան կարեւոր է, որքան հողին կապուած լինելն ու ներսն ծառայելը: Այս մտայնագումը յըստակ երեւում է «Մեղապարտը» պատմուածքի հերոսի ներքին մենախօսութեան ընթացքում եւ դեռ գիտենք, որ Գալչոյեանն իր ընկերներին գրեթէ ասույթում էր, որ գէթ կրակել սովորեն...

Միբոյի միջոցով Գալչոյեանը, մեկնելով իր տեսակէտը, պարզ ասում է. «Յարուք, էմ մարդ կամօք կ'ընդունէ մահ, որ վրէժ ու փափաք չունէ»: Այս բառերը, երեւի, շատերին կ'ամաչեցնեն, երեւի նաեւ արթնացնեն բարեկեցիկ կեանքի նիւթից, որովհետեւ Գալչոյեանը ո՛չ թէ վերացական պատրանք-երկրի մասին է խօսում, այլ՝ իր եւ միւր հայրենիքի: Նա ո՛չ թէ դուրերի խորքում լուսապատկը զլիկն նստած մի պատմիչ է, այլ՝ մեր ժամանակակիցը, մեր երիտասարդ ժամանակակիցը: Ինքը, անտարասկոյ, իր «Դաշտապանը» պատմուածքի Մոսէի նման կ'ասէր. «Է՛մ գիմուոր գիմուոր չէ, որ վերջիմ գնդակմ իր հատար չի պանի»:

Յաղթուած-չպարտուածի մասինութիւնն է, որ միշտ ելք, լուծում որոնելուց չի դադարում: Առասպելական արքութիւնն արհամարհում է նոյնիսկ արհիւնէ վնդակը, իր նպատակին հասնելու վճռականութեան մէջ: Դաւոն կռուի պահին զոչում է. «Ու գաղկուկ չկայ: Ով գաղկուկն» դաւամում է: Գալչոյեանը չի հաշտուում ստեղծուած իրավիճակի հետ տակը քիչ է, նա պարզապէս այն չի՛ ընդունում: Դիպուկ է ասել Հրանտ Մանթաւոսեանը. «Նա ապագայի մէջ կառուցելիք էր փնտրում եւ ստիպուած էր հմարել»:

Սա հնարում էր... Նրա հերոսները հնարաւոր ու անհնարին ուղիներով գէպի

տուն են գնում, ե՛տ, ինչպէս Դաւոն՝ մահուան թեւերով, ինչպէս Մովսէսի Օհանը՝ խենթ կարծուելով։ Մեփական մահուան վճիռը կայացրած Քենի Թորոսը մէկ փափաք ունի միայն՝ իր անուանակից Թորոսը յանձնել միակ, նուիրական պատգամ։ «Ձգուկ, մեծամեաւ աւ լը-դառնաս քեռի Թորոսիկ։ Էղնի ու, ձը-գուկ, ետ դառնաս իմ անցած նամբով։ Էն նամբէն, սար աւ ձորի մէջ քանց թիլ խնամած կռուի ու կատարումի մէջ իմ մար դառնի, դու կծկիս աւ ետ դառնաս, ձգուկ...»։ Խոսքած չարիքին իր կեանքի գնով յաղթած Թորոսի պատգամը մե՛նք պէտք է ընդունենք Գալլոյեանից ու շարունակենք նրա «սեփական» արեան խոսքը՝ որտէ՛ սիրտ։

«Իսաւան» պատմութեամբ չափէ Պը-լուկը մանկական անմիջականութեամբ հարցնում է մահամեծ ընկերոջը, նախ-կիւնում՝ գինակցին։ «Քու մակտիմ ուրա-խութիւն կայ, Դաւո, դու ինչի՞նչ է կ'ըն-քաս»։ Իսկական չափանիւն հենց այդ է, որ կայ։ Դրանից վեր։ Անելի՛ն. ուրա-խութիւն լինել չի կարող էրգրին հո-գով փարած, նրա համար կուտած մար-դու համար։ Նոր ընտանիքում առհ-միկ աւանդներով ապրած, միշտ յույսի ու կարօտի մաքուր խառնուրդով սնուած չողիներէ համար ուրախութիւն է, որ ա-հա վերադառնալու է եւ, հողի բոյրը ձեռքերին, անկասկած ուղեւորուելու են իրենց միակ գրախաղ՝ էրգրի։ Որքան խաղաղ, ալիքան էլ համոզուած են, որ ցանկալի հանդուրանն իրենց է պատում, իսկ այդ համոզման գրաւականները հենց իրենց ապրած կեանքն ու մաքուր խելոն են։

Գրականութեան մէջ հանդիպել ենք, այսպէս ասած, «մաքուր արդարներ» մի շարք տարբերակների։ Տոթեռեւեկու մօտ նրանք պարտուած արդարներ են, իսկ կիյնում Ապոլինների մօտ՝ միամիտ արդար-ներ։ Ալեքսանդր Բլոկը տուեց բացարձակ մաքրութեան զանգիւղ արդարներ։ Սա-րոյեանը աւելացրեց զպարզունակ ար-դարներին։ Ռեմարկը՝ զառնանցած ար-դարներին։ Բայց Գալլոյեանի արդար-ները եղան եթէ ոչ առաջին, ապա՝ ամե-նաամբողջական, իսկական, անվիճելի-

բէն իմաստուն արդարներ։ Պահելով ի-րենց անթերի ուղղամտութիւնը, նրանք նաեւ իմաստուն խորհրդատուներ են։ Նրանց գինակցի անող ճշմարտացիու-թիւնը պայմանաւորուած է իրենց ամ-բողջականութեամբ, պարզապէս, նրանք ապրում են ու պատմում, խօսում։ Նը-րանց շխտականութիւնը քական է շնչառու-թեան պէս։ Ներսէն, օրինակ, իրեն չի ներում գինով վիճակում անարժան նա-խազանի հասցէին շաշլամ զովասանքի համար։ Նա հարկ է համարում նոյն գի-ւնին իսկ ուղղել ակամայից գործուած սխալը։ «Ձեմ ուզի, որ իմ սուրբ խօսքի վրայ առաւօտ քացուի։ Իրիկոյց ցործ լուսումն չեն թողնի»։ Սա՛ է Գալլոյեա-նի մօտեցումը։ Այս պարբերութեան մէջ արտացոլւում է նրա հաւատամքը՝ ուղ-ղամիտ եւ ուղիղ լինել։ «Բնավտանգում կարգում ենք. «ձիւղն այն է, որ մարդ աւելն օր հաշուի իր վերջին օրը...։ Այո, հաշուի, թէ վերջին օրն է, եւ ապրում է, քայլում է միայն այդ օրուայ համար»։ Որքան մանր ու մեծ չարիքներ կը վեր-նային, եթէ որդեգրէինք այս լուսաւոր մտածելակերպը, որքան մեծ կը թուա-յին փոքրիկ հրճուանքները...։ Այո, եւ նման սկզբունքներին հետեւելով է, որ Գալլոյեանը սոսկ գրող լինելու սահման-ներէց այն կողմ թէ՛ գաւառիսական է, թէ՛ երեւոյթ, թէ՛՝ մանաւանդ — ոգի։

Կեանքի մայրամուտին միայն տառա-նանուզ դարձած Մամբրէն կշտամբում է մի փաշտոտ թղթակցի, իսկ Գալլոյեա-նը՝ մեզ խրատում։ «Տղայ, փողի համար հոգի չեն ծախի։ Դու հոգի չունես, աղ-դայ, սուրբ Մաշտոցի արդար գինաւորնե-րին անարդար հրաման չեն արձակէ։ Դու արեւայ չես ու գրեթէ հրաման արձակե-լու իրաւունք չունես։ Քու հարստ արք-էնդ քաշէ, սղայ»։ Ո՛չ միայն իր գրական գործերում, այլեւ, ընդհանրապէս, Գալ-լոյեանը ճշուրբ Մաշտոցի գործի միշտ հաւատարիմ ու քաջարի զօրավարը ե-ղաւ։ Արձակեց միայն արդար հրաման-ներ՝ որպէս իմաստուն եւ բարի արքայ։

Լուսաւոր մարդու կորուստով ստեղ-ծուած գաղտնիութիւնը մեզ թոյլ է տա-լիս ողբալ, բանաստեղծ վահագն Դաւ-

թեանի հետ մրմնջել էր բառերի վերածուած լացը:

Այդ առաւօտ Սասնայ սաքում
Մի աստղ ընկաւ յանկարծ,
Լացն իր լացեց մի ջինջ ազրիւր
Ու չարացաւ յանկարծ:

Բայց մենք մեզ երջանիկ պէտք է համարենք, որ մեր գրականութեան մէջ ոսկեհոտա գրուեց Գալշոյեան էջը, որ նա մեզ կտակեց հող եւ սէր, աւանդեց կրօնելու ոգի, մի գեղեցիկ աշխարհ բացեց մեր ապրելու, ուր իշխում է ճշմարտասիրութիւնը: Մեր հայրերին ցոյց աւելով, նա մեզ ներշնչեց հպարտ պատկանելիութեան թանկ զգացում, որը կարող ենք

արդարացնել իրեն հաւատարիմ մնալով: Մուշեղ Գալշոյեանի վաստակն ու յիշատակը յարգել կը նշանակի հետեւել նշուած ու թող շուտ, որ նա վերածուի յուշի: Կը նշանակի շնորհակալ լինել եւ ժամանցի ընթերցանութեան չվերածել նրա բոլոր էջերը: Պիտի խորհել երկա՞ր նրա ուժէն խօսքի վրայ: Իրաւացի է Ստեփան Թովչեանը. «Նրա ստեղծագործութիւնը ո՛չ միայն վաւերացումն է մայրնիմերի հերոսականութեան, այլեւ՝ կուտարեալ սխրտ է»:

Այդ սխրանքի արժէքը մենք պարտաւոր ենք բմբռնել, երախտագէտ լինել ու յետոյ՝ տէր կանգնել Մուշեղ Գալշոյեանի կելտած բերդին, իր թողած զրչին ու հրաշանին:

8 Փետրուար 1982
Նիւ Եարք

ԱՐԵՎԻԿ ԳԱՐԻԷԼԵԱՆ

Ս. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն

ՄԵԾ ԵՐԱԶՆԵՐ, ԱՐԴԱՐ ՊԱՎԱՆՋՆԵՐ

— ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԱՌԻԹՈՒ —

Նախագահական դուռը բնորոշութիւններէն ուսալ անոնց յաջորդած օրերուն, Վերկորդ Հանրապետութեան կարգախօսը սկսաւ շրջան ընել լիբանանեան ընկերութեան բոլոր շրջանակներուն մէջ, որոնք, բոլորն ալ, շեշտը դրին մեքորեայ պահանջներուն գոհացում տուող, անցեալի իր ակար կէտերէն ազատազրուած եւ իր ապագայի հեռանկարներով ամրապինդ պետութիւն մը՝ երկրորդ Հանրապետութիւն մը կերտելու հրամայականին վրայ:

Մամլոյ սխալներէն՝ զրազէտներու, արուեստագէտներու եւ լրագրողներու հիմնադրուած պահանջներն ու տեսչականները անհատական պատկերացումները դրին հաւաքական պահանջի մը հունին մէջ, անոր ընկերային պարունակ եւ մշակութային խորք տալէ ետք: Գրաժասուն — պանդոկ — զբօսավայր հայրենիքի մակերեսային եւ անխորք գիմադիծը բռնուն կերպով մերժելէ ետք, ժողովրդային խաւերը մտահոգող ընկերային արդար պահանջներուն զօրավիգ կանգնելով հանդերձ, լիբանանցի մտաւորականներն ու արուեստագէտները եկան ընդգծելու մշակութային կազմակերպ եւ ներգործօն պետութեան մը պահանջը:

Այս նիւթին շուրջ, վերջին ամիսներուն, մամուլի էջերուն լոյս տեսած հարցաթերթիկներուն պատասխանները, հարցադրոյցները, բաղաձայն քննարկումներն ու յօդուածները, իրենց գլխաւոր դիժներուն մէջ, յանդիպան նոյն հասարակ յայտաբերին՝ ապագայի տեսչականներէ

համբայ ելած մշակութային կազմակերպ ջրագրականութեան մը պահանջին: Անեքի քան եօթնամեայ արիւնայի տաղնուպէ մը ետք, առաջին անգամ ըլլալով, լիբանանցի մտաւորականներն ու արուեստագէտները դուրս կու գային իրենց պարտադիր լուծեմէն՝ հաւաքական առողջ կեցուածքով մը իրենց ներկայութիւնը արժանաւորապէս հաստատելու: Այսպէսով, անկախ իրենց պաշտօնարական եւ դեղադիտական տարակարծութիւններէն՝ լիբանանցի մտաւորականներն ու արուեստագէտները կ'որոշեցին ազգային միասնական կեցուածք, անոր տալով մշակութային խոր եւ բազմակողմանի շարժումի մը բոլոր նախատեսանքները:

Մեկնելով մշակութային եւ ազգային այս առողջ մթնոլորտէն, Հիւսիսային Միթնի Մշակութային Խորհուրդի վարչութիւնը, իր թատրոնի յանձնախումբին ներկայացուցած առաջարկը քննելէ եւ վաւերացնելէ ետք, միասնաբար կը ծրարէր եւ կը կազմակերպէր Լիբանանեան թատրոնի համագումարը:

Երեք ամսուան վրայ երկարած աշխատանքները եկան բերեղացնելու նախապատրաստական հանգիստներուն յայտնուած տեսակէտներն ու մտահոգութիւնները, որոնք բանաձեւուեցան երկուստանքի նախադիժներուն մէջ:

Այսպէս, «Թատրոն եւ տեղեկատուական միջոցներ», «Թատրոն եւ թատերական կրթութիւն», «Թատրոն եւ տեղեկատուութիւն», «Թատրոն եւ պետութիւն», եւ «Թատրոն եւ թատերական ապա-

ուարկուներու արհեստակցական կազմակերպումն ստորաբաժանումներուն տակ՝ ենթալանձնակազմերը աւարտեցին իւրենց աշխատանքները, տպա՝ Շարաթ, 4 Դեկտեմբեր 1982, կէսօրէ առաջ ժամը 10ին, Հիւսիսային Մեքսիկա Մշակութային Խորհուրդի կեդրոնին մէջ տեղի ունեցաւ մամուլի ասուլիս, որուն ընթացքին Հ. Մ. Մ. Խ. ի նախագահ, Քատերագիր ու բեմադրիչ Ռեմոն Ժպարա եւ վերջիւ լալ միութեան վարչութեան ատենադպրը՝ Անթուան Սէյֆ, մամուլի ներկայացուցիչներուն պարզեցին իրենց ծրարադրած իրանանեան թատրոնի համադրման կազմակերպման առն ուղւած պատճառները, հաւաքին ընդհանուր ղեկերը եւ անոր հեռանկարները:

«ՈՐՈՎԱԶՆՏԵՆԻ ՄԵՆՔ
ԿԱՐԻՔԸ ՈՒՆԻՒՔ ՍՈՐՈՑ»

«Ապագայի տան» մէջ, Ուրբաթ, 10 Դեկտեմբեր 1982, կէսօրէ առաջ ժամը 10-30ին, Լ. Թ. Համադումարի նախագահի հանդամանքով՝ Ռեմոն Ժպարա կատարեց հաւաքին բացումը, որմէ ետք խօսք առաւ օրուան նախագահը՝ կրթական եւ գեղարուեստից նախարար Իսամ Խուրի եւ կատարեց հանդիսութեան պաշտօնական բացումը՝ հանրապետութեան նախագահ չէյի Ամին Ժմայէի եւ իւր անունով:

1847ին, Պէյրութի փոքրիկ սրահներէն մէկուն մէջ թատերական շարժումի ծնունդը յարապարակ Մարուն Նաջաշի երեւութի մեկնելով, նախարար Իսամ Խուրի ողջունեց 135ամեայ այդ ճանապարհին ճանձնօք հերոսները, «Խեմքերը», մարդոց հասկացողութեամբ, միջնդնո խեմքութեան եւ համեմարիմ միջեւ կայ թափանցիկ միջոց մը, գոր միմիայն պատմութիւնը կը ճանչնայ»:

Շարունակելով իր խօսքը, նախարար Ի. Խուրի բարձր գնահատեց իրանանեան թատրոնը ամրայինը եւ կազմակերպ կառույցով ժը օժտելու առաջադրութեամբ այս հաւաքին զաղափարը յղացած պատիանատուները եւ, այս առիթով, իրանանեան թատրոնի անկեղծ սպասար-

digitised by

կուններն ու, անոր ապագային ի խնդիր՝ «Ապագայի տան» մէջ խմբուած ժողովուրդները, որոնց մէկ անգամը յայտարարեց ինքզինք, երբ յստակօրէն ըսաւ. «Իբրեւ կոթակամ եւ գեղարուեստից ճախարար՝ ինքզինքս երախեալ մը չեմ ճշկատեր այս համագումարիմ, այլ՝ անոր կազմակերպիչներէմ մէկը եւ անկէ թխած որոշումներու եւ առաջարկներու գործադրումը հետապնդող տարր մը: Եւ այս առիթէն օգտուելով՝ կը հաստատու մեզի իմ այն խոր հաւատքս եւ վճռակամութիւնս, թէ Լիբանանի մէջ, մշակութային եւ գեղարուեստական գործը պաշտօնական աւելի ուժեղ եւ ամրապնդակամ հոգածութեան կը կարօտի (...) Որպէսզի տեղեկագրութիւնը, ստեղծագործութեան հայրենիքի մէջ, որք, լիւաւ եւ ազատ ազգական մը չըլլայ»:

Հետեւաբար, իբրեւ երաւագութիւն՝ տն դեր առաւ թատերական արուեստին սպողակերտ հանգամանքը, մարդուն մէջ տխրի ազնիւ զգացումներ եւ նկարագրային գիծեր զարգացնողի սրբազան դերը՝ թատրոնը նկատելով ժողովուրդներու տենչերուն յուշարարն ու խղճմտանքի մայրը: Այս իսկ պատճառով, նախարար Ի. Խուրի ժողովականներէն խնդրեց հարցերը քննարկել այս ողբով, մարդակերտ արուեստագէտին վայել լըճախոհութեամբ, որովհետեւ «մեմ շատ լացիմք, շատ վախեր ապրեցանք եւ շատ անօթութիւն ճանչցանք...: Եւ որովհետեւ մեմ կարիք ունիմք սիրոյ, մեր մանուկները՝ երջանկաբեան, իսկ պարմանուհիները՝ ժպիտի: Ձեզի՛ կը դիմենք»:

ԱՌՈՂՋ ՄԹՆՈՒՈՐՏ ՄԸ՝
ԻՐ ՃՇԳՐԻՏ ՀՈՒՆԻՒՆ ՄԵՋ

Իւր առաջին վայրկեանէն իսկ, կազմակերպչական բծախնդիր եւ լուրջ ճիգի մը ապացոյցը տուած այս խորհրդաժողովին նիստերը ընթացան նման հաւաքէ մը տիեկալուած ջաղաքակրթական առողջ մթնոլորտի մը մէջ: Փաստօրէն, նախապատրաստական աշխատանքները խորհրդաժողովին պատրաստած էին առաջ ճիգիտ եւ պայծառ հունը, երբ ժո-

A.R.A.R.®

դրամականներու աղատ ընտրութեամբ կազմութեան մեծաթիւ յանձնախումբերու տրամադրութեան տակ զրուեցան լրջօրէն պատրաստուած աշխատանքի նախագիծեր:

Յորհրդաժողովին յաջողութեան առաջին ազդակը հանդիսացող վերոյիշեալ կէտին հետ պէտք է ընդգծել նաեւ ժողովականներուն ցուցարարած լրջութիւնը, որ ո՛չ միայն ապահովեց տեսակէտներու ազատ եւ ամբողջական արտայայտման անփոխարինելի իրաւունքը, այլեւ հաւաքը տօնեց միտքերու կենդանի փոխառացութեան իր ընթացքով, երբ իրերայաջողդ նիւտերը դառնորեցին տաշնայներն ու հեռանկարները իրանանան թատրոնի սպասարկուներուն: Հաւանաբար այս արդար ձգտումները կը բանաձեւէր Ռեմոն Ժպարա, երբ իր բացման խօսքին մէջ, ի միջի այլոց, կ'ընդգծէր. Լիբանանցի մտաւարկանքը, իրաւ մտաւարկանքը կը հաւատայ, որ մշակոյթը իրաւունքն է իւրաքանչիւր ժողովուրդի, բայց աչ՝ ազատութեան եւ տնտեսագործութեան քաշունքով եղած գիշտմանը: Որովհետեւ ազատութիւնը հիմն է բոլոր քաղաքացիներական վերջինքներուն եւ առանց օնոր մշակոյթը կը վերածուի իշխանաւոր փառաբանող շնորհի մը, իսկ մտաւարկանքը կը դառնայ իշխանութեան դրամ տալիս կանգնած դաւադրանքի փոխանակ ինք ըլլայ իշխանութիւնն ու խզմնտանքը:

Լիբանանցի ժողովուրդին իմացական եւ բարոյական իշխանութիւնը, խղճման անքնի ձայնը եւ անոր մշակութային իրաւունքներուն յուշարարն ու պաշտպանը ըլլալու խոր գիտակցութեամբ՝ Լիբանանեան թատրոնի համագումարը արդարացուց իրմէ սպասուած անկախութեան եւ, յետ օրակարգի նիւթերուն մանրամասն ու ամբողջական քննարկման՝ վաւերացուց երկրորդ հանրապետութեան մը փայլել բանաձեւեր:

Քաղաքակրթօրէն արդի եւ յառաջագիտ երկրի մը պատկերացումով առնուած բանաձեւերը՝ իրենց ամբողջական եւ լայն գիծերուն մէջ, յաջողեցան լաւագոյնս արտայայտել լիբանանեան թատրոնի սպասարկուներուն մեծ երազները՝

Թատրական շարժումը արժատական վերահասութեան եւ թարկելու տալիս զրանքներէ թելադրուած:

ԹԱՏՐՈՆ ԵՒ ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Թատրոնի եւ տեղեկատուական միջոցներու (մամուլ, ձայնասփիւռ, պատկերասփիւռ) յարաբերութեան քննարկման յանձնախումբը, բաղկացած՝ լիբանանեան մամուլի մշակութային խմբագիրներէ եւ թատրական քննադատներէ, արծարծեց այս ծիրին մէջ առկայ հիմնական հարցերը: Այդ իսկ պատճառով, բազմակողմանի քննարկումներու ճամբով բերեցանք բանաձեւերը արժանացան ընդհանուր ժողովին անվերապահ ընդունելութեան եւ, կարգ մը լրացումներէ ետք, վաւերացուցան իրեն ընդհ. ժողովէն բխած վերջնական բանաձեւ:

Լիբանանի աւելի քան եօթնամեայ տաշնային հետեւանքով առաջացած տեղեկատուական նահանջի ընդգծումը կոտորելով՝ ժողովականները յատկապէս տնդրադարձան լիբանանեան պատկերասփիւռի պատահականութեան ձգուած հաղորդումներուն եւ, առ այդ, պահանջներին, որ լիբանանեան պատկերասփիւռը ունենայ թատրական խոր եւ ամբողջական քաղաքականութիւն՝ իրաւ թատրոնին վայել զօրծերու սխուռմէն մինչեւ հարցազրոյցներ, թատրական անդրադարձներէն մինչեւ բաղձմայն գրոյցներ: Լիբանանեան թատրոնի հոլովոյթը ներկայացնող շարքէ մը մինչեւ օտար լայնադիրներու բնախնդիր ընտրութիւն, որպէսզի հանդիսատեսներուն ճաշակի դարձացումը ընթանայ ղէպի արուեստի մնայուն մտկարգակներ՝ զանոնք դաւելալալողերով եւ թատրոնը շահագործող տնտեսաւոր ներկայացումներով հաճոյացունելու փոխարէն:

Աւելին. իր վաւերացուցած բանաձեւերով՝ Լիբանանեան թատրոնի համադումարը պատկերասփիւռի տնօրէնութեան հանդէպ վերաբանադրել թատրական մշակութի նախապէս ներկայացուած ուղարատ գործերը՝ լիբանանեան

Թատրոնի ամբողջական վիտեո-դարանի իրրեւ առաջին քայլը: Այս նոյն պահանջները նաեւ պարագ զրուեցան լիբանան-եան պետական ձայնագրիւով պատու-խանատուներուն վրայ, որպէսզի մայ-նոսփիւրը եւս իր մասնակցութիւնը բերէ Թատրական լուրջ հասկացողութիւն մը պատրաստելու քարոզական աշխատանքին:

Ինչ կը վերաբերի Թատրոնի եւ մամ-լայ հաստատութեանց յարաբերութիւննե-րուն, բանաձեւը յստակ զատորոշում կա-տարեց Թատրական տեղադրութիւն եւ քննադատութեան միջեւ, ընդգծելով, որ առաջկայական քննադատութիւնը միայն պէտք է յաջորդէ տեղեկատուական տեղ-բաղարձներուն եւ այդ յօդուածները պար-

տին ստորագրել միմիայն մասնագէտ կամ այն մշակոյթի տէր քննադատներ, որոնք, սակայն, իրենց տեսական ծանոթութիւնները պէտք է զարգացնեն լիբա-նանեան համայնարանի Թատրական ամ-պիոնի մէջ քիմիք դաստիարակութիւննե-րու հետեւելով, եւ կամ ալ՝ Թատրական աշխարհի գլխաւոր օճախներուն եւ հա-սատութեանց տրուած դասընթացային շրջապատներու միջոցաւ:

Այս գծով, ընդհ. ժողովը վաւերա-ցուց նաեւ Թատրական մասնագիտական պարբերութիւն մը եւ մատենադար մը հրատարակութեան զազափարը, ինչպէս նաեւ՝ արուեստի քննադատներու սեկտի-քայի մը առաջացման պահանջը:

ՉԼԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԼՈՒՍԱՆՑՔԻՆ

● Իրրեւ յիշմանայ մշակութային մամուլի եւ բարոյանքի մերկա-յացուցիչներ՝ կազմակերպիչ մարմինը լիբանանեան քաղաքի համազու-տարին մասնակցելու հրաւերներ յղած էր Մուշեղ Իշխանի, Յարգէմ Փա-փագեանի, Սարգիս Կիրակոսեանի, Արա Արծրանի, Սարգիս Սարգիս-եանի, Վարսէմ Խորշիմի, Զոհրապ Մազուպեանի, Վաչէ Ասրունիի եւ Մուշեղ Մուշեղեանի: Մ. Իշխան, Վ. Խորշիմ եւ Վ. Ասրունի մը-կատուեցան բոնուար բացակայութիւն, առաջինը՝ առաջկայան պատճառով, իսկ վերջին երկուքը՝ երկուեք դուրս գտնուած ըլլալու համար:

● Առաջկայան յարգելի պատճառներով ժողովէն բացակայած Մ. Իշխան համազումարին յղած էր ոչոքոյնի յատուկ նամակ մը, որ տեղ պիտի գտնէ հաւաքին տանձագրութիւնները, բանաձեւերը, նամակներն ու հեռագիրները ի մի խմբով տպագրելի թղթածրար-հաւարին մէջ: Նը-մանօրինակ նամակ մը նաեւ յղած էր միւսումնաւոր պատճառով բացակայե-լու հարկադրամէքին տակ գտնուած Մահմաճէա Շամել:

● Լիբանանայ մամուլի եւ քաղաքի մերկայացուցիչները եւս մաս կազմեցին բազմակամ յանձնախումբներուն եւ իրենց մասնակցութիւնը բերին նախագիծերու ժողովման նիստերուն: Ս. Կիրակոսեան մաս կազ-մեց զօտարան եւ տեղեկատուական միջոցներ յանձնախումբին, ինչպէս նաեւ՝ համազումարին բխած ու տնայն հարցերու յատկացման կոչ-ւած հետապնդիչ մարմիններէն մէկուն, իսկ Արա Արծրանի, Սարգիս Մարգիսեան, Մուշեղ Մուշեղեան եւ Զոհրապ Մազուպեան՝ զօտարան եւ ստեղծագործութիւն յանձնախումբին:

● Համազումարին գլխաւոր ղեմավերել յիշեմք՝ Ռեմոն Փապաթ, Անթուան Մուշեղեան, Հարիֆ Մուշեղեան, Ասի եւ Մանուր Ռահպա-նի, Ֆայէլ Հումելիսի, Ժորժէթ Փապաթ, Ժեյալ Խուրի, Մահմաճէա Փրէշէմ, Շեքիպ Խուրի, Ռիտա Խուրի, Նաժի Մաալուֆ, Մարիա Մաա-լուֆ, Ամին Ալպերթ Ռիւանի, Ժորժէթ Պալ Նասար, Ռիփաթ Թորապէլ, Սամի Խայնաթ, Ժորժէթ Հաստատ, Խալաֆի Մարաշլի, Նապին Ապու Հուսն, Անտրէ Ժըտեմ, Էլի Հաստատ, մշակութային խմբագիրներէն՝ փօլ Շաւալ, Ապտո Ռազէն, Ռիտա Ֆախուրի, Միշէլ Մաէշի, Ֆէշալ Մուշեղեան, Համրի Զէլլալ, Ռայիֆ Փարաֆ, Ֆաուզի Շալաշ, Մահա Մուշ-բան, իսկ գլխաւոր բացակայներէն՝ Մուհիթ Ապու Տըպս, Մաազուպ Շը-

ԹԱՏՆԵՐԱԿԱՆ ԼՈՒՐՁ ԿՐԹՈՒԹԻՒՆՆԸ՝
ԱՆԽՈՒՍԱՓՈԼԻ ՊԱՀԱՆՁ

Ներկայի, այլ մանաւանդ վազումս
գիտակից եւ զարգացած հանդիսատեսը
ստորադաստեղծելու նախնականներէն
համապատասխան յատուկ ուղղութեան
առարկայ դարձուց թատերական կրթու-
թեան պարագան եւ կեդրոնացաւ կրթա-
կան ծրարքին մէջ թատերական կրթու-
թեան դասանելիքը աւելցնելու հրամայա-
կունին վրայ՝ մանկապարտէզէն մինչեւ
համալսարան:

Լ' բանտեան թատրոնի պարզած ներ-
կայի պատահականորէն յակերպին բա-
ցասական անդրադարձներուն առաջը առ-
նելու համար, ժողովականները շեշտը դը-

նին նսեւ թատերական իրաւ եւ ամբող-
ջական կրթութեան կէտին վրայ, որպէս-
զի վաղուան հանդիսատեսը թատրոնը դի-
տէ իբրեւ անկախ եւ ամբողջական ար-
ւեստ մը եւ ոչ թէ իբր զրոստավայր: Այլ
խոսքով՝ հանդիսատեսի (խօսքը կը վե-
տարկի զարգացած եւ դիտակից արուես-
տասէրներուն) տապնապին լուծման ա-
մէնէն ազդու միջոցն է անոր հետեւողա-
կան պատրաստութիւնը, որ հոգեմտաւոր
աւելցնելու հաւատարմող ազնիւ մարդու
եւ դիտակից քաղաքացիի կերտման աշ-
խատանքն է ժողովականով, ինչպէս դի-
տէլ տուին մէկէ աւելի ժողովականներ:
Այս դժոճ, կարծիքներու գոռախա-
նութիւնը յանգեցաւ այն հղարակցութեան,
որ այս ուղիին հետեւելով միայն կարե-

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԱԾ ՆՈԹԵՐ

բառի, Ռոժէ Աստաֆ, Նիտալ Աշֆար, Զիտա Ռահպանի, Ժերար Անտիս-
եան, արեւմտեւ արեւմտեւ արեւմտեւ կը գտնուին:

● Հաւաքի կարգ մը ճիւղերուն իրենց մասնակցութիւնը բերին
նաեւ Պէյրութի մշակութային հաստատութեանց ու կեդրոններու տնո-
րէններ եւ ներկայացուցիչներ, որոնք կատարեցին գործնական քննա-
դրանքներ՝ մեկնելով իրենց բազմաթիւ փորձառութիւններէն եւ իրենց
երկիրներուն մէջ սրգեղանած թատերական զործիակերպէն եւ պիտա-
կան քաղաքականութենէն:

● Նմանապէս, զգուշաբար մասնակցութիւն բերին այս նպատակով
հրաւիրուած եւ թատերական ասպարէզի մէջ միջազգային նմանաշին
արժանացած մէկէ աւելի անուանի գեմեր, ինչպէս՝ Նիւ Յորքի Հելա
Մամաթ փորձառական թատրոնի հիմնադիր եւ տնօրէնուհի Էլլեն Սթի-
ուելըք, «Քոմէտի Ֆրանսէզի վարչական բաժնի տնօրէն Սերժ Մալգո-
մըսկի, Սթրազպուրիի Ազգ. Թատրոնի տնօրէն Ժան-Փիլիք Վալանս, Իւ-
նեւալի հեթակայ Թատրոնական Միջազգային Հաստատութեան ժող-
ովական կեդրոնի տնօրէն Ժան-Լուի Թաման, Օլիվիէ Մուտէն՝ «Esprit»,
Խայր Ժան-Լուի Շիլկի՝ «Projets» եւ Խայր Լուի տի Վալի՝ «Etudes»
հանդէսներու խմբագրատնօրէն եւ ռեժիսորներ:

● Հելա Մամաթ թատրոնի հիմնադիր Էլլեն Սթիուելըք բարձր գնա-
կատեց արաբերէնի զննարարական ծով հարստութիւնը եւ ժողովուրդ-
ներու թատերական բազմաթիւ արիւնք, ինչպէս նաեւ՝ ժամանակակից օտար
վարձերէն՝ ազգային ուրոյն դիմագիծ ունեցող թատրոն մը կերտելու եւ
անոր զարգացման հորիզոնները լայն քանալու առաջադրանքով:

● Փակման համդիտութեան ընթացքին իւրը ունեցաւ քանադաշտ
Սայիտ Աբել: Լիբանանցի հանրածանօթ քանաստեղծը գլխաւորաբար ժամ-
նայաւ հրեւ հաստատութիւններու՝ Ազգային թատրոնի, Օֆերայի, Ֆիլ-
րապաւ հրեւ հաստատութիւններու անդամակցելի հրաւայականներուն
հարմարեմէ՝ ճաշակատեմէն ստեղծման անխուսափելի հրաւայականներուն
վրայ եւ պիտութեան պահանջից հրեւ տարուած ընթացքին իրականացը-
նել «լիբանանեան քաղաքակրթութեան այս երեւ հար Պապարտները»:

յի է չըջանցել սպառողական թատրոնի գերվաճառանոցեան վտանգը եւ ճշմարիտ թատրոնի զորդացումը խառնել թէ՛ դեզադիտականօրէն եւ թէ՛ մարդկօրէն աժուր եւ բեղուն ենթահողի մը վրայ:

Տակաւին, առաւելագոյն արդիւնք մը ձեռք ձգելու համար, համազումաբը տնհրաժեշտ նկատեց թատերական արտադարձական գործունէութիւններուն քաջալիւր հանդիսանալու կեցուածքը, այսինքն՝ թատրոնի ակումբներու, աշխատանքներու, գրադարաններու եւ յարակից ճիւղերու տարածումը ամբողջ Լիբանանի տարածքին՝ սկսելով չըջուն թատերախումբերէն եւ հասնելով մինչեւ թատերական տեղեկատուութեանց եւ ուսումնասիրութեան կեդրոնի մը առաջացման պահանջը, ներառեալ մանկապատանեկան թատրոնի հարցերուն յատուկ խորհրդաժողով մը յատկացներու համընդհանուր տեսակէտը եւ աշակերտական սակապինի դրութեան որդեգրումը: Վերջապէս, ժողովը եկաւ եղբակացներու, որ այս հարցը անհրաժեշտօրէն պէտք է աշխատանայ պետութեան բոլոր հաստատութիւններուն ուշադրութեան, իսկ առոր բերեղացման իրենց մասնակցութիւնը պարտին բերել ե՛ւ կրթական նոստարութիւնը՝ իր ուսումնասիրութեանց այլիւայլ կեդրոններով, ուսուցչանոցով, համալսարանի զեղարուեստի ճիւղերով, ե՛ւ հոգեբան մանկավարժները, ե՛ւ թատրոնի սպասարկուները, որ պէտքի ծայր աստիճան նուրբ այս հարցը ժխտական անդրադարձներ չունենայ եւ վերջ տայ առեւտուրի համբոյն բռնած ճանկական աժան եւ անբովանդակ ներկայացումներու օրըստօրէ աւելի պարստ հող դանսող յոռի մտայնութիւն:

ԱՄԵՆԱՐՈՒՈՒՆ ՀԱՐՅԸ՝
ԹԱՏՐՈՆ ՅԵ ՊԵՏՈՒԹԻՆ

Համազումարի խաղաղ եւ բնականոն ընթացքը պահ մը երկկտրականացաւ, երբ յաջորդաբար իրենց բանաձեւերը ներկայացուցին «Թատրոն եւ պետութիւն» ու «Թատրոն եւ թատերական սպասարկուներու արհեստական կազմակերպում»

յանձնարարները, որոնք, արդարօրէն, իրրեւ մեկնակէտ ունէին անցեալի դառն փորձառութիւններու եւ տարիներու ընթացքին կուտակուած բացասական բազմաթիւ հարցեր: Գրաքննութիւնը մերժելով հանդերձ, մասնակիցներուն մեծամասնութիւնը վտանգաւոր նկատեց ճշակութային նախարարութիւն մը կամ ընդհանուր տնօրէնութիւն մը առաջացնելու արամագրութիւնը, որովհետեւ զանկա մեզ կրնայ առաջնորդել նման քայլի մը ղեկավարական կարգ մը երկիրներու նախընթացին՝ առաջացնելով տեղաշարժի կացութիւն մը, ուր թատրոնն ու մշակույթը կը վերածուին վարչաձեւի մը քարոզական մէկ մեքենային: Հետեւաբար, ժողովը աւելի օգտակար եւ շինիչ գտաւ թատրոնի գերագոյն խորհուրդի կառուցը, որ փոխանակ նախարարի մը կամ ընդհանուր տնօրէնի մը (երբեմն նոյնիսկ տնթատերագէտ) ժառանգութիւն կտիտալ ըլլալու՝ թատերական մարդի վարչական թէ՛ արհեստակցական կազմակերպումը կը վստահուի առաջարկուած պատասխանատու մարմինին, որուն մաս կը կազմեն ե՛ւ թատրոնի ընդհանուր պատասխաններու, ե՛ւ կրթական նախարարութեան, ե՛ւ տեղեկատուական նոստարութեան ներկայացուցիչները, իսկ անոր նախագահութիւնը կը վստահուի իր անաշտուկութեամբ եւ իմացական խոր պաշարով բոլորին յարգանքը նուաճած ու թատերական վստակի տէր մտաւորականի մը:

Արդ, մեկնելով այս տուեալէն եւ թատրոնի նկատմամբ նոր վարչաձեւին ցուցաբերած յուսատու կեցուածքներէն՝ բաւական խոր քննարկումներէ ետք, համազումաբը իր պահանջները ամփոփեց Լրկու գլուխներու տակ: Առաջին՝ անմիջական պահանջներ, երկրորդ՝ աւելի երկար ժամանակի վրայ իրադրոնելի անհրաժեշտութիւններ:

Օրինակ, անմիջական պահանջներու ծիրին մէջ, համազումաբը ընդգծեց Լիբանանեան համալսարանի զեղարուեստից տկաղեմիայի թատրոնի ճիւղը զօրացնելու եւ որոշ ժամանակ մը ետք անջատ միւսորի վերածնելու հրամայականը, պե-

տական թատրոնի մը ստեղծումը՝ իր բոլոր սեռերով եւ կառոյցներով, թատերական անուղղակի տուրքի առաջացումը՝ կառավարական եւ քաղաքացիական տուրքերուն համեմատական դրուժեամբ թատրոնի տուրքի կիրարկումով, քաղաքացիութիւններու թատերական դերին յստակացումը՝ փորձառական փոքր սերունդներու կառուցումով եւ իր շրջանին մէջ գործող թատերախումբերուն կատարումը ներթափանցներու ստեղծումն ու անոնց զարգացումը պայմանաւորող, այլ խօսքով՝ թատերական ստեղծագործութիւնը քաղաքացիական մթնոլորտի առաջացում (մրցանակներ, անհրաժեշտ դերութիւններու ընծայում, մասնակցութիւն փառատօներու, կրթաթոշակներու հաստատում՝ օտար կեդրոններու եւ համալսարաններու մէջ մասնադիտանալու համար, եւ այլն)։

Այսինքն՝ առաջացնել այն բոլոր պայմանները, որոնք թատերական կեանքը պիտի աշխտօթացնեն մասնագիտացած նոր ուժերով՝ բեմագործ ըլլան անոնք, դերասան, դիմադրար, տեքստի պատասխանատու, բեմավար, հեղինակ թէ ընկալաւ։ Կարճ խօսքով՝ թատրոնի ըզպասարկունները հետացնել ներթափանցումը տաճորութիւններէ եւ թեքիք առաջնորդներէ, որպէսզի անոնք իրենց ամբողջ ուժերը ի պաաս դնեն ստեղծագործական արկածախնդրութեան եւ լիբանանեան թատրոնը հարստացնեն իրապէս յանդուղն, խոր եւ ճշմարիտ ստեղծութենքով։

ԿԱՍԻԱՆ ԿԷՏ՝ ՓՈՒՍԱՆ ՎԵՐՋԱՆԷՏԻ

Լիբանանի թատերական պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով գումարուած վերոյիշեալ հաւաքը՝ իր հեռանկարներով, փաստօրէն, արտաքինացուց մշակութային ու քաղաքակրթական

այն խոր տաղնապը, զոր այս փոքրիկ երկիրը կ'ապրի ներկայիս՝ իբրեւ աւելի քան եօթնամեայ արիւնալի բախումներու հետեւանք եւ իբր իրերայալորող կառավարութիւններու ապամշակութային գործելակերպի։ Լիբանանեան թատրոնի համագումարով՝ երկրին թատրոնի սպասարկունները պահ մը փորձեցին դժեւ չ'ըմբռնել վերաւոր հայրենիքի մը վերաձեւաւորուող դիմադրիչը, այլեւ՝ դիմադրիչ քաղաքակրթօրէն արդի եւ յատկապէս ազատական, որուն անհրաժեշտութիւնը օրըստօրէ աւելի շեշտուած ձեւով կը դրուի յատկապէս մշակութային դիտանկիւնէն մօտեցած, տասնամեակներէ ի վեր։

Իր աշխատանքները յաջողութեամբ աւարտած Լիբանանեան թատրոնի համագումարը կրցաւ ըլլալ պատմական հաւաք մը՝ թէ՛ հարցերու քննարկման մակարդակի վրայ եւ թէ՛ առաջին անգամ թատրոնի սպասարկունները առանց բացառութեան ի մի խմբած ըլլալու հանգամանքով։ Համագումարին կամքը արտայայտող մարմինը, անկասած, բիւրեղացած բանաձեւերը պիտի հետապնդէ իրենց բարին խոստացող նոր իշխանութեան մօտ, որ երկրորդ քանոնադրեալ մը իրապէս կրնայ վերածուիլ միայն ա՛յն պարագային, երբ տնտեսական, ճարտարաւեպական, առեւտրական եւ լիբանաւարական վերականգնումին չափ եւ անկէ առաջ ու աւելի՝ կը ծանրանայ մշակութային վերագործօնքի երկարամեայ աշխատանքներուն վրայ, որպէսզի լիբանանցի մեծ բանաստեղծին՝ Սայիւս Աբլի բառերը կրկնելով, մենք եւս իրաւունքը ունենանք ըսելու համայն աշխարհին. «Ան, որ բռնեց Սալի գաւակիմ՝ Ամլիտի ձեռքը, ա՛ն է, որ մեզի քայլադրեց յայտարարել մարդկութեան, — քանակաւնութիւնը Լիբանանի ծնունդն է»։

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՆԱԽԱՐԱՐ ԻՍԱՄ ԽՈՒՐԻԻ ԲԱՅՄԱՆ ԽՕՍՔԸ

Բարեկամներ,

1847ին, Պէյրուքի փոքր սրահներէն մէկուն մէջ, բարձրացաւ մարդ մը, անունը՝ Մարտին Նաֆֆաշ, որպէսզի յայտարարէ քառերական շարժումին ծնունդը Լիբանանի մէջ, եւ անկէ՝ ամբողջ արաբական աշխարհին:

Այս երեւոյթը տեղի ունեցաւ հարիւր եւ երեսունընիւց տարի առաջ: Եւ Լիբանան սկսաւ ընթանալ հաստատաբայլ, քէկուզ գանդազ երբեմն, այս արուեստի ուղիին վրայ, անոր արձանագրած յառաջդիմութիւններուն հետ քայլ պահելու համար, յենած՝ անձնական ճախարհներու վստահելով՝ անձանք հերոսներու, «խենքերու», մարդոց հասկացողութեամբ, միմիջեւ խենքութեան եւ հանճարին միջեւ կայ քափանցիկ միջոց մը, զոր միմիայն պատմութիւնը կը ճանչնայ:

Համեմարեղ խենքերէն ռմամֆ, յարգելի պարոնայֆ, հոս են այս պահուս, ա՛յս սրահին մէջ, «Ապագայի տան» մէջ. անոնց միտքին մէջ կայ երազ մը, ձեռքերուն՝ առատ սերմանատիկ, իսկ իրենց էութեան խորը՝ արկածախնդրութիւնը շարունակելու յամառութիւնը: Հաւաքւած են հոս, քատրոնի մտահոգութեան շուրջ եւ չունին ուրիշ նպատակ՝ հեղինակներ ըլլան անոնք, բեմադրիչներ, դերասաններ, սիրողներ քէ ստեղծագործ արուեստագէտներ, բացի այս քատրոնը վերստին ռմամֆի բարձրացնելու եւ անոր հետ առաջ նետուելու տեսլականէն՝ իրեն քաղաքակրթութեան եւ ստեղծագործութեան ճշման, իբրեւ քաջադիմ պատկերը այս քաջադիմ հայրենիքին, որ կը մերժէ իր էութենէն գատ ուրիշ մը ըլլալ, կառչելով ազատութեան, արւեստի եւ գեղեցկութեան հայրենիքի իր էութեան:

Բարեկամներ,

Ձեր ներկայութիւնը հոս, «Ապագայի տան» մէջ, զոր մեծ կը նկատենք հաւաքավայրը լիբանանցի եւ միջազգային անկեղծ մտաւորականներու, հրաւերովը Հիւսիսային Միջին Մշակութային Խորհուրդին, որուն գերը մշակոյթը յանապագորեայ հացի վերածելու առաքելութեան մէջ բարձր կը զմանատեմֆ, ձեր ներկայութիւնը հոս այլ բան չէ, եթէ ոչ մերժումը այն քատրախազին, որուն վերջին

digitised by A.R.A.R.@

տեսարանին՝ գրեթե հասնելու վրայ ենք:

Ութ տարի է ի վեր, դառադուրիւնը Լիբանանը կը գործածէ իբրեւ թատերադահլ, անոր 10452 քառակուսի ֆիլոմերը՝ քեմաւար-թակ, մարդկային արիւնը, միւս ու արցունքը՝ *սեքոր* եւ զարդա-րանք, քեմադրելով արդի աշխարհի պատմութեան ամենամութ եւ ամէնէն սոսկեքեք թատերախաղը:

Եւ ձեր դերը. սիրելի արուեստագէտներ, մեծ է, հայակապ եւ վտանգաւոր: Թատրոնը կապուած չէ, ոչ ալ իրականութեան ներկայացումը, այլ դաստիարակութիւն է եւ գիտակցութեան արթնացում, խորագանում եւ մերկացում, մարդկային եւ քաղաքական պատասխանատուութիւն՝ արուեստ եւ գեղեցկութիւն ըլլալով հանդերձ: Եւ ամիկա՝ ըլլալ յաճախուած կամ ոչ-յաճախուած թատրոն, իր գոյութիւնը կը հիմնէ երեք տիւններու վրայ, — արուեստի մակարդակը՝ մինչեւ ստեղծագործութիւն, մաքուր իրականութեան եւ բնութեան հետ՝ մինչեւ յաղթանակ, բարձրացում մարդուն հետ՝ մինչեւ կատարելագոյնը:

Արդեօք դուրս եկա՝ բացման խօսքի ծիրէն եւ ռաւոյնգական շա՞րք մը սկսայ. ո՛չ, բարեկամներ. որովհետեւ ես՝ իբրեւ կրթութեան եւ գեղարուեստի ճախարար, ինքզինքս հրաւիրեալ մը չեմ նշկատեր այս համագումարին, այլ՝ ամբողջականութիւններէն մէկը եւ անկէ բխած որոշումներու եւ առաջարկներու գործադրումը հետապնդող տարր մը: Եւ այս առիթէն օգտուելով՝ կը հաստատեմ ձեզի իմ այն խոր հաւատքս եւ վճռականութիւնս, թէ Լիբանանի մէջ, մշակութային եւ գեղարուեստական գործը պաշտօնական աւելի շուքի եւ ամբողջական հագածութեան կը կարօտի: Հետեւաբար, եւ կ'աշխատիմ բիւրեղացնել այլազան կարծիքներն ու մտածումները՝ առնելու համար յարմար որոշումը. որպէսզի գայն ներկայացնեմ հանրապետութեան մախազահին եւ կառավարութեան՝ առաջացնելու համար մշակութային գաղափարներ կառոյցներ, որոնք պիտի շահագրգռեն իմացական եւ արուեստի հարցերով՝ իրենց զանազան տարբերութիւններով, որպէսզի ստեղծագործութիւնը, ստեղծագործութեան հայրենիքին մէջ, որք, լէուած եւ ազատ ազգական մը չըլլայ:

Արուեստագէտներ,

Վերջին խօսք, գար կ'ուզեմ ձեզի, ձեր բոլոր եղբայրներուն, բոլոր մարդերուն մէջ գործող արուեստագէտներուն, Լիբանանի ամբողջ տարածքին. «Մենք շատ լացինք, շատ վախեր ապրեցանք եւ շատ անօթութիւն ճանչցանք...: Եւ որովհետեւ մենք կարիք ունենք սիրուի, մեր մանուկները՝ երջանկութեան, իսկ պարմաճախները՝ ժըպիտի: Ձեզի՝ կը դիմենք»:

Կեցցէ՛ք եւ կեցցէ՛ Լիբանան:

Ի. ԽՈՒՐԻ

ՀԱՅ ԳԻՐՔԸ՝ ՃԱՆԱՊԱՐՀ ՀԱՅՈՒՆ

Ամբիլիատի մէջ հիմա տարի առաջ սկսած հայ գիրքի ցուցահանմանը կրկնուեցաւ նաեւ այս տարի. Հոկտեմբերին, Թարգմաթիյ Սուրբերում տօնին զուգահեռ, հոգիներում մէջ կրկնուով մեր մասնամանրում հանգեցաւ աշխուժ ոգեւորութիւն մը: Այդ օրը եւրիւրաւոր գիրքի մտան մեր տուններէն մերս եւ ասիկա ինքնին բան մը կը ծնանակէ, ուղիղ գծով մը կ'արագանգէ այն ոգիին, որ Վրդի ուժը եղաւ ցուցահանողէին, — ստեղծել կեցուցի զօրութեան մը եւտ յարաբերութեամ մէջ մտնելու մար առիթ մը, գիրքին գորութեամ:

Ստորեւ հառուած մը՝ նայմ օրը արտասեմած Գաթեգիկ կարգիլ-կոտի յօսքէն, որ գեղեցկօրէն կը բացայայտէ խորհարգը հայ գիրքին:

Ահա հինգերորդ անգամն է, որ այսպէս կը հաւաքուինք Անթիլիասի մեր այս հողեւոր եւ աղային օճախին մէջ եւ այցելութեան կառ զանք Հայ գիրքին: Հայ գիրքն ու Հայ մարդը իրարմով զիրար աւելի հարազատ եւ մըտերիմ կը զգան, այսպէս իրար տեսնելով, իրարու շունչն զգալով, իրարու հետ զրուցելով:

Այս օրը օրն է Հայ Գիրքին:

Անցեալ չորս տարիներուն, խօսեցանք Հայ Գիրքի մասին, «Հայ Գիրք»-ը՝ Փառքը Հայուն», «Հայ Գիրք»՝ Պատիւն Հայուն», «Հայ Գիրք»՝ Պարտքը Հայուն», «Հայ Գիրք»՝ Տաղմալը Հայուն» բնորոշումներու տակ սեւեռելով մեր մտածումներն ու զգացումները, սպասումներն ու ձգտումները: Այսօր, հինգերորդ այս հանգրտանին, մեր հայեացքները կ'ուզենք ուղղել դէպի Հայ Գիրքը, անոր մէջ տեսնելով ճանապարհը Հայուն գնացքին դէպի իր ապագան — «ՀԱՅ ԳԻՐՔԸ՝ ՃԱՆԱՊԱՐՀ ՀԱՅՈՒՆ»:

✽

Հայ Գիրքը՝ հայ կեանքին մէջ է յայտ եկած ապրումներուն, տեսիլքներուն, տաղնապնդուն, նուաճումներուն, իրագործած արժէքներուն, ձեռք բերուած իմաստութեան առկայացումն է, ներգործական ուժականութեամբ օժտուած եւ ո՛ր՝ շտեմարանային կայունութեամբ յատկանշուած: Գիրքը՝ ժամանակի ոգաւոր, ժաշկնոց, փոշիացնող բնութեանական ուժէն կը փրկէ մարդը, դառնալով անոր յաւերժաշունչ հոգիին մշտանուազ քնարը: Մարդուն անէացող ուղեղին, կազմալուծուող սրտին, քայքայուող կամբին, կմախացող ձեռքին, կարկամող լեզուին ու մարդը լրիւնքին շնորհաստեղծ նըւաճումներուն փրկութիւնն է գիրքը, մարդէն ետք, մարդուն կեանքը երկրի վրայ առկայացնող եւ ներշնչական աղբիւրի վերածող:

Հայ ազգի կեանքին մէջ ալ գիրքը լուսացոյց այն ճանապարհը եղաւ, որուն մէջէն քալեց մեր ժողովուրդը իր սաք ու պաղ օրերուն եւ, մանաւանդ՝ առպամած այն օրերուն, երբ մարդիկ ուղեցին իր կեանքի թելը սուրբով կարել: Փոխարէն, հայ մարդը իր գիրքերով իր կեանքը յաղթանակի վերածեց եւ լիթայանման շարայարուժեամբ սերունդէ սերունդ ոսկի թելի պէս կապեց:

Փնտռեցէ՛ք, փնտռեցէ՛ք երկար ու խոր. ո՞ր կը գտնէք հայ կեանքի ճանապարհը պատմութեան բազմաշաւիղ եւ թնճուկային պողոտաներուն վըրայ:

— Հայ հարստարարներին մէջ. այո՛ :

— Հայ երաժշտութեան մէջ. այո՛ :

— Հայկական փոփոքի մէջ. այո՛ :

Եւ այս բոլորին հետ, բայց բոլորէն աւելի՝ Հայ գիրիմ եւ անոր ծաղկումը եղող Հայ գրականութեան մէջ: Որովհետեւ, պատմականօրէն ճշմարտութեամբ իրողութիւն է, որ դիրքը ամէնէն տոկոսն եւ ճկուն, արտայայտչական այլազանութեամբ ու նրբերանգութեամբ եւ մոռանալիքի ու բազմօրինակութեան բարիքներով օժտուած հայորդակցութեան միջոցն է, ժողովրդային ստեղծագործական թափին ընթացք տուող եւ այդ ընթացքին հոնք դառնալով:

Ո՛ր կը դնէ՞ հայ կեանքին հայկականութիւնը: Ո՛ր կը հանդիպի՞ հայ հողին:

Ձեռագիրներուն մէջ հազարներեան եւ հազար—գունեան:

— Ձեռագիրներէն եւ անոնց ժառանգորդ՝ տիպ ու տառի մարմնացումներէն վերլուծող յաւերժականացող Մեսրոպներով՝ ճշմարտախոսը եւ համարաբարբառ:

Եղիշներուն մէջ՝ դիւցազնաշունչ եւ նախնաձախդիր,
Եղնիկներուն մէջ՝ իմաստարան եւ շնորհագիր,
Խորհնացիներուն մէջ՝ հայրենապաշտ եւ խորիմաստ,
Դաւիթ Անյաղթներուն մէջ՝ ճախրապնաց եւ հոնաբան,
Շիրակացիներուն մէջ՝ տիեզերախնդիր եւ տրամարան,
Նարեկացիներուն մէջ՝ հոգեւոյց եւ ներհայեաց,
Շնորհալիներուն մէջ՝ ազօթմբումնը եւ մեղեդիարարութեւ,
Տաթեւացիներուն մէջ՝ լիաբան եւ ջատագով,
Գուշակներուն մէջ՝ ժողովրդախօս եւ տաղասաց,
Սայաթ—Նովաններուն մէջ՝ կենսանուազ եւ սիրերգակ,
Արսիկաններուն մէջ՝ հայրենախանձ եւ ուսմախօս,
Դուրեաններուն մէջ՝ քնարերգակ եւ սիրավատ,
Պարոնեաններուն մէջ՝ զուարթաբան եւ սրատես,
Բաֆֆիներուն մէջ՝ արթնաշնչորդ եւ մարտունակ,
Ջօհրապետներուն մէջ՝ իրապաշտ եւ ռահազնաց,
Ահարոնեաններուն մէջ՝ հայրենադիւտ եւ ազատաստեղ,
Մեծարեցններուն մէջ՝ մեղմադճոտ եւ հեղաշունչ,
Վարուժաններուն մէջ՝ բազմաթոխ եւ լուսերգակ,
Թէրեաններուն մէջ՝ խորահայեաց եւ կշտադատ,
Օշականներուն մէջ՝ մտամբրիկ եւ յորդաբուխ,
Ջարեաններուն մէջ՝ պայծառակերպ եւ վեհացնող,
Ջարեցններուն մէջ՝ բոցավատ եւ հեղեղազնաց,
Սեւակներուն մէջ՝ խորախորհուրդ եւ նորաշունչ:

Եւ դեռ այնքա՛ն—այնքա՛ն ուրիշներուն մէջ, շիրմէն անդին եւ ասդին, երկնքի մէջ լուսաւորեալ եւ երկրի վրայ դեռ ապրող՝ հորովարժէ՞ք եւ կենսախայտ:

Այո՛, հո՛ւ է հայու հագին, այս անուններուն եւ անոնց հարիւր—հարիւր նմաններուն մէջ՝ այլանուն, բայց համանուն:

Այո՛, ընդունեցէ՛ք, այս անուններով մկրտուած դիրքերուն մէջէն կ'անցնի՝ ճանապարհը հայուն, դարերու հանդրաւանդով եւ դալիքի դեռ անծանօթ հորիզոններով:

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԵԹՈՒՆԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ



ՀՈԳԻՒ ՄԱՐԴԸ...

Համար նոր ուժեր ներշնչելու իմաստով։ Ոչ մէկ կասկած այն մասին, որ այդ բոլորը զգալի չափով, թերեւս ցաւագին համեմատութեամբ մը պիտի պակսէին մեզի, եթէ Աստուած պակաս շնորհներով օժտած ըլլար Ժորժ Մարգիսեանը։

Հետեւեալ մանրամասնութիւնը ամբողջութեամբ կը բացայայտէ անոր վաստակին եւ շարունակականութեան ուժին աղբիւրը։

Իր զեկավարած Համազգայինի «Գոսպար Իփէկեան» Թատերախումբի երիտասարդ անդամներէն մէկը կը պատմէր, որ փորձի տան, դժգոհ՝ ստացուած արդիւնքէն, ատամները կճրտացնելով Ժորժ Մարգիսեան կը պոռայ իրեն.

— Հոգի՛ դիւր բառերուդ մէջ, հոգի՛։ Երիտասարդը, իր կարգին վերջոված, կը պատասխանէ.

— Գուն հոգի կը ձգն՝ս վրաս, որ ես կարենամ հոգի դնել բառերուն մէջ։

Միջադէպին լուրը հաճելի էր։ Որոշ պացինք։

Բայց կը կարծենք, որ ատիկա, զրուարթութենէ աւելի՝ լրջութեան մղող խորք մը ունի։

Հոգի դնել բառերու մէջ, ու հոգի գընելու անկարող անձին հոգի՛ն հանել։

Բեմին համար ու վրայ խառապահանջ, դաժանօրէն բծախնդիր, առօրեային մէջ պարզ մարդ էր Ժորժ Մարգիսեան, մարդամօտ, իր բեմական խառութիւնը մոռցնել տալու չափ բոխ։ Գիտէր հաճելի կապեր հաստատել մեծին ու պղտիկին հետ ու փնտռել կու տար իր ներկայութիւնը՝ զրոյցի ու զուարթախոհութեան մթնոլորտի մը մէջ հեղ մը իրեն հանդիպած բոլոր անձերուն։ Գձուձ ու հաշուախնդիր յարաբերութիւններու նոյկալի կապերէն զերծ անձ՝ ան կ'ապ-

Առպարէզի մը մէջ երկարատեւ ջանք թափած ու համապատասխան արդիւնքներ նուաճած անձերը ապահով ներկայութիւններու խորհրդանիշ կը դառնան յաճախ ու անոնց մեկնութեամբ, ժամու թէ տարաժամու, մինակութեան զգայնութիւն մը կ'առաջացնէ երբեմն ողջ ազգին մէջ, երբեմն շրջանի մը կամ քաղաքի մը մէջ։

Ժորժ Մարգիսեանի մահը եւս նման յուզում մը ստեղծեց՝ ընդհանրապէս Սփիւռքի եւ մասնաւորապէս Լիբանանի մէջ, ուր իր անձնաւորութեամբ ու անձնաւորումներով թատերական ասպարէզին մէկ խորհրդանշանը դարձած ուժ էր ինք, արդիւնք՝ խառնուածքային օժտութեան, յետոյ՝ հաւատքի զօրութեան, հաւատարմութեան ու հետեւողական ջանքի։ Լիբանանի, եւ վերջին տարիներուն նաեւ Սփիւռքի ողջ տարածքին, հայ Թատերական կեանքը կարելի չէ պատկերացնել՝ առանց Ժորժ Մարգիսեանի բազմերես ներդրումներուն՝ խումբ պահելու, Թատերգութիւն բնորոշելու, բեմադրելու, տիպար անձնաւորելու բոլոր տոտմներով, նաեւ. Թատերական հասարակութիւն պատրաստելու եւ ասպարէզին

digitised by

A.R.A.R.®

րէն մեծատունն հով մը վրան, պարզ մարդոց հետ, պարզ մարդու պէս, տարբեր դասակարգի ներկայացուցիչներուն հետ, տարբեր սեղաններու շուրջ, բոլոր պայմաններուն մէջ պահելով իր արժանաւորութիւնը, առաջնորդելով կարծես միմիայն չափաւորականութեան ու ժականութենէն:

Ժորժ Սարգիսեան քանի մը տասնեակ թատերախաղեր բեմադրեց, հայ գրականութենէն հեռու մնալով, վերջիններէն՝ ընդհանրապէս իր թարգմանութեամբ, իւրաքանչիւր՝ երեսունէն քառասուն անգամ Պէյրուսի մէջ: Անոնցմէ ոմանք կրկնուեցան նաեւ Ափրիքի տարբեր կեդրոններուն, համարեա՛ր բոլոր զաղութեանքու բեմերուն, Միջին արեւելեան երկիրներէն մինչեւ Հարաւային ու Հիւսիսային Ամերիկաները, մինչեւ Գանատա: Իրապէս համազգային գործ մը, որ համասփիւռ սէր մը բուրդեց թատրոնի մասին, համասփիւռ խանդավառութիւն մը հողիներուն մէջ, գործօն յիշողութեան մը յաճախակի կրկնեցելով հազարաւոր ու հազարաւոր սրտերուն:

Իր անձնաւորած տիպարներուն մէջ դրած ուժին, նրբութեան, անպակաս արեւոտին շնորհիւ՝ Ժորժ Սարգիսեան ժարդոց մտածումին մէջ զարժած էր այն արեւոտագէտը, առանց որուն պատկերին կարելի չէր այժմ այլ բեմադրութիւն մը դիտել կամ աւարտել ուրիշ թատերադուրեան մը ընթերցումը: Ուրիշները ստույգ չենք գիտեր, բայց մեր երեւակայութեան մէջ կար Ժորժ Սարգիսեան դերասան մը, որ փոխ առ փոխ ու տեւաբար կը խաղար Մարսէլ Փանեոյի «Պղատնիսի գոհը» կամ Բաֆֆի «Ոսկի աքաղաղին Մասիսեանը», իր առաւելագոյն նուաճումները, որոնք ստացան չափանիւնի մը ուժը: Այս երկուքին հմայքը երբեք յանջատուեցան մեզմէ, երբ Փարիզի յիմնադրութեան կը դիտէինք «Կարմիր թիւը» (Le fil rouge) փիւսին բեմադրութիւնը, Ֆրէճոտին կերպարը անձնաւորած Քիւրթ Ճարկընդի խաղարկութեամբ, ու երբ կը կարդայինք Հանրի Մոնթերլանի «Մեռած քաղաքի» (La reine morte): Այն օրերուն մեղի թուացած էր եւ մինչեւ հիմա մեր մէջ կը տիրէ այն տպաւո-

րութիւնը, որ Ժորժ Սարգիսեան Քիւրթ Ճարկընդի ուժնութեամբ կրնար անձնաւորել հաճանքամ աղջիկ մը ոտքի հանող տառապահար Ֆրէճոտի տիպարը, կամ Ֆրանսացի ժամանակից ոեւէ դերասանի չափ կրնար դրսեւորել Մոնթերլանի արքային տաղանդաւորը: «Պղատնիսի գոհը» եւ «Ոսկի աքաղաղի Մասիսեանի տիպարներով հանդէս եկած Ժորժ Սարգիսեանը, Երազի մը ի խնդիր տառապող, ոգեւորուող, իրականութեան մոխիրին բախած վշտահար հոգին, եւ ընդհանրացութեամբ, կոսկածամտութեամբ ու խորամանկութիւններով խոցուած դուրսար անձը:

Այս բոլորին մասին յաճախ խօսք եղած է իրեն հետ: Տրամադրութիւնը բարձր էր եւ որոշած էր խիղախել նման ուրբանի, բայց լիբանանեան տաղանդը խանդարեց մէկն բան ու պատերազմի աւարտին առաջ, մեկնեցաւ կեանքէն, երբ գեո այնքան պէտք ունէր իրեն մեր բեմը:

Ֆրանսական թատերական պատմութեան մէջ արձանագրուած է այն իրողութիւնը, որ Ժերար Ֆիլիպ, Քորնէլլի Վիլյամսը առաւելագոյն հարազատութեամբ ու հնչեղութեամբ անձնաւորած տաղանդաւոր դերասանը, մշակութային նախարարին որոշումով հողին յանձնուեցաւ: Սխալ տարազով: Պատկերը կայ: Յուզիչ է Երեւոյթը: Գերազանց արդիւնքի հասած տաղանդի մը ծիրանափառ նուիրողործումը:

Մենք քաղաքիս արեւմտեան շրջանին մէջ կարգացինք ողբացեալին մահազդը ու թէեւ դուրս եկած էինք պաշարման փեմակէն, բայց միջոցներ պակեցան մեզի յուզարկաւորութեան մասնակցելու ու չենք գիտեր, թէ ինչ տարազով հողին յանձնուեցաւ իր խոնջ մարմինը, յուզարկաւորութեան մասնակցեցանք երեւակայութեամբ ու մեր երեւակայութեան մէջ Ժորժ Սարգիսեան այս աշխարհէն մեկնեցաւ: Ժերար Ֆիլիպին ընծայուած փառքով, իր մարմնաւորած, չնչաւորած առաւելագոյն տիպարին՝ «Ոսկի աքաղաղի Մասիսեանի տիպարով»:

Գ. Ս.

«ԲԱԳԻՆԻ» 1982 թ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Հեղինակ	Խորագիր	Թիի
Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Թ Ո Ւ Թ Ի Ն		
Կ. ՇԱՀԻՆԵԱՆ	Վիճակ սիրոյ	1
Մ. ՀԱՃԵԱՆ	Ամբար հրազեն	1
» »	Երկոյեան անկշռոյթ հրգ	1
Հ. ՅՈՎԻՓԵԱՆ	Մոռացել եմ	1
» »	Այս քովանդակը	1
» »	Փշուր հղաւ	1
Ե. ԱՌԱՔԵԼԵԱՆ	Անտառ	1
Դ. ԹԷՄԻՋԵԱՆ	Շարժում	2
» »	*	10
Փ. ՃԵՐԱՆԵԱՆ	Կեռասնեին	2
» »	*	2
» »	Վերագարձ	5
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Հին լուսանկար	3
» »	Բաղաժայիմ հիւանդանոցի քիւ 508 սենակը	3
» »	Մահ անտառին մէջ	3
Պ. ՀԵՐԵԱՆ	Հմայքի տղան	3
Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ	Իտալացի աղջկայ հրգը	3
» »	Կռումը	3
Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ	Կիլիկիա	3
Ժ. Ս. ՅԱԿՈԲԵԱՆ	Ապրիլեան լույսաթուղթ	5
» » »	Մէկ հնձ մեմֆ	5
» » »	Մեզի հայ կ'ըսեն	5
» » »	Փափաք հայկական	5
» » »	Մեթ կը շինեն	6-9
» » »	Աշխարհ իմանայ	6-9
» » »	Հայ հնձ մեմֆ	6-9
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Դիցայուշ տեղեր	5
» »	Ambiance	12
Վ. ՕՇԱԿԱՆ	Լճակ	5
ԱՐՄԱՆՏ	Դարավերջի տարածումը	10

Հեղինակ	Խորագիր	Թիտ
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Մահուան ժամանակի ամուսնի շշուկներէն,	
	շշուկներէն	11
Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ	Բանաստեղծութիւններ	12
Լ. ԱՐԱԿՈՆ	Էլզայի աչքերը	12
» »	Տաղ Էլզային	12

Ա Ր Զ Ա Կ

Յ. ՕՇԱԿԱՆ	Սահակ Պարզեւեան	1
» »	» »	2
» »	» »	3
» »	» »	5
» »	» »	6-9
» »	» »	10
» »	» »	11
» »	» »	12
Բ. ՔԷՊԱՊՅԱՆ	Զորացած աղիքները, «Թանքիկա» եւ	
	խեղճ խնդուք	1
Զ. ՂՈՒԿԱՍԵԱՆ	Բակունցի ժպիտը	1
Ս. ԱՅՎԱԶԵԱՆ	Տար ճեղգ, կեանք	1
ՆՈՐԱՅԻՐ	Պատմութիւն գրուած քարի վրայ	1
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Վեպկները	2
» »	Յարտը	11
Յ. ԿԱՐԱՊԵՆՑ	Եւ եւս խաղաղութեան զուէր աղաչեսցուք	2
» »	Մեկնում	6-9
Ա. ԱՐՓԻՆԷ	Պոկուած ծառեր	2
Ժ. ԱԹԱՐԵԱՆ	Նոր Տարուայ պատմութիւն	2
Լ. ՄԵԼԻՔԵԱՆ	Սրտիկ յայգեր	2
Ս. ՓԱՆՈՍԵԱՆ	Աւագին վրայ ծագած ծիրանի	3
» »	Աստ կը հանգչի հաւատքը	12
Գ. ԱՃԵՄԵԱՆ	Այապէս եմ քառերը	3
Լ. Զ. ՅԻՒՐՄԷԼԵԱՆ	Ափսոս, միւս կողմի հայերին	4
» »	Թուրքերը կը գրուեն Արարատը,	
	Հայաստան պատկերը	4
» » »	Լիւր օրերը Հայաստանի մէջ	4
Վ. ՊԵՏՐՈՍԵԱՆ	Մօր տունը	5
Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ	Արեանք կանչ	5
ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ	Դատմութեան եւ քերականի արցունքներ	10
Մ. ՊԶԱՔՃԵԱՆ	Լիւնակներով խաղցուած	
	չափաւասի պատմութիւն	10
Ա. ԳԱՐԵԳԻՆԵԱՆ	Գիւտ եւ խաքկանք	11

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
Իվ ՄԻՐԱՆ ԵՒ Հ. ԿԵՐՈՒԼ	Օգտաւ	11
Պ. ՄՆԱՊԵԱՆ	Միջնաբար Բ.	12

Ի Մ Ա Յ Ա Կ Ա Ն Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ

Գ. ՅԱՎՈՐԵԱՆ	Ներսէս Շնորհալին եւ Յրա քերած	
	գրական նորութիւնը	1
Գ. ՏԵՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ	Գրիչ եւ լուսին	1
Ա. ՊԱՏՄԱԳՐԵԱՆ	«Ամենաճ հայոց քանաստեղծը» էջմիածնում	1
Ն. ԱԳԱԼԵԱՆ	Բնութիւնը Համօ Սահեանի պոեզիայում	1
Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ	Բանաստեղծին կոչումը	1
»	«Պակասած ծառերում տարերքը	2
»	Յեղափոխութիւն եւ արուեստ	10
Ն. ԶԱՐԵՈՒՅԵԱՆ	Արդի գրականութեան դիմագիծը եւ տագնապը	1
»	» » » »	6-9
»	» » » »	11
Լ. ՄԿՏՁՁԵԱՆ	Պարոյր Հայկազնը իր ժամանակակիցների ուղարում	1
»	» » » »	2
»	» » » »	3
»	» » » »	5
»	Արդի ուսաստանեան գրականութեան մը քննիչ պարունակութեան մասին	10
Ի. ՄԱԼՅԵՒ	Միջակայ գրականութիւնը եւ իսկութեան չափանիշը	10
»	» » »	11
Մ. Ս. ՀԵՐԿԵԼԵԱՆ	Սարգիս Խաչատուրեան	1
»	Լիբանանահայ քաղաքը այսօր	6-9
Կ. ՇԱՀԻՆԵԱՆ	Պերմ Ջէյթունցեանի «Առածոյ տասներկու օրը»	1
»	Լի Սքրազլըրի եւ «Դերասաններու սքիսիզմ»	5
»	Պատկերակերտումը գրական երկին մէջ	11
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Պեպօ Սիմոնեանի «Մուկն-ծուկն երկունքը»	1
»	Լուսիկ Մելիքեանի «Թեհրան»	2
»	Զարեհ Մելիքեանի «Լեռներ վիշերու մէջ»	6-9
Գ. Տ.	Ժամ-ժազ վարածանի նորագոյն քատերախաղերը	1

ՀԵՂԻՆԱԿ

ԽՈՐԱԳԻՐ

Թ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Թ. Կարապետյանի «Միջնաբերդ»-ը	2
» »	Հարցազրույց Օննիկ Միրմաշյանի հետ	4
» »	«Անգլիական ազդեցությունը Արևմտահայ գրականության վրա 19րդ դարում»	5
» »	Արմեն Դարբանի «Էներ եւ տուր»	6-9
» »	Համաստեղ եւ թռչուններ	11
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Ժ. Աթաբեկյանի «Կենդանի գեղեցիկ է» հատորը	2
» »	Սփիւռքահայ քանդակաչության տա՛ Զ. Կարապետյանի	3
» »	Արմեն Արամյանի «Հոգեհարություն»-ը	10
» »	Մեծ երազներ, արդար պահանջներ	12
Ս. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ- ՏԱՏՈՅԵԱՆ	Գոյարամյանի տա՛ Զ. Կարապետյանի կամ հայկականության հարցը լիբանանահայ նկարչության մեջ	2
» »	Իրապետության մեջ անդին՝ «Նոր-իրապետությունը» հայրենի նկարչության մեջ	5
» »	Արդիականություն, նորարարություն եւ արդիապետություն	11
» »	Տասներորդի՝ իններորդի տարածականություն	12
Շ. ՆԱԶԱՐԵԱՆ	Ռ՝Վ Է «Կոստանդնուպոլիս»-ի հեղինակը	3
Մ. ՅԱԿՈԲԵԱՆ	Միքայել Նալբանդյանի «Երազների աղբյուր» երգի սկզբնաղբյուրի շուրջ	3
Ա. ԳԱՇՏՆՆՑ	«Երբոր քաղաքի դռները շուրջ...»	3
Պ. ՍՆԱԳԵԱՆ	Գրական նախնի	4
» »	«Անգլիական» թվարկումում անգլիական անդին	5
» »	Գ. Գրեյսի «Հայրենի դռները» (Ա. Գրեյ), «Հայրենի» (Բ. Գրեյ)	10
» »	Հոգիի մարդը	12
Ս. ՓԱՆՈՍԵԱՆ	Թ. Օշականի «Համապատկեր Արևմտահայ գրականության» Ը. եւ Թ. հատորները	5
Վ. ՕՇԱԿԱՆ	Ռեյնոլդ Սարգսյան, Երազ	6-9
Շ. ՏԱՍՆԱԳԵՏԵԱՆ	Եղիա, սիրային նամակներ եւ Ներվանա	10
Թ. ՆԱԳՈՒԼԵԱՆ	Յարություն Կալենց եւ Հայաստանի նկարչությունը	10
Բ. ՔԷՊԱԳՃԵԱՆ	Իգիտար Լեւինի եւ Պրոկոպ Շենկովիցի «Հայկական հեղինակներ»-ը	10
Գ. ԱՐԱՋԵԱՆ	Վահագն Դարբան	12
Ա. ԳԱՐԻԲԵԼԵԱՆ	Արդարներու տեսլահար զրազեր	12
ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱՌՈՂԻԿՈՍ	Հայ գիրքը՝ համապարհ հայուն	12
Ի. ԽՈՒՐԻ	Բացման խոսք	12

Հեղինակ Խորագիր Թիտ

Գ Ե Ղ Ա Ր Ո Ւ Ե Ս Տ

Ջ. Փիլիպեան	Կողմի նկար	1-12
Վ. Ալեքսանդրեան	Կուսակցներ	3
Տ. Աճխեան	«Մեծաւոր քննութեան»	5

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ն Ո Թ Ե Ր

«Անտիկ շրջանից մինչեւ Հ. դար»	2
Մեծարանք՝ հայ գրագետներու	2
Ճանչնալու համոյքը	3
Գրագետ հիւրը եւ գրական լուրեր	5
Անփոխարինելի	6-9
Նապէլեան մրցանակակիր Կապրիել Կարսիա Մարէէզ	11

Մ Շ Ա Կ Ո Ւ Թ Ա Ց Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Թիտ՝ 1, 2, 3, 5, 6-9, 10

ՎԱՐՎԵՆԻ ԳԱԶՈՐԴ ՏԱՐՈՒԱՆ ԹԻԻԵՐՈՎ

ՎԱՐՎԵՆ ԾՈՒՇԱՆԵԱՆ

Նշեցրա՞յա՞տ Վարվեն Ծուշանեանի ծննդեան ութսուն եւ մահուան 40ամեակին առիթով, ընթերցողին խոստացած էինք «Բագին»-ի Յունիտի թիւը ամբողջութեամբ նուիրել իր կեանքին ու զբաղանքներին, բայց նոյն ամսոյն պայթած զէպքին հետեւանքով հնարաւոր չեղաւ յարգել տրուած խոստումը: Այդ պարտքը պիտի կատարենք յաջորդիւ, այսինքն՝ 1983 Յունուարին: Ոչ մէկ ճիշդ խնայուած է այս ուղղութեամբ եւ լիայութեամբ, որ Վարվեն Ծուշանեանի բացառիկը եւս պիտի ըլլայ խնամուած ու ճշիւ բովանդակութեամբ հրատարակութիւն մը:

ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԷՆ

Յառաջիկայ Փետրուարի համարով «Բագին»-ի մէջ պիտի սկըսինք հրատարակել Ա. Խաչիկեանի անտիպ նամակներէն վերին տասնիցանի շահեկան շարք մը, գրուած քսանական թուականներուն, թիւով՝ երեսունութ հատ, որոնց յառաջաբանը գրած ու ծանօթագրութիւնը կատարած է մեր լայն հասարակութեան բիշ ծանօթ, այլ մերիւն մտաւորական Մարտիրոս Մինասեան:

Յ. ՕՇԱԿԱՆԻ «ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵԻԵԱՆ» ՎԷՊԸ

«Սահակ Պարգեւեան» վէպը, որուն առաջին երկու գլուխները լոյս տեսան «Բագին»-ի 1982 տարեշրջանի աւթ թիւերուն մէջ, պիտի շարունակուի մանր յառաջիկայ տարւոյն ընթացքին, սկսեալ Փետրուարի թիւէն: Իր մեծ շահեկանութեան առնթեր՝ մանր հետաքրքրութեամբ անող «Սահակ Պարգեւեան»ը վստահաբար մեծ քաւարաւութիւն պիտի տայ «իբրա» գրականութեան հետամուտ ընթերցողներուն:

ՁՆՌԱԳԻՐՆԵՐ

Լիբանանի վերջին դէպքերուն հետեւանքով, այս տարի երեք թիւ պակաս լոյս տեսաւ «Բագին» եւ մայն պատճառով չկրցանք մեր աշխատակիցներուն կարգ մը գրութիւններուն տեղ տալ: Անոնք որոնք ալ լոյս պիտի տեսնեն յաջորդող ամիսներուն:



ԼԻԲԱՆԱՆ

Հատաժամանակ 12 Լ. Ո.
Տարեկան բաժնեգիր 125 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատաժամանակ 15 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգիր 40 Ամերիկեան տոլար

بَاكِينَ
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
المدير المسؤول
السيد ارين كارنيك قزائجيان
PAKINE
REVUE MENSUELLE
LITERAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN
•
ԲԱԿԻՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՏՈՒԵՍԻ
Խմբագիր
ԳՕՂՈՍ ՍՆԱԳԵԱՆ
Խմբագրության անդամներ
ՅԱՐՈՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ
ԱՄՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
Վարչակազմի պատասխանատու
ՎԱՇԷ ԲՐՈՒՏԵԱՆ
B. P. 11 - 8404 - Beyrouth - LIBAN
Tel. 296898